



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 117 2020

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Արսլանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեվանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999 թ.) և դոկտորական (2002 թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 23.06.2020 թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 6 տպ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Տիր» հրատարակչության տպարանում
Երևան, Ա. Սիկոյան 2/2

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նելլի Աշրաֆյան Տոժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն պայմանները.....	3
Овсен Кочарян Право на выбор смерти в прецедентном праве ЕСПЧ.....	9
Հոփսիմե Խաչատրյան Անչափահասի տարիքային սահմանները հանցավորության կանխարգելման օբյեկտի համատեքստում.....	15

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դավիթ Զիֆիմյան Հանցավոր ենթամշակույթը որպես իրավապահպան մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու օբյեկտիվ գործոն.....	19
---	----

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Ղամբարյան, Թամարա Շաքարյան Դատախազության և քննչական մարմինների փոփոխությունների հայեցակարգը արդի սահմանադրական բարեփոխումների համատեքստում.....	27
Սարգիս Մնացականյան Օրենսդիր իշխանության մարմինը պետության սահմանադրական անվտանգության ապահովման մեխանիզմում.....	41

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սյուզաննա Վարդանյան Հայտարարագրման դերը և նշանակությունը մաքսային իրավահարաբերություններում.....	46
--	----

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արման Հովհաննիսյան Իրավունքի և բարոյականության որակական-արժեքային հատկանիշները.....	51
Աննա Հակոբյան Դատական նախադեպի իրավաբանական բնույթը, առանձնահատկությունները և դրական կողմերը տարբեր իրավական համակարգերում.....	57
Սամվել Բարսեղյան Պետությունը որպես սոցիալական արժեհամակարգ (տեսական վերլուծություն).....	63

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լիլիթ Պետրոսյան «Ex-Officio» և մրցակցության սկզբունքների հարաբերակցությունը վարչական դատավարությունում.....	69
---	----

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ռոմելա Մանուկյան Օտարերկրյա ռազմական բազայի անձնակազմի նկատմամբ ուղարկող և հյուրընկալող պետությունների քրեական իրավագործության բաշխման հիմնահարցը ժամանակակից միջազգային իրավունքի ներքո.....	76
---	----

ՄԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts.....	83
--	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները.....	96
---	----

ՆԵԼԼԻ ԱՇՐԱՖՅԱԼ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի հայցորդ

**ՏՈՒԺՈՂԻ ՇԵՏ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՈՒԹՅԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՅ՝ ԱՉԱՏԵԼՈՒ
ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Ընդունված է քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը բաժանել ընդհանուրի և առանձնահատուկի: Ընդհանուրն այն հիմքերն են, որոնք կիրառելի են քրեական պատասխանատվությունից ազատելու բոլոր տեսակների դեպքում: Ըստ էության, դրանք այն հանգամանքներն են, որոնք ընկած են քրեական պատասխանատվությունից ազատելուն վերաբերող բոլոր նորմերի հիմքում: Ընդհանուր հիմքերն են եղել դրանք ընդունելու և քրեական օրենսդրության համակարգ ներմուծելու պատճառը: Այդ հիմքերը երկուսն են՝ *մարդասիրությունը* և *քրեական պատիժը տնտեսելը*: Մարդասիրությունը ելնում է այն իրողությունից, որ մարդն իր իրավունքներով, ազատություններով ու շահերով վեր է ամեն ինչից: Նա պետք է գտնվի քրեական դատավարության կենտրոնում, այլ ոչ թե միջոց լինի քրեական դատավարությունում: Տվյալ դեպքում մարդասիրությունը սոցիալական զարգացման՝ համապետական շահերի արտահայտություն է, որը համապատասխանում է համաշխարհային միտումներին: Այսօր քաղաքակիրթ հասարակության և պետության ցուցիչ է մարդասիրությունը, դրա իրացումը պետական ապարատի՝ այդ թվում և իրավապահ մարմինների և արդարադատության մարմինների գործունեության ընթացքում: Քրեական պատիժը տնտեսելը ենթադրում է, որ այն չափից դուրս շատ կիրառելը հանգեցնում է ավելորդ նյութական ծախսերի, որոնք կարող են լինել չարդարացված: Դրանց արդարացված չլինելը պայմանավորված է այն հանգամանքով, որ չափից շատ պատիժ կիրառելը հանգեցնում է ակնկալվածի՝ միանգամայն հակառակ արդյունքին: Այսպես, ակներև է, որ եթե պատիժն իր խստությամբ

գերազանցում է կատարված հանցագործության հետևանքները, ապա դա կանխարգելիչ արդյունքի փոխարեն կարող է ավելի չարացնել այն անձին, որի նկատմամբ կիրառվում է հարկադրանքը: Դրանից զատ, պետությունը կկրի տնտեսական մեծ կորուստներ ինչպես նման ճնշումների, այնպես էլ նոր հանցագործությունների բացահայտման և քննության վրա կատարվող ծախսերի պատճառով, որոնք այդ հանցագործությունների անարդյունավետ կանխարգելման հետևանք են:

Գոյություն ունեն նաև քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ հիմքեր: Դրանք հատուկ են, որովհետև բնութագրում են քրեական պատասխանատվությունից ազատելու կոնկրետ տեսակ: Հատուկ հիմքերը միանգամայն որոշակի հանգամանքներ են, որոնց առկայությունը հնարավորություն է տալիս ազատելու հանցանք գործած անձին քրեական պատասխանատվությունից: Այսպես, ինչպես արդեն նշվել է, համաձայն ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն են *պարճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը*: Միայն այս հիմքերի առկայությունն է թույլ տալիս քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը քննել ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի շրջանակում: Այսինքն, հատուկ որակվողն այն հիմքերն են, որոնք նշված են քրեական օրենքի համապատասխան նորմում, որոնց առկայությունը թույլ է տալիս լուծել հանցանք գործած համապատասխան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը: Քրեական պատասխանատվությունից ազատելու առնչությամբ «հիմք» հասկացությունից բացի, օգտագործվում է նաև «պայման» հասկացությունը: Այսինքն,

1. Տե՛ս Соловьева Н. А., Шинкарук В. М. Примирительные процедуры как условие освобождения от уголовной ответственности в отечественном законодательстве // Актуальные проблемы уголовного процесса и криминалистики: Материалы IV Международной научно-практической интернет-конференции, Россия, г. Волгоград, 23 мая 2013 г. - Волгоград: Изд-во ВолГУ, 2013, էջ 274-280:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

բացի հիմքից, ենթադրվում է, որ համապատասխան հանգամանքների առկայությունը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվությունից ազատման միայն այն դեպքում, երբ առկա լինեն դրա համար համապատասխան պայմաններ: Քրեական պատասխանատվությունից ազատելու համար, ըստ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի, նման պայման է կատարված հանցագործության՝ *ոչ մեծ ծանրության լինելը*: Եթե առկա չլինի այս պայմանը, ապա համապատասխանաբար ազատում չի կարող լինել: Ընդ որում, հարկ է նշել նաև, որ հիմքերը պայմաններից տարանջատելը բավականին հարաբերական է, ուստի այս դեպքում միակարծություն չկա՝ առավել ևս, երբ գործնականում ինչպես *հիմքի բացակայությունը*, այնպես էլ համապատասխան *պայմանի բացակայությունը* հանգեցնում է համապատասխան նորմի՝ տվյալ դեպքում ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի նորմի կիրառման անհնարինությունը: Այդուհանդերձ, թերևս ավելի ճիշտ կլինի, որ *հանցագործության տեսակը* համարվի պայման, քանի որ միայն ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքում իրավաբանական նշանակություն կարող են ունենալ վերոնշյալ հիմքերը՝ *հաշտեցումը, պարճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը*²: Ընդ որում, միանգամայն ակնհայտ է փոխկապվածությունը քրեական պատասխանատվությունից ազատելու նշյալ հիմքերի և պայմանի միջև: Այդ հիմքերը իրավաբանական փաստի ուժ կունենան միայն վերոնշյալ պայմանի առկայության դեպքում: Թեև պետք է նշել նաև, որ քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանները չեն համապատասխանում այն խնդրի ավանդական ընկալմանը, թե ինչ իմաստով է օգտագործվում «պայման» եզրույթը³: Այսպես, այդ եզրույթը, որպես կանոն, կիրառվում է այն հանգամանքների վերաբերյալ, որոնք առանցքային չեն, բայց որոնք նպաստում են այն հանգամանքները իրացնելուն, որոնք հիմք են դարձել համապատասխան որոշում ընդունելու համար⁴: Այս առումով հանգամանքները, որոնք կազմում են պայմաններ, ի հայտ են գալիս հիմքեր կազմող հանգամանքներից ավելի ուշ: Իսկ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատելու պարագայում պայմանները փաստացի նախորդում են այն հանգամանքների առաջացմանը, որոնք հիմք են դառնում՝ քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Իսկ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատելու համար հիմքերը ոչ թե պարզապես միանգամայն որոշակի գործողություններ են, որոնցում մասնակիցներն օժտված են իրավունքներով և դրանց համապատասխանող պարտականություններով, այլ իրավաբանական փաստ են, քանի որ դրանցից է կախված՝ կլինեն, թե՞ ոչ որոշակի ակնկալվող հետևանքներ: Այսպես, հաշտեցումը իրավաբանական փաստ է, որը գոյացել է կողմերի միանգամայն որոշակի գործողությունների արդյունքում և ազդում է քրեական պատասխանատվությունից ազատելու վրա⁵: Ընդ որում, ինչպես երևում է ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածից, նշյալ ակտը հիմնականն է, քանի որ այն առկա է ոչ միայն տվյալ հոդվածի դիսպոզիցիայում, այլև դրա անվանման մեջ: Դրա առաջնայնությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մյուս հիմքը, ըստ էության, օժանդակ բնույթի է: Չէ՞ որ միանգամայն պարզ է, որ պատճառված վնասը հատուցելն ու հարթելը իրականացվում են հանուն հաշտեցման: Թեև դրանք պետք է հաշվի առնվեն կողմերի հաշտեցման հետ մեկտեղ: Ակնհայտ է, որ օրենսդիրը, սահմանելով գլխավոր հիմքը, գլխավոր իրավաբանական փաստը, որի հետ կապում է քրեական պատասխանատվությունից ազատելը, ձգտում է նաև վերահսկել հաշտության հասնելու ընթացքը: Նա ուզում է, որ հաշտեցումը լինի ոչ ձևական, ոչ միայն խոսքերով, այլև իրական, հանցանք գործած անձի ինքնավերափոխման աշխատանքի արդյունքով: Ուստի, այնպիսի

2. Տե՛ս **Мокроусов О. В.** Условия освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Современное состояние и проблемы уголовного и уголовно-процессуального права, юридической психологии. Секция «Уголовное право»: материалы Международной научно-практической конференции, Россия, г. Волгоград, 13-14 декабря 2012 г. Волгоград. Изд-во ВолГУ. 2012, էջ 256-259:
 3. Տե՛ս **Сидоренко Э.** Условия освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Уголовное право. - М.: АНО «Юридические программы», 2011, № 3, էջ 49-57:
 4. Տե՛ս **Калугин А. Г.** К вопросу об условиях освобождения от уголовной ответственности // Актуальные проблемы борьбы с преступлениями и иными правонарушениями. Материалы Третьей международной научно-практической конференции, 14 апреля 2005 г. - Барнаул: Изд-во Барнаул. юрид. ин-та МВД России, 2005, էջ 62:
 5. Տե՛ս **Бриллиантов А. В.** Примирение с потерпевшим как основание освобождения от уголовной ответственности // Российский криминологический взгляд. - М.: ООО «Российский криминологический взгляд», 2014, № 1, էջ 309-316:

գործողությունները, որոնցից են պատճառված վնասը հատուցելը և այլ կերպ հարթելը, դիտարկվում են որպես օբյեկտիվ աշխարհում այն հոգեկան աշխատանքի արտացոլումը, որը կատարում է նման անձը: Այդպիսի գործողությունները համարվում են վերոնշյալ անձի՝ ուղղվելու արտահայտություն: Ընդ որում, անկասկած է, որ պատճառված վնասը հատուցելն ու հարթելը ոչ միայն գործողություններ են, այլև միանգամայն որոշակի արդյունք, ինչը իրավաբանական փաստ է, որն ազդում է նշյալ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում ընդունելու վրա: ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը դասելով իրավաբանական փաստերի շարքը՝ հարկ է նշել, որ դրանք իրավաբանական փաստ են համարվում ոչ թե որպես կատարված գործողությունների համակարգ, այլ որպես իրավիճակ, որն առաջացել է նշյալ գործողությունները կատարելու հետևանքով: Այսինքն, կարևորը ձեռք բերված արդյունքն է՝ հաշտեցումը և պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը: Հենց այդ արդյունքը, որը դրսևորվում է փոփոխված իրադրությունում, դառնում է այն իրավաբանական փաստը, որը հաշվի է առնվում, ուստի և ազդում է ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի ուժով քրեական պատասխանատվությունից ազատում կիրառելու վրա: Ուշագրավ է, որ Ռուսաստանի քրեական օրենսդրությունում հաշտեցումը դիտարկվում է որպես տեղի ունեցած փոփոխությունների մի ամբողջ համակարգ, որը պետք է հանգեցնի միանգամայն որոշակի հետևանքների՝ քրեական պատասխանատվությունից ազատում կիրառելու մասին հարցի լուծմանը: ՌԴ գերագույն դատարանի պլենումի՝ 27.06.2013 № 19 որոշմամբ՝ «Դատարանների կողմից քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու կարգը կանոնակարգող օրենսդրության կիրառումը» պարզաբանում է, որ հաշտեցման կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ «տուժողի ազատ կամահայտությունը, հանցանք գործած անձի՝ հասարակական վտանգավորության աստիճանի փոփոխությունը տուժողի հետ հաշտվելուց և վնասը հարթելուց հետո, հանցավորի անձնավորությունը, պատիժը մեղմող և ծանրացնող հանգամանքները»: Այս ամենից բխում է, որ հաշտեցումը ոչ միայն հիմք է, այլև միանգամայն որոշակի իրավաբանական փաստ, որի արտահայտությունը հետքրեական իրադրության փոփոխու-

թյուն է, ինչը վկայում է, որ հասարակության և կոնկրետ անձանց համար վտանգը վերացել է: Դա արտացոլում է նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունում հաշտեցման հիմքերի էությունը:

Այս առումով հարց է ծագում, թե որպես ինչ պետք է դիտարկել ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի կիրառման՝ վերոնշյալ հիմքը: Կարելի է այն դիտարկել իբրև իրավաբանական փաստ, թե՛ դա բոլորովին այլ բան է: Ըստ ամենայնի, հանցագործության այն տեսակը, որի նկատմամբ կարելի է կիրառել քրեական պատասխանատվությունից ազատում, հնարավոր չէ դիտարկել որպես իրավաբանական փաստ: Դա համապատասխան քրեական գործի՝ որակական ցուցիչ է, որի նկատմամբ համապատասխան հիմքերի առկայության դեպքում հնարավոր է կիրառել քրեական պատասխանատվությունից ազատում: Վերոնշյալ պայմանը որոշարկում է այն քրեական գործերի չափորոշիչները, որոնց նկատմամբ կարելի է կիրառել քրեական պատասխանատվությունից ազատում: Այն հստակեցնում է սահմանները, որոնց շրջանակներում կարող է կիրառվել ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելը: Խնդրո առարկան չի կարելի դիտարկել որպես իրավաբանական փաստ, քանի որ այստեղ նշված չէ այն որոշակի իրադրությունը, որի հետ քրեական օրենսդրությունը կապում է իրավական հետևանքների առաջացումը քրեական պատասխանատվությունից ազատելու տեսքով: Նշյալ պայմանը իրավաբանական չափորոշիչ է քրեական պատասխանատվությունից ազատելու հարցում՝ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով հիմքերի կիրառման սահմանների առումով: Նշանակալին այստեղ այն է, որ նշյալ պայմանը հստակեցնում է սահմանները, որոնցում կարող են կիրառվել քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը. այսինքն, դրանք կարող են կիրառվել միայն ոչ մեծ ծանրության հանցանք գործած անձանց նկատմամբ: Այստեղ տեղին է ուշադրություն դարձնել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծին, որի 87-րդ հոդվածը քրեական պատասխանատվությունից ազատում կիրառելու պայմաններ սահմանել է ոչ միայն ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձանց համար, այլև միջին ծանրության հանցագործություն կատարած անձանց համար: Այսինքն, Նախագիծն ընդարձակել է քրեական պատասխանատվությունից ազատելու սահմանները, որոնցում կարելի էր կիրառել տուժողի հետ հաշտվելու կապակցու-

թյամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը: Նշյալ հանցագործությունների՝ հասարակական վտանգավորության աստիճանը լիովին կարող է թույլ տալ լուծել նման հանցագործությունների հետևվանքով առաջացած վիճելի հարցերը, այդ դեպքում վեճի կողմերն ինքնուրույն պետք է որոնեն փոխզիջումներ և վերականգնեն իրենց խախտված իրավունքները: Պետությունը պետք է ավելի շատ վստահի իր քաղաքացիներին կատարված հանցագործության հետևանքով խախտված արդարությունը վերականգնելու հարցում: Պետք է նշել, որ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում նախատեսվածը սահմանափակում է հաշտեցման ինստիտուտի կիրառման հանարավորությունները, տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմքերը, միջին ծանրության հանցագործությունների դեպքում:

Առանձնահատուկ պետք է նշել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում բացի վերը նշված պայմանից, որի կատարման դեպքում կարող են կիրառվել քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը, նշում է ևս մեկը՝ հանցագործության առաջին անգամ կատարված լինելը: ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում նման հիմք չկա: Կարծում ենք, որ Նախագծի հեղինակները ճիշտ կլինեն, եթե այս պայմանը ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձանց նկատմամբ չկիրառեն: Միևնույն ժամանակ միջին ծանրության հանցագործություն կատարած անձանց դեպքում, կարծում ենք, որ նշված պայմանը պետք է որպես լրացուցիչ հանգամանք նշել՝ շեշտելով, որ այդ հանցագործությունը պետք է կատարված լինի առաջին անգամ: Դա կարևոր է տարբերակման համար, ըստ որի, անշուշտ, չի կարելի ստեղծել միանման պայմաններ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություն կատարած անձանց համար: Առավել ևս, որ ակնհայտորեն կատարված հանցագործության՝ հասարակական վտանգավորության աստիճանը պետք է ազդի դրա կրկնելիության վրա որպես լրացուցիչ պայման, որը կիրառվում է քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս: Այդ առումով հարկավոր է փոփոխել ՀՀ ՔՕ-ի Նախագծի 78-րդ հոդվածը՝ սահմանելով, որ քրեական պատասխանատվությունից ազատում կարող է կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնք առաջին անգամ են կատարել միջին ծանրության հանցագործություն: Այդպիսի լրացումը լիովին կհամապատասխանի քրեական օրենսդրության հու-

մանիզացման սկզբունքին: Դրա հետ մեկտեղ կապահովվի տարբերակվածությունը քրեական պատասխանատվությունից ազատման հարցը լուծելու մոտեցման մեջ:

Պետք է ուշադրություն դարձնել նաև այն խնդրին, որ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում հիմքերի և նշյալ պայմանի առկայությունը քրեական պատասխանատվությունից ազատելու համար բնավ չի նշանակում համապատասխան որոշման պարտադիր լինելը: Հիմքերի և նշյալ պայմանի առկայությունը լոկ հնարավոր է դարձնում լուծել հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը: Տվյալ հարցը մնում է դրա համար լիազորված համապատասխան պաշտոնատար անձի հայեցողությանը: Վերոնշյալ նորմից չի հասկացվում, թե ինչը կարող է ազդել տվյալ անձի հայեցողության վրա: Որևէ բացատրություն այս մասին չկա: Օրենսդիրն այդպիսով ակնհայտորեն նկատի ունի ինչ-որ պայման, որի մասին դրանով հանդերձ նա չի հայտնում: Այս առումով վստահաբար կարող ենք նշել ևս մեկ պայմանի առկայության մասին, որը նշված չէ գործող քրեական օրենսդրությունում, բայց որը նշանակություն ունի քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս: Քրեական դատավարությունում առաջադրվող պահանջներից մեկն այն է, որ ցանկացած որոշում պետք է պարտադիր հիմնված լինի իրականում գոյություն ունեցող հիմքերի վրա, որոնք նշված են օրենքում: Դա նշանակում է, որ քրեական դատավարության ընթացքում անհրաժեշտ է ոչ միայն պարզապես հաշվի առնել համապատասխան հիմքերի առկայությունը, այլև ստուգել, թե իրականում դրանք գոյություն ունե՞ն, ինչից ելնելով էլ կարող են հաշվի առնվել: Նման մոտեցումն օրինաչափ է քրեական դատավարության համար ցանկացած դատավարական որոշում ընդունելիս: Օրինակ՝ քրեական գործ հարուցելիս քննիչը չպետք է հիմնվի լոկ հանցագործության մասին հաղորդման վրա, այլ պետք է ստուգի դա և միայն դրա հիման վրա հետևություն անի համապատասխան հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ, ինչը կհանգեցնի քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուն: Նույն կերպ է լուծվում նաև այլ դատավարական գործողություններ իրականացնելու մասին որոշման հարցը, երբ անհրաժեշտ է ստուգել այս կամ այն տեղեկությունը կամ տեղեկատվությունը, որպեսզի քրեական արդարադատության համար նշանակություն ունեցող եզրակացություններ արվեն: Կարծում

ենք՝ նշյալ մեխանիզմը կարող է գործել ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքում: Հաշտեցման առկայությունը հարկավոր է պարզել միայն դրա կայացման մասին տեղեկությունները բավարար չեն: Նույնը վերաբերում է ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատելու մյուս հիմքին: Միայն հանցավորի և տուժողի կողմից այդ հանգամանքների առկայությունը արձանագրելը բավարար չէ: Պետության ու հասարակության համար կարևոր է ոչ թե ամբողջ ընթացակարգի ձևական կողմը, որը վերջնարդյունքում պետք է երաշխավորի հետագայում նոր հանցագործություններ չկատարելը, այլև դրա փաստացի, իրական լինելը: Այս առումով համապատասխան լիազորված անձը պետք է ստուգի այն փաստը, որ իսկապես վնասը հատուցվել կամ այլ կերպ հարթվել է և դրա հիման վրա ձեռք է բերվել հաշտություն՝ առավել ևս, երբ հանցանք գործած անձի և տուժողի հայտարարությունները նշյալ հանգամանքների առկայության վերաբերյալ ոչ միշտ են նշանակում, որ դա տեղի է ունեցել իրականում: Որոշ դեպքերում առկա է հարկադրանք տուժողի նկատմամբ հանցանք գործած անձի կողմից, որպեսզի տուժողը հաստատի հաշտության կայացումը, թեև իրականում հաշտություն ձեռք չի բերվել: Նույն պատկերն է նաև այլ հանգամանքների դեպքում, որոնք հանդես են գալիս որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքեր: Հետևաբար, ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի նորմը կիրառելու՝ ևս մեկ պայման է հանգամանքները հաստատելը, որոնք հիմք են ծառայում տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Անհրաժեշտ է հաստատել, որ նշյալ հանգամանքներն իրականում առկա են և հաշտեցումն անկեղծ է, տուժողի և հանցավորի միջև ձեռք բերված փոխզիջումը՝ արտացոլող: Դա այն պայմանն է, որի մասին ոչինչ ասված չէ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում, բայց որը հաշվի է առնվում տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում ընդունելիս:

Այդուհանդերձ, ինչպես արդեն նշեցինք, տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին հարցը լուծելու համար կարևոր է հիմքերը պարզելը: Ընդ որում, ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում նշված երկու հիմքերն էլ կարևոր են: Դրանք երկուսն էլ իրավակիրառ պրակտիկայում հարցեր են առաջացնում: Այսպես, եթե առանձնապես լուրջ հարցեր չի առաջաց-

նում այն հարցը, թե ինչ հասկանալ պատճառված վնասի հատուցում ասելով, ապա այնքան էլ հասկանալի չէ, թե ինչ է նշանակում հանցագործությամբ պատճառված վնասը հարթելը՝ առավել ևս, երբ վնաս ասելով հասկացվում է ոչ միայն նյութական և ֆիզիկական, այլև բարոյական վնասը, որի չափը որոշելը բավականին սուբյեկտիվ գործ է: Ակնհայտ է, որ պատճառված վնասը կարող է հատուցվել մեղավոր անձի գործողությունների արդյունքում, որոնցով նա կվերականգնի հանցագործությամբ վնասվածը կամ ոչնչացվածը՝ ինչպես նաև պատճառված վնասին համարժեք գումար տրամադրելով: Շատ ավելի բարդ հարց է բարոյական վնասը: Այն հարթելու համար բնավ ոչ միշտ է բավարար տուժողին որոշակի գումարով հատուցելը: Այդպիսի դեպքերում կարևոր են նաև այլ գործողություններ, որոնք պետք է կատարվեն: Դրանց շարքում են ներողություն հայցելը, ինչպես նաև այլ գործողություններ, որոնք կարող են վերականգնել տուժողի հոգեկան հանգստությունը: Թե ինչ գործողություններ են անհրաժեշտ պատճառված վնասը հարթելու համար, կոնկրետ մեղավոր անձն ու տուժողն իրենք պետք է որոշեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Գլխավորն այստեղ տուժողի բավարարված լինելն է նշյալ գործողություններից և կատարված հանցագործության հետևանքով կորցրած հոգեկան հանգստությունը վերականգնելը: Վերոնշյալ գործողությունների ցանկը մեծապես կախված է կատարված հանցագործության առանձնահատկություններից, կատարված հանցագործությունից հետո ստեղծված իրադրությունից, տուժողի անձնավորությունից, նրա ապրած հոգեկան տառապանքներից: Հանցագործությամբ պատճառված վնասը հարթելու ուղղությամբ մեղավոր անձի կատարած գործողությունների ցանկն ու գնահատականը մեծ չափով կախված է տուժողից: Այս առումով կատարված գործողությունների որակը պարզելու հիմնական չափանիշը տուժողն է: Նա է որոշում նաև նշյալ գործողությունների բավարար լինելը: Ընդ որում, տուժողը հանցավոր անձի հետ փոխզիջում փնտրելու գործընթացում սահմանում է այն գործողությունների ցանկը, որոնք կարող են բավարարել իրեն և դրանով իսկ հարթել իրեն պատճառված վնասը: Ինչպես տեսնում ենք, քրեական պատասխանատվությունից ազատելու տվյալ հիմքը այնքան էլ պարզ ու հասարակ չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից և հատուկ ուշադրություն է պահանջում, քանի որ դրա համար կարևոր են ոչ միայն օբյեկտիվ քանակական ցուցանիշները,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

այլև սուբյեկտիվ չափանիշները, որոնք սահմանում է տուժողը:

Բայցևայնպես ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդված կիրառելու հիմքերի շարքում առանցքային տեղը գրավում է հաշտեցումը: Նշյալ նորմն ինքնին իր վրա է կենտրոնացնում ուշադրությունը, քանի որ անվանման մեջ գործածվում է «հաշտեցում» եզրույթը: Հաշտեցումը հանցագործության հետևանքով առաջացած կոնֆլիկտը լուծելն է՝ փոխզիջում գտնելով հանցավոր անձի և տուժողի միջև: Ընդ որում, հաշտեցումը բնավ չի նշանակում պատճառված վնասի հատուցում կամ հարթում: Իրոք, մեծ մասամբ հենց պատճառված վնասը հատուցելով կամ հարթելով է ձեռք բերվում հաշտությունը, սակայն հաշտության կարելի է հասնել նաև առանց այդ գործողությունների: Ելնելով դրանից՝ հարկ չկա վնասը հատուցելու և հարթելու հասկացությունը ներառել «հաշտեցում» հասկացության մեջ: Հաշտեցումը ընթացակարգ է և դրա շնորհիվ ձեռք բերվող արդյունք, որը իրավաբանական փաստ է և հաշվի է առնվում քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս: Բավականին դժվար է խոսել գործողությունների համակարգի մասին, որը կարող է կիրառվել հաշտեցման ընթացակարգում, քանի որ դա մեծապես կախված է կատարված հանցագործության բնույթից ու առանձնահատկություններից, ինչպես նաև տուժողի անձնավորությունից: Ուստի, հաշտեցման ընթացակարգը միշտ անհատական է: Այս առումով պետք է ճիշտ համարել այն փաստը, որ ՀՀ ՔՕ-ի Նախագծի 87-րդ հոդվածում չի նշվում *պարճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու մասին*, այսինքն այն գործողությունները,

որոնք կարող են և պետք է հանգեցնեն հաշտության: Բայց և հարկավոր է հատուկ ընդգծել այն պահանջները, որոնց պետք է համապատասխանի տվյալ ընթացակարգը: Դրանք են կամավորությունը, գիտակցվածությունը, փոխադարձությունը, թույլատրելիությունը, պարտադիրությունը:

Կամավորության իմաստն այն է, որ ոչ ոք (հատկապես պետության պաշտոնատար անձանցից որևէ մեկը) չի կարող հարկադրել հանցանք գործած անձին և տուժողին հաշտվելու: Դրան նրանք պետք է հասնեն ինքնակամ, սեփական ցանկությամբ, ազատ կամահայտությամբ, ինչպես նաև դրա համար խթան պետք է դառնա քրեական օրենսդրությունը: Ուշագրավ է, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի Նախագծի 87-րդ հոդվածում ուղղակի ամրագրված է *ազատ կամահայտությունը* որպես հաշտեցման համար պահանջ:

Գիտակցվածության էությունն այն է, որ հանցավոր անձը և տուժողը պետք է գիտակցեն հաշտության հասնելու իրավական հետևանքները:

Փոխադարձությունը ենթադրում է, որ հաշտեցման կարելի է հասնել միայն հանցագործության հետևանքով առաջացած կոնֆլիկտի երկու կողմերի փոխզիջման հիման վրա:

Թույլատրելիությունն այն է, որ հաշտեցման պետք է հասնեն միայն ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում նշված անձինք: Այլ անձինք կարող են միայն օգնել այդ գործընթացին:

Պարտադիրությունը նշանակում է, որ հաշտված անձինք պարտավոր են ընդունել հաշտության արդյունքները, այսինքն՝ դրանք նրանց համար պարտադիր են:



ОВСЕП КОЧАРЯН

Аспирант Кафедры Международного публичного права
и Европейского права Палацкого Университета (Чешская Республика)

ПРАВО НА ВЫБОР СМЕРТИ В ПРЕЦЕДЕНТНОМ ПРАВЕ ЕСПЧ

Эвтаназия и ассистированное самоубийство – проблемы, мировоззренческая оценка которых лежит в биоэтической плоскости¹. Сегодня все большее число исследователей высказываются за эвтаназию, указывая, что безболезненная смерть должна быть правом, которое может быть предоставлено неизлечимо больному человеку лишь после того, как он сам и его врачи придут к выводу, что это является лучшим выходом из безнадежного положения. О проблеме эвтаназии долгое время исследования не проводились. О ее допустимости и этичности дискуссии оживились в связи с принятием в некоторых странах специальных нормативных актов, которые легализовали эвтаназию и установили условия ее реализации, чему, в свою очередь, способствовало развитие биотехнологических методов, которые дали широкую возможность «отсрочки» и «взятия под контроль» смерти. Последняя начала рассматриваться как «доказательство уникальности» человека. «Контроль над смертью, как и контроль над рождаемостью - основы человеческого достоинства»². В Европе отношение к эвтаназии неоднозначно. Ряд государств ее узаконили, а Парламентская ассамблея Совета Европы несколько принимала осуждающие резолюции.

Вопросы о существовании так называемого «права на смерть», «права на самоубийство» или «права на помощь в совершении самоубийства» были рассмотрены в контексте статьи 2 и статьи 8 ЕКПЧ. В общей сложности, ЕСПЧ для формирования соматических прав берет перспективу поступательного изменения конвенционных запретов на разрешение, а затем на обязательство. В отношении эвтаназии и ассистированного самоубийства эту тенденцию

можно выявить через анализ нескольких знаковых решений. Еще в 2002 году дело *Pretty v. the United Kingdom*, в котором речь шла о праве выбора ухода из жизни, стало темой для обсуждения. Заявительница, у которой была диагностирована неизлечимая болезнь и которая была парализована, захотела иметь возможность контролировать, как и когда она умрет, надеясь тем самым избавиться себя от тяжелых страданий. Хотя по английскому законодательству самоубийство не является преступлением, но сама она не могла бы ее совершить. Муж был готов ей помочь, но в соответствии с английским законодательством пособничество к самоубийству является преступлением, а просьба об иммунитете от судебного преследования мужа было отказано. После того как Палата лордов также отклонила ее апелляцию, она подала заявление в ЕСПЧ. Претти утверждала, что отказ в предоставлении иммунитета от судебного преследования ее мужу и содержащийся во внутреннем законодательстве запрет на оказание помощи в совершении самоубийства нарушают ее права по статьям 2, 3, 8, 9 и 14 Европейской Конвенции. Претти утверждала, что статья 2 Европейской Конвенции защищает не только право на жизнь, но и право выбирать, продолжать или не продолжать жить. Суд не был убежден в том, что право на жизнь может толковаться как затрагивающее такой негативный аспект. Она указала, что статья 2 Европейской Конвенции, гарантирующая каждому человеку право на жизнь, «не может без языковых искажений быть истолкована как предоставление диаметрально противоположного права, а именно, права на смерть»³. Соответственно, Суд пришел к выводу, что из статьи 2 Европейской Кон-

1. Варданян Л. Г., Эвтаназия как правовая категория // Научный вестник “Орианакутюн” N. 93 2016, С. 31.
2. Цит. по работе: Зильбер А. П. Трактат об эвтаназии. – Петрозаводск: Петр. ГУ. 1998. С.350.

венции не может вытекать никакого права на смерть «от рук третьего лица или при содействии государственного органа»⁴. Суд не исключил, что вопросы, касающиеся качества жизни или того, что человек предпочитает делать со своей жизнью, могут быть признаны настолько основополагающими для условий жизни человека, что они требуют защиты от вмешательства государства. Однако Суд не счел статью 2 Европейской Конвенции надлежащим положением для защиты этих вопросов и сослался на статью 8⁵. М. Сандерсон критикует такое решение Суда, поскольку он считает, что условие, сопоставимое с условием мадам Претти – условие, которое, по его мнению, может быть даже названо «смертью в течение жизни», порождает обязательство со стороны государства уважать право человека определять степень своего существования, «с тем, чтобы физическое продолжение жизни не могло нарушать природу или ценность жизни, которую призвана защищать Статья 2»⁶.

Претти также заявила, что страдания, с которыми она столкнулась, квалифицируются как бесчеловечное и унижающее достоинство обращение в соответствии со статьей 3 Конвенции, отметив, что позитивное обязательство со стороны государства требует, чтобы действия государства, направленные на прекращение жизни, были санкционированы государством. Суд постановил, что такое обязательство не может вытекать из статьи 3 ЕКПЧ, и, соответственно, не нашел нарушения этого положения⁷.

Претти утверждала, что для вмешательства в право на самоубийство должны быть особенно веские причины именно потому, что оно затрагивает самый интимный аспект ее личной жизни. Суд не признал ассистированное самоубийство как относящиеся к самому интимному аспекту частной жизни. Суд также постановил, что он признает преимущественную силу статьи 2 в качестве одного из основополагающих по-

ложений Конвенции, отметив, что не может создать права на самоопределение в том смысле, что такое право дает индивиду право выбирать смерть, а не жизнь. Исходя из этого, Суд пришел к заключению, что законодательный запрет на оказание содействия в самоубийстве не нарушает статью 2 Европейской Конвенции.

Уже в деле *Haas v. Switzerland* (2011) Суд дал свое разрешение на самоубийство: решение о прекращении собственной жизни становится правом, гарантируемым статьей 8 — «право человека решать, как и когда должна завершиться его жизнь»⁸. Суд постановил, что если в соответствии с правом на частную жизнь может существовать своего рода индивидуальное право на самоубийство, то в соответствии с Конвенцией не существует никакого права на «вспомогательное самоубийство». Право на частную и семейную жизнь (статья 8), гарантируемое Конвенцией, не включает в себя право на помощь в совершении самоубийства как таковое. Она налагала бы на государства противоречивые обязательства (защищать жизнь по закону и отнимать жизнь по закону в одно и то же время) и приводила бы к несогласованности между правами, гарантируемыми Конвенцией, поскольку она должна рассматриваться в целом. Суд избрал прагматический процессуальный подход, согласно которой каждое государство, легализующее самоубийство, должно обосновать свои ограничения на осуществление права на самоубийство. Суд не признал права на смерть, опираясь на «отсутствие европейского консенсуса», но выдвинул гипотезу о том, что государства могли бы иметь «позитивное обязательство принимать меры для содействия совершению самоубийства с достоинством»⁹.

Тем не менее, по замечанию Г. Пуппинка «при определенных обстоятельствах конвенция может допускать самоубийство при содействии в соответствии с понятием личной автономии, включенным в право на частную жизнь, когда

3. ECtHR judgment of 29 April 2002, *Pretty v. United Kingdom*, appl. no. 2346/02. Para. 39.

4. ECtHR judgment of 29 April 2002, *Pretty v. United Kingdom*, appl. no. 2346/02. Para 40.

5. ECtHR judgment of 29 April 2002, *Pretty v. United Kingdom*, appl. no. 2346/02. Para 39.

6. Sanderson M. A (2002). 'European Court of Human Rights judgment on assisted suicide - *Pretty v. United Kingdom*. App. No. 2346/02. European Court of Human Rights, April 29, 2002'//*The American Journal of International Law*, 2002, p. 948.

7. ECtHR judgment of 29 April 2002, *Pretty v. United Kingdom*, appl. no. 2346/02. Para. 51.

8. ECtHR judgment of 20 January 2011, *Haas v. Switzerland*, appl. no. 31322/07. Para 55.

9. ECtHR judgment of 20 January 2011, *Haas v. Switzerland*, appl. no. 31322/07. Para 61.

государство декриминализует его при определенных обстоятельствах и при определенных условиях»¹⁰.

Дело *Koch v. Germany* было возбуждено всего через несколько месяцев после того, как Суд вынес решение по вопросу об оказании помощи в самоубийстве в деле *Haas v. Switzerland*. Кох, парализованная больная, и ее муж, - столкнулись с отказом врачей на получение смертельного препарата. Они подали иск по поводу такого отказа, но не дождавшись никакого решения в Германии, отправились в Швецию, где и произошло ассистированное самоубийство при «содействии» швейцарской компании Dignitas. Муж мадам Кох обратился в ЕСПЧ, утверждая, что отказ его жене нарушил их право на уважение частной и семейной жизни, гарантированное статьей 8 Конвенции. ЕСПЧ принял жалобу к рассмотрению¹¹. В решении по делу Суд тщательно ограничил свою оценку позитивных обязательств по статье 8 Европейской Конвенции в процедурном аспекте, обратившись с просьбой о том, чтобы юрисдикция судила в каждом конкретном случае на основе обоснованности индивидуальных просьб об оказании помощи в самоубийстве. Основывать право на помощь в самоубийстве на индивидуальной свободе означает непоследовательно резервировать доступ к помощи в самоубийстве только для прикованных к постели лиц, свобода которых сильно затронута их государством. Согласно этому подходу, осуществление «права на помощь в самоубийстве» должно быть зарезервировано за лицами, физические и умственные способности которых не затронуты. При таком подходе ответственность государства будет заключаться не в предотвращении самоубийств и защите жизни людей, а исключительно в обеспечении воли к смерти, защите свободы воли и предотвращении злоупотреблений состоянием слабости. Принимая такую аргументацию, Суд меняет основу Конвенции и челове-

ческое достоинство становится категорией относительной, поглощенной личной свободой.

К. Де ла Хоуг и Г. Пуппинк указывают, что «прецедентное право Суда явно ведет к принятию права на ассистированное самоубийство»¹². Это «право» ими установлено из последовательности судебных решений, где «Суд постепенно уточнил контуры права на помощь в самоубийстве»¹³. В деле *Gross v. Switzerland*, по мнению Суда, такое право вытекает из того факта, что «в эпоху растущей медицинской изощренности в сочетании с более длительной продолжительностью жизни многие люди обеспокоены тем, что их не следует заставлять задерживаться в старости или в состоянии развитой физической или психической дряхлости, которая противоречит прочно укоренившимся идеям о себе и личной идентичности»¹⁴. Особенность этого дела состоит в том, что заявительница не была смертельно больна, но и не хотела умереть из-за старости. Швейцарские власти, ссылаясь на дела *Pretty v. the United Kingdom* и *Haas v. Switzerland*, указывали, что государство вправе самостоятельно оценивать риски, которыми грозит законодательное закрепление ассистированного самоубийства. Власти также отмечали, что обязаны охранять человеческую жизнь в соответствии со статьей 2 Конвенции, которая явно вступала в противоречие со статьей 8. ЕСПЧ отметил, что само желание человека умереть в определенную дату и определенным способом подпадает под понятие «частная жизнь» и защищается статьей 8 Конвенции, которая требует от властей не только воздерживаться от посягательств на частную жизнь, но и принимать законодательные меры по ее защите. Применительно к данному делу это означает, что ЕСПЧ должен решить: достаточно ли четко сформулировано швейцарское законодательство, регулирующее выписывание пациентам смертельного препарата?

Швейцарский закон, который предусма-

10. Puppink, G., Popescu, A. (2011) Koch v. Germany: the ECHR called again to decide on assisted suicide. Strasbourg, September 1st 2011.// URL: <https://eclj.org/koch-v-germany-the-echr-called-again-to-decide-on-assisted-suicide>.

11. ECtHR judgement of 19.07.2012, Koch v.Germany app. no. 497/09.

12. Puppink, G.&. de La Hougue, C. (2014) The right to assisted suicide in the case law of the European Court of Human Rights, The International Journal of Human Rights, 18:7-8, 735-755, DOI: 10.1080/13642987.2014.926891. P.6:

13. Ibid.

14. ECtHR judgment of 14 May 2013, Gross v. Switzerland. App. no. 67810/10. Para 58.

тривал возможность эвтанази, не регламентировал ассистированное самоубийство, поэтому, по мнению Суда, власти не выполнили своих обязательств, предусмотренных статьей 8. Вопрос о том, должно ли ассистированное самоубийство признаваться в современном государстве, Суд решил не рассматривать. Но «мораль» этого дела все же такова: если власти решают узаконить эвтаназию или ассистированное самоубийство, они должны детально предусмотреть механизм ее применения, не оставляя правовых пробелов.

Знаковым было и решение по делу *Lambert v. France* (2015)¹⁵. На этот раз темой обсуждения стала терапевтическая абсистенция (therapeutic abstention), предусмотренная во французском законодательстве, по прекращению поддерживающей терапии больного, находящегося в бессознательном состоянии. Суд счел статью 8 «поглощенной» статьей 2, а статью 3 с самого начала счел неприемлемой¹⁶. Анализ потенциального нарушения статьи 2, в случае разрешения на прекращение поддерживающей терапии, был сведен Судом к анализу так называемых позитивных обязательств государства, то есть его обязанности охранять всеми доступными средствами право на жизнь лиц, находящихся под его юрисдикцией. Негативные же обязательства государства, то есть его обязанность воздерживаться от действий, способных поставить под угрозу жизнь человека, не рассматривалась, так как не было намерений лишить В. Ламбера жизни. При этом Суд оговаривается, что в данном деле «речь идет не об эвтаназии, а о прекращении лечения, которое искусственно поддерживает жизнь»¹⁷ - позиция, против которой решительно высказалось меньшинство, заявив, что «речь идет именно об эвтаназии, которая не хочет назвать своего имени»¹⁸. Суд указал, что по праву на жизнь, не подлежащему никаким ограничениям и отступлениям (статья 15 Конвенции), у государств есть «свобода усмотрения» в том,

что касается принятия решений о прекращении лечения¹⁹. Суд постановил, что исполнение решения Государственного Совета Франции от 24 июня 2014 года (о законности прекращения поддерживающей жизнь терапии в отношении Венсана Ламбера) не будет нарушением статьи 2 Конвенции. В этом деле он фактически оправдал «пассивную» эвтаназию. Статья 2 прозвучала и в деле *Gagin v. Roumanie*, (2009) о смерти заключенного в тюрьме, за которым Суд фактически признал посмертную правосубъектность, рассмотрев дело заявителя, зная о его смерти. В деле *Lambert and Others v. France* (2015) Суд также однозначно высказался за обоснованность права на усмотрение государств на эвтаназию, не находя в этих запретах нарушения статей 2 и 8.

Становление соматических прав повышает коллизионность как самого прецедентного права (в качестве примера: утверждение права на суицид и эвтаназию, основываясь на ст. 8, входят в коллизию со строгим запрещением убивать даже с согласия и с обязательством защищать жизнь (статья 2)), так и вероятность внутренних противоречий в самом Европейском праве прав человека, балансирующей между защитой коммунитарных и индивидуальных ценностей. Включение вопроса существования большинства соматических прав в область усмотрения государства из-за отсутствия консенсуса на общеевропейском уровне и наличие морального плюрализма поднимает также вопрос о гарантии этих прав Конвенцией.

В ст. 23 Закона РА о медицинском обслуживании указывается, что «эвтаназия – это ускорение смерти по просьбе больного какими-либо действиями и методами». Получается, что если бездействием добиться ускорения смерти, то это уже не эвтаназия. Такое определение также не указывает, каким именно больным должен быть просящий о смерти? Можно сделать вывод, что об эвтаназии может попросить любой больной, и ее осуществление будет влечь

15. ECtHR judgement of 5 June 2015, *Lambert and Others v. France*, appl. no. 46043/14.

16. ECtHR judgement of 5 June 2015, *Lambert and Others v. France*, appl. no. 46043/14. Para. 184.

17. ECtHR judgement of 5 June 2015, *Lambert and Others v. France*, appl. no. 46043/14. Para. 141.

18. I see ECtHR judgement of 5 June 2015, *Lambert and Others v. France*, appl. no. 46043/14. Para 141. See also Joint partly dissenting opinion of judges Hajiyev, Šikuta, Tsotsoria, De Gaetano and Grieco. Para. 9.

19. ECtHR judgement of 5 June 2015, *Lambert and Others v. France*, appl. no. 46043/14. Para 144.

ответственность именно за осуществление эвтаназии, а не за простое убийство. Определение эвтаназии как соответствующих действий дает основание полагать, что бездействие по просьбе больного – по сути пассивную эвтаназию – закон допускает. Но вот процессуальный порядок его совершения как раз таки отсутствует, как впрочем и вопрос об ассистированном самоубийстве, хотя Уголовный Кодекс РА не предусматривает такой запрет. Поэтому представляется необходимым во избежание состояний потенциальных нарушений статьи 8 ЕКПЧ уделить рассматриваемой области больше внимания, так как даже государства, применяющие либеральный подход, должны принимать надлежащие практические меры для предотвращения злоупотреблений (*Hass v. Switzerland*).

Считаем уместными сказать несколько слов о доктрине «свободы усмотрения» («margin of appreciation»). Это позитивный аспект эволюционизма в практике ЕСПЧ, что имеет особое значение для становления соматических прав. Обычно под «свободой усмотрения» имеют ввиду предоставление государствам неких рамок, в которых они могут действовать по своему выбору. Предпосылкой для ее возникновения выступает отсутствие консенсуса по какому-либо вопросу среди государств-участников, и по многим соматическим правам такой консенсус отсутствует. Причем «свобода усмотрения» не только позволяет «тормозить» там, где среди европейских стран сохраняется разногласие, но и оправдывает движение в направлениях, где относительный консенсус уже найден. Так, в деле *Dudgeon v. United Kingdom* (1981) нарушение прав заявителя криминализацией в Северной Ирландии «противоестественных половых связей» было констатировано постольку, поскольку в большинстве стран Совета Европы гомосексуализм больше не является преступлением, то есть достигнут консенсус, и нет свободы усмотрения²⁰. Справедливости ради отметим, что наличие консенсуса – вопрос

неочевидный, и в некоторых случаях выводы Суда представляются крайне спорными. Например, в деле *Marckx v. Belgium* (1978) ЕСПЧ посчитал, что среди европейских государств уже созрел консенсус по поводу уравнивания в правах так называемых «законных» и «незаконных» детей, сославшись на два международных договора, которые обуславливали движение государств в этом направлении²¹. Проблема в том, что эти договоры большая часть государств Совета Европы еще не ратифицировала. Суд, таким образом, основывался на абстрактных стандартах и принципах, которые соответствовали его собственному представлению о возможных тенденциях развития законодательства. Зачастую указывается, что дела *Tyrer v. the United Kingdom*²², *Marckx v. Belgium* и *Dudgeon v. the United Kingdom* олицетворяют стремление ЕСПЧ к приобретению большей самостоятельности. Но представляется, что точнее будет сказать, что такая политика Суда олицетворяет отрыв от практики государств с целью подталкивания своими пилотными постановлениями к консенсусу или к изменению существующего консенсуса. В деле *Hass v. Switzerland* Суд указал, что государства-члены единодушно выступают против практики самоубийств с помощью посторонних лиц, поскольку подавляющее большинство из них ее запрещает и придает большее значение защите жизни человека, чем волеизъявлению покончить с собой, тем самым указав на существующий консенсус²³. Однако в деле *Koch v. Germany*²⁴ Суд указал, что самоубийство является выражением индивидуальной автономии. Следовательно, основной причиной «права на самоубийство при содействии» будет не страдание или неизбежная смерть, а уважение свободы личности.

Таким образом, позиции, выраженные в решениях ЕСПЧ, отличаются чрезвычайной разбросанностью: от одобрения уголовной ответственности за содействие в самоубийстве

20. ECtHR judgment of 23 September 1981, *Dudgeon v. The United Kingdom*. App. No. 7525/76.

21. ECtHR judgment of 13 June 1979, *Marckx v. Belgium*. App. No. 6833/74.

22. ECtHR judgement of 25 April 1978, *Tyrer v. the United Kingdom*. App. No. 5856/72.

23. ECtHR judgment of 20 January 2011, *Haas v. Switzerland*, appl. no. 31322/07. Para 55.

24. ECtHR judgement of 19.07.2012 *Koch v. Germany*. App. no. 497/09.

(Pretty v. United Kingdom²⁵) до поддержки государства в узаконивании концепции «необоснованного упрямства» (Lambert and Others v. France²⁶). Но очевидно, что Суд делает шаг на встречу изменения существующего консенсуса для утверждения либеральной политики в отношении соматических прав, в частности права на выбор смерти.



25. ECtHR judgment of 29 April 2002, Pretty v. United Kingdom, appl. no. 2346/02.

26. ECtHR judgement of 5 June 2015, Lambert and Others v. France, appl. no. 46043/14.

ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱԼ

«Ն ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՆՃԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հանցավորության կանխարգելման գործընթացը կազմակերպելիս հաշվի են առնվում մի շարք հանգամանքներ, որոնց մեջ կարևորվում է կանխարգելման օբյեկտի բնութագրիչ առանձնահատկությունների դիտարկումը:

Կանխարգելման օբյեկտ են հանդիսանում մարդու անհատական այն հատկանիշները, որոնք պայմանավորում են նրա վարքագծի շեղումները¹: Հատկապես խոսքը վերաբերում է անձի հոգեբանաֆիզիոլոգիական այն առանձնահատկություններին, որոնք կոնկրետ իրավիճակում կարող են հանցանքի կատարմանը նպաստող պայմանների դեր խաղալ:

Այդ առանձնահատկությունների մեջ հատկանշական է տարիքը: Եվ մենք սույն հոդվածի շրջանակում կքննարկենք անչափահասի տարիքային սահմանները:

Ցանկացած պետությունում երեխաները պետք է գտնվեն արտոնյալ կարգավիճակում: Բացառություն չէ և Հայաստանի Հանրապետությունը, որը հոգ է տանում նոր սերնդի մասին նրա կենսագործունեության բոլոր ոլորտներում: Անչափահասների նկատմամբ հատուկ ուշադրությունը պայմանավորված է նրանց բնութագրիչ մի շարք առանձնահատկություններով՝ անպաշտպանվածությամբ, անօգնականու-

թյամբ, կենսափորձի պակասով, բարձր հուզականությամբ, անհավասարակշռությամբ, խոցելիությամբ: Անչափահասը ձգտում է ուշադրություն գրավել, տարբերվել մյուսներից: Նրան բնորոշ է ընկերության և խմբային համերաշխության զգացողությունը: Ուստի, անչափահասների հանցավորության կանխարգելման քաղաքականությունը պետք է կառուցել՝ նախ և առաջ հաշվի առնելով անչափահասների այս առանձնահատկությունները:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անչափահասների հանցավորության հասկացության վերաբերյալ միասնական մոտեցումներ չկան: Մի դեպքում անչափահասների հանցավորությունը քննարկվում է իբրև հանցագործությունների ամբողջություն, որոնք կատարվում են չափահասության տարիքի չհասած, այսինքն՝ 14-18 տարեկան անձանց կողմից²: Մյուս դեպքում անչափահասների հանցավորությունը սահմանվում է որպես սոցիալ-իրավական, հարաբերականորեն զանգվածային երևույթ, որն իրենից ներկայացնում է քրեական օրենքով արգելված՝ հանրորեն վտանգավոր արարքների ամբողջություն, որոնք կատարվում են 14-17 տարեկան անձանց կողմից³:

1. Տե՛ս Криминология: Учебник для вузов / Под. ред. проф. В. Д. Малкова. – 3-е изд., перераб. и доп. – М.: ЗАО «Юстицинформ», 2008. – էջ 456:

2. Криминология: учебник / под общ. ред. А. И. Долговой. 3-е изд., перераб. и доп. М., Норма, 2008, էջ 785, Криминология: Учебник / Под ред. В. Н. Кудрявцева и В. Е. Эминова. – 3-е изд., перераб. и доп. М., Юристь, 2007, էջ 473, Юзиханова Э. Г. Статистические показатели и тенденции преступности несовершеннолетних в новейшей России // Юридическая наука и правоохранительная практика. 2014. №4 (30). URL: <https://cyberleninka.ru/article/n/statisticheskie-pokazateli-i-tendentsii-prestupnosti-nesovershennoletnih-v-noveyshey-rossii> (վերջին այցելություն՝ 09.07.2019)

3. Տե՛ս Прокументов Л. М. Криминологическая характеристика преступности несовершеннолетних (региональный аспект) /Л. М. Прокументов. – Томск: Изд-во Том. ун-та, 2004. – էջ 80, Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. — М.: «Логос», 2004. — էջ 186, Демидова-Петрова Е.В. Специфика преступности несовершеннолетних как одного из видов преступности в Российской Федерации // Ученые записки Казанского юридического института МВД России. 2017. №3. URL: <https://cyberleninka.ru/article/n/spetsifika-prestupnosti-nesovershennoletnih-kak-odnogo-iz-vidov-prestupnosti-v-rossiyskoy-federatsii> (վերջին այցելություն՝ 09.07.2019)

Համաձայն անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ»)՝ անչափահաս է համարվում այն երեխան կամ երիտասարդը, որն իրավասխատման համար գործող իրավական համակարգի շրջանակներում կարող է ենթարկվել պատասխանատվության՝ մեծահասակի նկատմամբ գործադրվող պատասխանատվության ձևից տարբերվող ձևով: Ըստ այս դրույթի մեկնաբանության՝ տարիքային սահմանները կախված կլինեն և ուղիղ կախման մեջ կդրվեն յուրաքանչյուր իրավական համակարգի դրույթներից՝ հաշվի առնելով անդամ պետությունների տնտեսական, սոցիալական, մշակութային և իրավական համակարգերը: Դրա համար «անչափահաս» հասկացությունը տարիքային լայն դիապազոն է ընդգրկում՝ 7-ից մինչև 18 տարեկան կամ ավելի մեծ: Այդպիսի դիապազոնը անխուսափելի է՝ նկատի ունենալով ազգային իրավական համակարգերի բազմազանությունը և չի նվազեցնում սույն Նվազագույն ստանդարտ կանոնների նշանակությունը⁴:

Անչափահասի տարիքային տարբեր սահմաններ են նախատեսվել տարբեր պետություններում, որոնք էլ իրենց հերթին ժամանակի ընթացքում ենթարկվել են փոփոխությունների: Այսպես, Շվեյցարիայի՝ 1937 թ. քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ յոթ տարին չլրացած երեխայի նկատմամբ այս օրենքը չի կիրառվում: 2002 թ. հատուկ որոշմամբ իրավական պատասխանատվության տարիքն այս երկրում բարձրացվեց մինչև տա-

սը տարեկան:

Անգլիայում մինչև «Երեխաների և դեռահասների մասին» օրենքի ընդունումը 1933 թ. քրեական պատասխանատվության ենթակա չէր այն երեխան, որի յոթ տարին լրացած չէր: Այդ օրենքով քրեական պատասխանատվության տարիքը բարձրացվեց մինչև ութ, իսկ 1969 թ. «Երեխաների և դեռահասների մասին» օրենքով՝ տասը տարին:

ԱՄՆ-ում⁵, ըստ ընդհանուր իրավունքի, նվազագույն տարիքը սահմանվել է յոթ տարին, որը հանդիպում է նաև Ավստրալիայում, Հորդանանում, Իռլանդիայում, Պակիստանում⁶:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքը որպես քրեական պատասխանատվության հնարավոր տարիք սահմանում է տասնչորս տարեկանը⁷:

Բելգիայում քրեական պատասխանատվության տարիքը սահմանված է տասնութ տարին:

Նիդեռլանդներում սահմանված են քրեական պատասխանատվության նվազագույն և առավելագույն սահմանները՝ տասներկու և քսանմեկ:

Ֆրանսիայում, ի տարբերության մնացած երկրների, քրեական պատասխանատվության նվազագույն և առավելագույն տարիքը սահմանված չէ, որի արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում նշանակում է փորձաքննություն՝ հավաստիանալու՝ անձն օժտված է տարիքային մեղսունակությամբ, թե՞ ոչ⁸: Համանման մոտեցում կա նաև ԱՄՆ մի շարք նահանգներում: Որոշ հետազոտողների գնահատմամբ՝ ԱՄՆ 37 նահանգներում քրեական

4. Տե՛ս ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ («Պեկինյան կանոններ»), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18505> (վերջին այցելություն՝ 30.12.2019);
 5. ԱՄՆ յուրաքանչյուր նահանգ լրացուցիչ ինքնուրույն հաստատել է քրեական պատասխանատվության տարիքը, օրինակ՝ Կոլորադո և Լուիզիանա նահանգները՝ տասը տարին, Ջորջիան և Իլլինոյսը՝ տասներեք, Նյու-Հեմփշիրը և Տեխասը՝ տասնհինգ, Նյու-Յորքը՝ տասնվեց:
 6. Տե՛ս **Хромова Наталия Михайловна** Возраст уголовной ответственности несовершеннолетних // Журнал российского права. 2018. №4 (256), էջ 103, URL: <https://cyberleninka.ru/article/n/vozrast-ugolovnoy-otvetstvonnosti-nesovershennoletnih> (վերջին այցելություն՝ 26.12.2019);
 7. Տե՛ս **Помоголова Юлия Викторовна**. Использование зарубежного опыта борьбы с преступностью несовершеннолетних как средство совершенствования внутреннего законодательства // Проблемы выбора средств предупреждения преступности несовершеннолетних в условиях реформирования уголовноисполнительной системы России: Сборник материалов международной научно-практической конференции (Вологда, 27 апреля 2012 г.) / Отв. ред. **В. Ф. Лапшин**. – Вологда: ВИПЭ ФСИН России, 2012, էջ 213-214:
 8. Տե՛ս **Барышникова Кристина Геннадьевна**. Возраст уголовной ответственности в зарубежных странах // Academy. 2017. №4 (19). URL: <https://cyberleninka.ru/article/n/vozrast-ugolovnoy-otvetstvonnosti-v-zarubezhnyh-stranah> (վերջին այցելություն՝ 25.03.2019):

պատասխանատվության տարիքի նվազագույն շեմը սահմանված չէ և կախված է, ամենից առաջ, կոնկրետ գործից, և յուրաքանչյուր կոնկրետ գործով այն որոշվում է դատարանի հայեցողությամբ⁹:

ՀՀ քրեական գործող օրենսդրությունը հստակ սահմանում է քրեական պատասխանատվության տարիքը: ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև՝ քր. օր.) 23-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քր. օր-ով սահմանված տարիքի: ՀՀ քր. օր.-ի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում 16 տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է այն հանցագործությունների սպառնիչ ցանկը, որոնց համար քրեական պատասխանատվության ենթակա է 14 տարին լրացած անձը: Ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի¹⁰ (այսուհետ՝ նախագիծ) 99-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանցանք կատարած անչափահաս է համարվում հանցագործության պահին տասնչորս տարին լրացած, սակայն տասնութ տարին չլրացած անձը: Մինևույն ժամանակ, նախագծի 125-րդ հոդվածի (հանցագործության գործիքների, միջոցների, առարկաների կամ հանցագործությամբ ստացված գույքի կամ եկամտի բռնագրավումը) 13-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի դրույթները կիրառելի են նաև սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը անմեղսունակության վիճակում կատարած անձի և քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի նկատմամբ: Այսինքն՝ ստացվում է, որ քրեաիրավական ներգործության կարող է ենթարկվել 14 տարեկանը չլրացած անձը, ով կատարել է

պատժի սպառնալիքով արգելված արարք: Սակայն նախագիծը չի նշում այն նվազագույն տարիքային սահմանը, որից սկսած կարող են տարածվել համապատասխան դրույթները:

ՀՀ-ում քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կողմից պատժի սպառնալիքով արգելված արարքի կատարման դեպքում ՀՀ ոստիկանության՝ անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության կողմից պրոֆիլակտիկ հաշվառման են վերցնում անչափահասներին՝ 11 տարեկանից սկսած, և նրանց նկատմամբ իրականացնում են կանխարգելիչ աշխատանքներ, որոնք, ըստ էության, ոչնչով չեն տարբերվում 14 տարեկան անչափահասների նկատմամբ իրականացվող աշխատանքներից: Ստացվում է՝ 11-14 տարեկան անչափահասը, չհանդիսանալով հանցագործության սուբյեկտ, դառնում է պրոֆիլակտիկ ներգործության օբյեկտ:

Կարծում ենք, որ նպատակահարմար է պրոֆիլակտիկ ներգործության օբյեկտ դիտարկել 10 տարեկանից սկսած, քանի որ 10-12 տարիքային փուլն անցումային է՝ մանկահասակությունից դեպի դեռահասություն: Այս տարիքն ունի ֆիզիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական առանձնահատկություններ¹¹: Այն համընկնում է սեռական հասունացման սկզբնական փուլի հետ: Դրանով պայմանավորված՝ երեխաները դառնում են դյուրագրգիռ, դիտողություններին համարժեք չեն արձագանքում, երբեմն իրենց հանդգնորեն են պահում, կամակոր, նրանց տրամադրությունը հաճախակի է փոփոխվում: Ճանաչողության ոլորտում տեղի են ունենում փոփոխություններ՝ սկսում են հետաքրքրվել սեփական ներաշխարհով և ինքնազնահատականով, առաջանում է հանրային ճանաչման պահանջմունք: Ձևավորվում է չափահասության ծգտումը, զարգանում է «չափա-

9. Տե՛ս <https://pravda-dolinsk.ru/raznoe/s-kakogo-vozrasta-nastupaet-ugolovnaya-otvetstvennost-v-ssha-1-2-otvetstvennost-nesovershennoletnix-v-ugolovnom-zakonodatelstve-otdelnyx-zarubezhnyx-stran.html> (վերջին այցելություն՝ 04.10.2019թ.).

10. Տե՛ս <http://www.e-draft.am/projects/496/about> (վերջին այցելություն՝ 06.06.2018 թ.).

11. Տե՛ս առավել մանրամասն օրինակ՝ **Ս. Խուրդյան**, Անձի զարգացման ճգնաժամային տարիքները. - Եր.: Չանգակ-97, 2004, էջեր 70, 86, 99-100, 185, Бадмаева Бальжина Базаржаповна Возрастные особенности современных школьников 10-12 лет // Образование и наука. 2012. №7(96), էջեր 45-53, URL: <https://cyberleninka.ru/article/n/vozzrastnye-osobennosti-sovremennyh-shkolnikov-10-12-let> (վերջին այցելություն՝ 25.12.2019), **Параничева Т. М., Бабенкова Е. А., Тюрина Е. В.** Возрастные и половые особенности психического здоровья детей 10-11 лет // Новые исследования. 2013. №4 (37), 115-130 էջեր, URL: <https://cyberleninka.ru/article/n/vozzrastnye-i-polovye-osobennosti-psihicheskogo-zdorovya-detey-10-11-let> (վերջին այցելություն՝ 25.12.2019), **Фельдштейн Д. И.** Психология взросления: структурно-содержательные характеристики процесса развития личности. М.: Моск. психолого-социальный ин-т: Флинта, 1999, էջ 53

հասաների աշխարհում» գործելու պատրաստ-վածությունը՝ իրենց հնարավորությունները կիրառելու, ինքնադրսևորվելու, հասարակությանը հաղորդակից լինելու: Բացի այդ, հասարակա-կան հարաբերությունների բուռն զարգացումը հանգեցրեց երեխաների սոցիալականացման գործընթացի վաղ սկսելուն և ավարտելուն:

Կարծում ենք, որ շեղվող վարքագիծ դրսևորած, սակայն քրեական պատասխանա-տվության տարիքի չհասած 10 տարեկան անձանց պրոֆիլակտիկայի օբյեկտ դիտարկելն արդյունավետ է, քանի որ հատուկ ուշադրու-թյունն ու վերաբերմունքը նրանց նկատմամբ կնպաստի նրանց իսկ ապագա վարքագծի՝ հանցավորի վերաճելու հնարավորության սահ-մանափակմանը կամ չեզոքացմանը:

Հետևաբար, հաշվի առնելով և կարևո-րելով այս տարիքի առանձնահատկությունները, որոնք որոշիչ դեր են խաղում անհատականու-թյան ձևավորման գործընթացում, միևնույն ժամանակ նպատակ չհետապնդելով նվազեց-նել անչափահասների քրեական պատասխա-նատվության տարիքային շեմը, հանցավորու-թյան սոցիալական բնույթի վրա շեշտադրում կատարելով, ինչպես նաև կարևորելով սոցիա-լական վերահսկողության դերը՝ կարծում ենք, որ կրիմինալոգիական տեսանկյունից նպատա-կահարմար ենք գտնում անչափահասներին՝ **որպես հանցավորության կանխարգելման օբյեկտի, դիտարկել տասը տարեկանից սկսած:**



ԴԱԿԻԹ ԶԻԼՖԻՄՅԱՆ¹

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
Շիրակի մարզի դատախազության դատախազ

ՀԱՆՁՆԱԿՈՐ ԵՆԹԱՄՆԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ ԱՆՉԱՏ ՊԱՅԵԼՈՒ ՕԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆ

Քրեակատարողական համակարգը, այն կազմող առանձին տարրերը, դրանց տեսակներն ու կարգավիճակն ամրագրված են օրենսդրությամբ և կոչված են լուծելու պետության կողմից իր առջև դրված խնդիրները: Օրենսդրությամբ սահմանված լինելու հանգամանքը ստեղծում է որոշակի թվացյալ տպավորություն այն մասին, որ քրեակատարողական համակարգի կառուցման և դրա առանձին տարրերի հիմնադրման գործընթացն ունի օրենսդրի կամքից կախված սուբյեկտիվ հիմքեր: Բայց այդպիսի տպավորությունը խաբուսիկ է: Անշուշտ, իրավաստեղծագործության ընթացքում հնարավոր է որոշակի սուբյեկտիվ գործոնների ազդեցություն ստեղծվող արդյունքի՝ նորմատիվ իրավական ակտի բովանդակության վրա: Սակայն այդ ազդեցությունն ունի որոշակի սահմաններ, որոնցից անցնելու դեպքում քրեակատարողական օրենսդրությանը կարող է վերաձվել կամայականության²: Հետևաբար, ցանկացած համակարգի, ներառյալ քրեակատարողական, հիմնադրումը մեծապես կախված է օբյեկտիվ գործոններից. այլ կերպ ասած՝ համակարգային առանձնահատկությունները և դրանում որոշակի տարրերի առանձնացումը, նախատեսումն ու վերացումը հիմնականում ունեն օբյեկտիվ հիմքեր և պատճառ-գործոններ, որոնցով պայմանավորված՝ ստեղծվում է

կամ ամբողջ համակարգը կամ էլ դրանում տեղ է գտնում քրեակատարողական համակարգի ինչ-որ տարր, կառույց:

Հայաստանի Հանրապետությունն անցյալի օրենսդրությունից ժառանգել և քրեակատարողական օրենսդրությամբ սահմանել է (կարճ ճակատագրով ասած) իրավապահ մարմինների՝ նախկին աշխատակից հանդիսացած, հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց մյուս դատապարտյալներից անջատ պահելու պահանջը: Քրեակատարողական օրենսգրքի այդ պահանջի կենսագործման արդյունքում ՀՀ քրեակատարողական ծառայության համակարգում գործում է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը, որը նախատեսված է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների նկատմամբ ազատազրկում պատժատեսակը կատարելու համար³:

Քրեակատարողական այս հիմնարկի առկայության փաստից առաջանում են որոշակի հարցեր՝ կապված այն հանգամանքների հետ, որոնք պայմանավորել են նման առանձնահատուկ կառույցի գոյությունը: Դրանք վեր հանելու, հասկանալու, դրանց կարևորությունը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի հետազոտական աշխատանք մի քանի ուղղություններով, որոնք հնարավորու-

1. Ղեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Հ. Մ. Խաչիկյան:
2. Պետական կառավարման գիտությունը կառավարման ռացիոնալության ու արդյունավետության առաջին պայմանը համարում է օբյեկտիվի ճանաչումը, դրա ներքին կապերի ու կառուցակարգերի բացահայտումը, բազմաթիվ տարրերի ու օրինաչափությունների հաշվառումը, օբյեկտիվի վերաբերյալ գիտելիքի վրա կառուցված պետական կառավարման համապատասխան նպատակները, գործառույթները, կառույցները, տեխնոլոգիաները և սկզբունքները: Այդ մասին մանրամասն տես **Атаманчук Г. В.**, Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, էջ 58:
3. «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում են պահվում նաև ազատազրկման դատապարտված օտարերկրացիները: Այս քրեակատարողական հիմնարկի համար սահմանված է հետևյալ լրակազմը. փակ ուղղիչ հիմնարկ (5 մարդ), կալանք պատժատեսակ (5 մարդ), կիսափակ ուղղիչ հիմնարկ (25 մարդ), կիսաբաց ուղղիչ հիմնարկ (70 մարդ), բաց ուղղիչ հիմնարկ (15 մարդ), կալանավորվածների պահելու վայր (34 մարդ): Ըստ լրակազմի «Վարդաշեն» ՔԿՀ-ն նախատեսված է 135-140 կալանավորվածների և դատապարտյալների համար (տես pmg.am/hy/penitentiaries/penitentiaries-list/2016-09-27-11-04-13): Տվյալները վերցված են 10.09.2019 թ. դրությամբ:

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

թյուն կտան ամբողջական ու խորքային կերպով հասկանալ հիմնահարցի էությունը: Այդ հետազոտական խնդիրները պայմանականորեն կարող ենք տրոհել մի քանի ուղղությունների. մասնավորապես՝ ինչ է քրեակատարողական համակարգը և որո՞նք են դրա հիմնական տարրերը, որո՞նք են քրեակատարողական համակարգի նկարագիրը և առանձին տարրերի առկայությունը այդ համակարգում պայմանավորող գործոնները, և վերջապես, ո՞րն է այն գործոնը, որի ուժով կամ պատճառով ազատագրված մարտապարտված իրավապահ մարմինների նախկին աշխատակիցները պետք է իրենց պատիժը՝ ազատագրվումը կրեն այլ ազատագրված մարտապարտվածներից անջատ:

Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ գործածվում են մի շարք՝ իրար հարակից հասկացություններ, որոնք այս կամ այն կողմից նշում կամ արտացոլում են քրեական պատիժների կատարման պետական գործունեության մասնակիցներին: Այդ հասկացություններից են՝ «քրեական պատիժների կատարման համակարգ», «քրեակատարողական համակարգ», «ազատագրվում պատժատեսակի կատարման հիմնարկների համակարգ»⁴, «քրեակատարողական մարմինների և հիմնարկների համակարգ»⁵ և այլն: Այս եզրույթների և ձևակերպումների տարբերությունը հաճախ ոչ միայն ձևական, այլ նաև բովանդակային է, և պայմանավորված է թե ինչ բաղադրատարրեր են ընդգրկվում համակարգի մեջ: Քանի որ

սույն հոդվածի խնդիրը քրեակատարողական ընդհանուր համակարգի և դրա կազմակերպման ու գործունեության սկզբունքների վերլուծությունն ու պարզաբանումը չէ, ապա այս հարցին կանդրադառնանք միայն ՀՀ օրենսդրության, այլ ոչ թե քրեակատարողական իրավունքի տեսության մեջ եղած խորքային վերլուծությունների մակարդակով, որովհետև մեզ ավելի շատ հետաքրքրում է ոչ թե ամբողջ համակարգը և դրա սկզբունքները, այլև դրա մի տարրը և այդ տարրի (կառույցի, հիմնարկի) գոյության օբյեկտիվ սոցիոլոգիական հիմքերը:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդ. 2-ի 5-րդ մասի վերլուծությունից բխում է, որ քրեակատարողական համակարգը քրեակատարողական ծառայության մարմինների և հիմնարկների ամբողջություն է: Այդ համակարգում կենտրոնական մարմնի դեր է կատարում արդարադատության նախարարության՝ քրեակատարողական ծառայությունը⁶: Համակարգի հաջորդ և հիմնական տարրը քրեակատարողական հիմնարկներն են⁷, ինչպես նաև կառավարության որոշմամբ ստեղծվող պետական ոչ առևտրային կազմակերպությունները (սոցիալ-հոգեբանական, վերականգնողական, գիտահետազոտական, բուժական, կրթական և այլն): Օրենքի տրամաբանությունից ելնելով՝ քրեակատարողական համակարգի բաղադրատարր կարելի է համարել նաև քրեակատարողական ծառայության համակարգում գործող հիմնադրամը⁸:

Քրեակատարողական իրավունքի տեսու-

4. Sten օրինակ Кузьмин С. И, Исаков В. М., Уголовно-исполнительная система России в конце XX века // Проблемы укрепления законности и борьба с преступностью на региональном уровне (наркотики и преступность). Уголовное право, криминология, уголовно-исполнительное право на рубеже XX- XXI веков: Материалы международной научно-практической конференции. Часть вторая /Под ред. доцента Л.А. Соловьева. Москва-Смоленск: Юридический институт МВД России, Смоленский филиал, 1999, էջ 77-83:

5. «Քրեակատարողական մարմինների և հիմնարկների համակարգ» հասկացությունն օգտագործվում է ՀՀ օրենսդրությամբ՝ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի (8 հուլիսի, 2005 թ.) 1-4 հոդվածներում:

6. Քրեակատարողական ծառայության հիմնական խնդիրներն ամրագրված են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի (8 հուլիսի, 2005 թ.) 4 հոդվածում (տես <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121921/2/39>):

7. Քրեակատարողական հիմնարկը պետական հիմնարկ է, որը գործում է սույն օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան: Քրեակատարողական հիմնարկներ են ուղղիչ հիմնարկները և կալանավորվածներին պահելու վայրերը: Քրեակատարողական հիմնարկների տեսակները և լրակազմերը սահմանում է համապատասխան նախարարը՝ քրեակատարողական ծառայության պետի ներկայացմամբ: Քրեակատարողական հիմնարկները ստեղծում, վերակազմակերպում և դրանց գործունեությունը դադարեցնում է Կառավարությունը (տես «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի (8 հուլիսի, 2005 թ.) հոդվ. 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121921/2/39>):

8. Այդպիսի եզրակացության իրավական հիմքը «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածն է, համաձայն որի դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու, դատապարտյալներին և կալանավորվածներին պահելու պայմանները բարելավելու, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների սոցիալական, մշակութային ոլորտները զարգացնելու նպատակով քրեակատարողական ծառայության համակարգում Կառավարությունն ստեղծում է հիմնադրամ, որը գործում է հիմնադրամի կանոնադրությանը համաձայն

թյան մեջ ընդունված մոտեցումների համաձայն՝ յուրաքանչյուր երկրում սահմանված քրեական պատիժների համակարգին համապատասխան և զուգահեռաբար ստեղծվում է դրան թղթակցող և այդ պատիժները կատարող պետական մարմինների համակարգ: Վ. Վ. Գերանինի կարծիքով՝ «պատիժները կատարող մարմինների և հիմնարկների համակարգը մի կողմից որպես բաղադրատարր մտնում է ավելի բարձր կարգի կառուցվածքի՝ իրավապահպան մարմինների համակարգի մեջ, իսկ մյուս կողմից իր մեջ որպես բաղադրատարր ներառում է քրեակատարողական համակարգը»⁹: Այս մոտեցման համաձայն պետական մարմինների որոշակի խումբ կազմում է իրավապահպան մարմինների համակարգը, որի տարրերից է քրեական պատիժները կատարող մարմինների ու հիմնարկների համակարգը, իսկ վերջինիս տարրերից է քրեակատարողական ենթահամակարգը:

Այսպիսով, քրեական պատիժները կատարող մարմինների դասակարգումները կարող են կատարվել տարբեր հիմքերով՝ որպես մեկնակետ վերցնելով քրեական օրենսդրությունը և (կամ) քրեակատարողական օրենսդրությունը: Այդ իսկ պատճառով համակարգի տարրերի դասակարգման միասնական մոտեցում չկա, որովհետև դասակարգման չափանիշները բազմաթիվ են: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը հիմք է ընդունում պատիժները կատարող մարմինների և հիմնարկների դասակարգման երկու տարբերակ՝ կամ պատժի տեսակը, կամ էլ պատիժը կատարող մարմնի (կամ հիմնարկի) տեսակը¹⁰: Այսպես, նշված

օրենսգրքի ներքին կառուցվածքը ելնում է պատիժների տեսակներից:

Չխորանալով այդ դասակարգումների մանրամասնությունների և դասակարգման չափանիշով առանձնացված բաղադրատարրերի տեսակների բնութագրերի մեջ՝ նշենք, որ մեզ հետաքրքրողն այստեղ իրավապահպան մարմինների՝ նախկին աշխատակից դատապարտյալների ազատազրկման կազմակերպական ձևն է: Այդ տեսանկյունից մենք բոլոր տեսակի դասակարգումներում որպես համակարգի հիմնական տարր նկատում ենք համապատասխան կառուցվածքային տարրը՝ դատապարտյալին հասարակությունից մեկուսացնելու հետ կապված պատիժները կատարող մարմիններ և հիմնարկներ (դասակարգման չափանիշը պատժի տեսակն է), քրեակատարողական համակարգի մարմիններ և հիմնարկներ (դասակարգման հիմքը պատիժը կատարող մարմինն է)¹¹:

Այս տեսանկյունից քրեակատարողական համակարգը տարբեր երկրներում ունի զանազան տարրեր: ՌԴ-ում դրանք են քրեակատարողական տեսչությունները, ուղղիչ կենտրոնները, կալանատները, ուղղիչ հիմնարկները և գաղութները, գաղութ բնակավայրերը, բանտերը և այլն¹²: Հայաստանի Հանրապետությունում ազատությունից զրկելու հետ կապված պատժի կատարման գործառույթը կատարում են քրեակատարողական ծառայության հիմնարկները: Բացի դրանցից, այդ ծառայության համակարգում են ներառված նաև նախնական կալանքի կարգով կալանավորվածներին պահելու վայրերը: Այս վերջինն առանձնացված է

9. Տե՛ս **В. В. Геранин** «Учреждения и органы исполняющие наказания» //в. кн. Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. **Ю. И. Калинина**. – 2-е изд., испр. и доп.- М.: Рязань: Логос; Академия права и управления федеральный службы исполнения наказаний, 2006. с. 300:

10. Նույն մոտեցումն է դրված նաև ՌԴ 1996 թ. դեկտեմբերի 18-ի քրեակատարողական օրենսգրքի հիմքում (տե՛ս Уголовно-исполнительный кодекс Российской Федерации. Концепция и основные положения. Сопоставительный текст. Постатейный комментарий к новеллам /**В. И. Селивестров, И. В. Шмаков, Л. В. Яковлева**. –М.: – Юрист, 1997, 400 с.):

11. Այս չափանիշով դասակարգման դեպքում քրեական պատիժներ կատարող մարմինները բաժանվում են չորս խմբի՝ դատարաններ, դատական ակտերի հարկադիր կատարման մարմիններ, զորամասերի հրամանատարությունը և քրեակատարողական համակարգը (տե՛ս Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. **Ю. И. Калинина**. – 2-е изд., испр. и доп.- М.: Рязань: Логос; Академия права и управления федеральный службы исполнения наказаний, 2006. с. 303-306; Уголовно-исполнительное право России /Под ред. **А. И. Зубкова**.- М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, с. 317-384):

12. Տե՛ս Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. **Ю. И. Калинина**. – 2-е изд., испр. и доп.- М.: Рязань: Логос; Академия права и управления федеральный службы исполнения наказаний, 2006. с. 309-312; Уголовно-исполнительное право России /Под ред. **А. И. Зубкова**.- М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, с. 317-384:

օրենքով: Այն մեզ հետաքրքրում է այնքանով, որքանով իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց նախնական կալանքը ևս կատարվում է անջատ:

Այսպիսով, զուտ օրենսդրական նյութի վերլուծությունը (<<-ում և ՌԴ-ում), առանց քրեակատարողական համակարգի պատմական ու տեսական ակունքների մեջ մանրազնին խորանալով¹³, ցույց է տալիս, որ քրեակատարողական համակարգն ամբողջությամբ և դրա տարրերը (ներառյալ ազատազրկման կատարման վայրերը կամ հիմնարկները) աչքի են ընկնում որոշակի կայունությամբ, ինչպես նաև փոփոխականությամբ: Համաժամանակյա համեմատության տեսանկյունից երկրների միջև կան նաև որոշակի էական տարբերություններ:

Այստեղից էլ հարց է առաջանում, թե ինչ գործոններ ու օբյեկտիվ պայմաններ են ազդում քրեակատարողական համակարգի տարրերի ձևավորման վրա, պատճառավորում դրանցից որոշ մասի նորությունը, իսկ մեզ հետաքրքրող քրեակատարողական հիմնախնդրի տեսանկյունից՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի գոյությունը: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ ենք համարում դիմել քրեակատարողական քաղաքականությունը պայմանավորող գործոնների, ինչպես նաև քրեակատարողական համակարգի՝ հատկապես քրեակատարողական հիմնարկների տեսակների գոյության հիմքում ընկած օբյեկտիվ պատճառների վերլուծությանը:

Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ այս ուղղությամբ հետազոտությունները շատ չեն, բայց, այնուամենայնիվ, կան: Դրանցից մեկը Ա. Ե. Նատաշևի հետազոտությունն է, որում նա քրեակատարողական քաղաքականության զարգացման գործոնները բնորոշում է այդպես. այն բոլոր փոխգործող երևույթները, որոնք որպես շարժիչ ուժեր վճռում են քրեակատարողական համակարգի՝ սոցիալական ուղղվածությունը, հիմնական բովանդակությունը և հետագա զարգացման հնա-

րավորությունները¹⁴:

Պարզ է, որ դեռևս 1985 թ., այսինքն՝ խորհրդային հասարակության՝ «փակ թեմաների» գործողության պայմաններում այս հեղինակի թվարկած և վերլուծած քրեակատարողական համակարգի զարգացման գործոնների շարքում մենք չենք տեսնում այն հիմնական պատճառի՝ տեսական իմաստավորումը, որին համապատասխան խորհրդային քրեակատարողական օրենսդրությունը սահմանում էր իրավապահպան մարմինների՝ նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների՝ անջատ պահելու պահանջը: Սակայն մեզ հետաքրքրող այդ պատճառի տեսական արտացոլումը մենք չենք նկատում նաև հետխորհրդային քրեակատարողական իրավունքի գիտության տեսաբանների մոտ: Այսպես, Ա. Ի. Զուբկովը, լիովին համաձայնվելով քրեակատարողական համակարգի զարգացման հիմքում ընկած գործոններին տված բնորոշման հետ, փորձում է դրանք համակարգել և վերլուծել արդեն հետխորհրդային Ռուսաստանի իրականությանը համապատասխան: Որպես քրեակատարողական համակարգի զարգացումը պայմանավորող գործոն-պատճառներ Ա. Ի. Զուբկովն առանձնացնում է հետևյալները՝

- ա) պետության տնտեսական ընդունակությունը՝ հատկացնել անհրաժեշտ քանակով ռեսուրսներ քրեակատարողական համակարգի նորմալ գործառութավորման համար,
- բ) ժողովրդավարության զարգացման, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, հումանիզմի իրավախախտողների նկատմամբ մարդասիրության դրսևորման մակարդակը,
- գ) քաղաքացիների մշակույթը, իրավագիտակցությունը և բարոյական իդեալները,
- դ) հանցավորության մակարդակը, կառուցվածքը և շարժը,
- ե) քրեական օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի զարգացումը,
- զ) քրեակատարողական օրենսդրության

13. Հայաստանում ազատազրկման որպես քրեական պատժատեսակի կրիմինալոգիական և քրեակատարողական տեսական ու պատմական առումների մանրազնին ուսումնասիրությունը տես **Хачикян А. М.**, Лишение свободы: криминологические и уголовно-исполнительные проблемы.- Монография, Изд. ЕГУ, Ереван, 2008; **А. М. Хачикян**, История применения и правового регулирования наказания в виде лишения свободы в Армении.- Монография, Ереван, Изд. ЕГУ, Ереван, 2005.

14. Տե՛ս **Наташев А. Е.**, Управление органами, исполняющими наказания. /Под. ред. Г. А. Туманова и А. И. Зубкова. М., 1983.

զարգացումը և դրա կիրառման պրակտիկան դատապարտյալների հետ վարվեցողության չափորոշիչներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը,

է) քրեակատարողական իրավունքի գիտության զարգացման մակարդակը¹⁵:

Ա. Ի. Ջուբկովի թվարկած գործոնները կարող ենք դասակարգել երկու խմբի՝ ընդհանուր սոցիալական (կամ սոցիոլոգիական) և իրավական: Ակնհայտ է, որ քրեակատարողական իրավունքի՝ նորմատիվային տեսլականի հիմքում ի վերջո ընկած են սոցիոլոգիական գործոնները: Այժմ փորձենք Ա. Ի. Ջուբկովի թվարկած և մեր կողմից իրավականի ու ընդհանուր սոցիալականի բաժանված գործոնների շարքում գտնել այն հիմնական պատճառը, որը պայմանավորել է կամ պայմանավորում է իրավապահայան մարմինների՝ նախկին աշխատակից ազատագրվածան դատապարտվածների անջատ պահելու պահանջը:

Մանրագնին ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ դրանցում մենք չենք կարող տեսնել մեզ հետաքրքրող գործոնը¹⁶: Ազատագրվածան դատապարտված իրավապահայան մարմինների նախկին աշխատակիցներին անջատ պահելու օրենսդրական պահանջի պատճառ չի կարող համարվել ոչ ժողովրդավարության զարգացման մակարդակը (ընդհակառակը. դա, կարծես թե, խախտում է ժողովրդավարության և դրա տարր համարվող իրավահավասարության սկզբունքը), ոչ պետության տնտեսական հնարավորությունը (ընդհակառակը, այն առաջացնում է լրացուցիչ ծախսեր առանձին քրեակատարողական հիմնարկի ստեղծման պատճառով), ոչ էլ քրեակատարողական օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը (առավել ևս, որ այստեղ նման «արտոնյալ պահանջ» գոյություն չունի):

Հարց է առաջանում. հրն է այն սոցիոլոգիական գործոնը, որը հիմք է դարձել քրեա-

կատարողական օրենսդրության մեջ այդ իրավական պահանջի ամրագրման համար: Այս հարցի պատասխանն Ա. Ի. Ջուբկովի թվարկած գործոնների շարքում և դրանց վերլուծություններում չկա: Հարցին փոքր-ինչ մոտենում է այդ հեղինակի առանձնացրած «քաղաքացիների մշակույթը, իրավագիտակցությունը և բարոյական իդեալները» որպես քրեակատարողական քաղաքականության, ինչպես նաև քրեակատարողական համակարգի զարգացման գործոններ¹⁷: Սակայն այս գործոնի բովանդակության բացահայտումը և վերլուծությունն Ա. Ի. Ջուբկովը կատարում է միայն ընդհանուր հասարակական իրավական մշակույթի և իրավագիտակցության մակարդակի տեսանկյունից, դրանց անկման ու գրեթե իրավական մերժողականության (նիհիլիզմի) վերածվելու միտումների նկարագրմամբ՝ դիտարկելով դա ավելի շատ հանցավորության (իրավախախտումների) բարձր մակարդակի պատճառ, քան թե քրեակատարողական համակարգի տարրերի կառուցվածքը, այսինքն՝ քրեակատարողական հիմնարկների տեսակները պայմանավորող պատճառ: Այդ վերլուծություններում չենք նկատում նաև նիհիլիստական իրավագիտակցության այնպիսի դրսևորման առանձնացումը, ինչպիսին է հանցավոր ենթամշակույթը, դրա բնույթն ու առանձնահատկությունները, կացությունն ազատագրվածան վայրերում:

Քրեակատարողական իրավունքի տեսության մեկ այլ հեղինակ՝ Վ. Վ. Գերանինը, ևս մշակել է պատիժների կատարման մարմինների համակարգի կառուցվածքը պայմանավորող, դրա վրա ազդող օբյեկտիվ գործոնների հասկացությունը և առանձնացրել է դրանց որոշակի խումբ: Ըստ նրա՝ «պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների համակարգի կառուցվածքի» վրա ազդող օբյեկտիվ գործոններ են՝

ա) պետության հասարակական կարգերը և դրանով ձևավորվող սոցիալական, դատական, քրեական և քրեակատարողական քաղաքականությունը,

15. Снѳ Уголовно-исполнительное право России /Под ред. А.И. Зубкова.- М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, с. 318.

16. Քրեակատարողական համակարգի զարգացումը պայմանավորող գործոն-պատճառների մասին տեճ **Зубков А. И.** «Формирование уголовно-исполнительной политики» //Уголовно-исполнительное право России /Под ред. А. И. Зубкова.- М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 318-324:

17. Снѳ **Зубков А. И.** «Формирование уголовно-исполнительной политики» //Уголовно-исполнительное право России / Под ред. А. И. Зубкова.- М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 320

բ) տնտեսությունը (երկրի տնտեսական վիճակը),

գ) գիտությունը և օրենսդրությունը,

դ) քրեական և քրեակատարողական օրենսդրությամբ դատապարտյալների՝ գիտականորեն հիմնավորված դասակարգումը,

ե) հանցավորության կառուցվածքը երկրում,

զ) միջազգային գործոնը¹⁸:

Այս տեսաբանի թվարկած և պատիժների կատարման մարմինների ու հիմնարկների համակարգային կառուցվածքը որոշող օբյեկտիվ գործոնների շարքում չենք նկատում որևէ պատճառի մատնանշում, որը հիմք է մեր հետազոտության առարկան կազմող ազատագրվածների պատժի կրումն անջատ կատարելու համար:

Վ. Վ. Գերանինի կողմից առաջ քաշված և օբյեկտիվ գործոնների շարքում մատնանշված է «ազատագրվածների դատապարտվածների՝ գիտականորեն հիմնավորված դասակարգումը» որպես համակարգի կառուցվածքային բաղադրատարրերը պայմանավորող գործոն: Որպես ընդհանուր չափանիշ այն կարող է դիտարկվել հիմնապատճառ, որի ուժով իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատագրվածների դատապարտվածները պատիժը կրում են անջատ: Սակայն Վ. Վ. Գերանինն այդ օբյեկտիվ գործոնը դիտարկում է պատժի անհատականացման և կիրառման տարբերակման սկզբունքի հիմքով կամ համատեքստում: Այսինքն՝ դատապարտյալների դասակարգումը պատժի անհատականացման և տարբերակման քրեական և քրեակատարողական առումներով պայմանավորում է այն կատարող հիմնարկների տեսակները: Սակայն ակնհայտ է, որ ազատագրվածների՝ անջատ կատարումը և հատկապես իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատագրվածների դատապարտվածների նկատմամբ չի կարող դիտարկվել որպես նշված սկզբունքի դրսևորում կամ կենսագործում:

Իրավապահ մարմինների՝ նախկին աշխատակից՝ ազատագրվածների դատապարտվածներին անջատ պահելը, մեր կարծիքով, պատժի սահմանման, նշանակման, կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքի հետ որևէ կապ չունի¹⁹:

Վ. Վ. Գերանինի թվարկած գործոններից է նաև գիտության և օրենսդրության նշանակությունը կամ ազդեցությունը պատիժները կատարող կառույցների համակարգի վրա²⁰: Ակնհայտ է, որ գիտությունը մշակում է տեսական հիմքեր, իսկ նրա խորհրդատվությամբ ընդունված օրենսդրական դրույթն իրավական հիմքն է, որով գործում է քրեակատարողական համակարգը: Այսպիսի տրամաբանությամբ դատելու դեպքում կարող ենք հանգել շատ պարզ և հասարակ դատողության. իրավապահ մարմինների՝ նախկին աշխատակից՝ ազատագրվածների դատապարտված անձնաց համար հատուկ ստեղծված քրեակատարողական հիմնարկը պատիժները կատարող հիմնարկների համակարգի կառուցվածքում գոյություն ունի, որովհետև դրա պահանջը սահմանված է օրենքով: Սակայն այս ակնհայտ ճշմարտությունն ընդամենը մեզ հետաքրքրող ինստիտուտի իրավական-տեսական նախադրյալն է: Գիտության խնդիրն է պարզել դրա սոցիալական պատճառները, այն սոցիոլոգիական հիմքերը, գործոնները, որոնք պատճառ են հանդիսացել այդ նորմ-պահանջի սահմանման և կիրառման համար: Զարմանալի է, բայց ստացվում է, որ մինչև այժմ այս խնդիրը համակողմանի տեսական վերլուծության չի ենթարկվել և իմաստավորվել: Դրա պատճառները գալիս են դեռ խորհրդային հասարակությունից՝ չնայած, որ իրավապահ մարմինների՝ նախկին աշխատակից՝ ազատագրվածների դատապարտված անձանց անջատ պահելու իրավական ինստիտուտը սահմանվել է դեռևս այն ժամանակ: Նշանակում է, որ նման գիտական անտեսման, շրջանցման միտումները նախկինում

● ՕՐԵՆԱԿԱՏԱՐՈՂՑՈՒՆ № 117 2020

18. Стн В. В. Геранин «Учереждения и органы исполняющие наказания» //Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. Ю. И. Калинина. – 2-е изд., испр. и доп.- М.: Рязань: Логос; Академия права и управления федеральный службы исполнения наказаний, 2006. с. 303-304:

19. Այդ մասին տես ատենախոսության սույն գլխի 2-րդ եթազվխում:

20. Ի. Վ. Շմարովը և քրեակատարողական քաղաքականության վրա աղող գործոններից մեկը համարում է պատիժների կատարման, դատապարտյալների ուղղման, նրանց շրջանում հանցագործությունների կանխման խնդիրները հետազոտող համապատասխան գիտությունների (կրիմինալոգիա, քրեական իրավունք, քրեակատարողական իրավունք, վերաօրոգիալականացման հոգեբանություն, մանկավարժություն և այլն) նվաճումները (տես Уголовно-исполнительное право: /Под ред. И. В. Шмарова. М., 1996, с. 5)

ունեին լուրջ պատճառներ: Արդյունքում՝ տեսական բացը փոխանցվեց նաև մեր օրեր:

Վ. Ս. Սելվեստրովը, վեր հանելով քրեակատարողական հիմնարկների համակարգի կառուցման վրա ազդող գործոնները, որպես այդպիսին մատնանշում է սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր պատճառները: Ըստ նրա՝ դրանց շարքն են դասվում դատապարտյալների՝ ժողովրդավարական, քրեաիրավական և քրեակատարողական բնութագրերը²¹: Շարունակելով իր մտքերը՝ Վ. Ս. Սելվեստրովը գրում է. «միջազգային ակտերի նորմերին և գործող քրեակատարողական օրենսդրությանը համապատասխան՝ քրեակատարողական հիմնարկներում իրացվում է դատապարտյալների՝ անջատ պահելու սկզբունքը՝ կախված սեռից, տարիքից, կատարված հանցանքի՝ հանրային վտանգավորության աստիճանից և բնույթից, նախկին հանցավոր գործունեությունից և նշանակված պատժի ժամկետից: Անհրաժեշտ է ճանաչվում առանձին դատապարտյալների մեկուսացումը մյուսներից և միաժամանակ որոշ խմբերի դատապարտյալներին անջատ պահելը: Արդյունքում՝ մի կողմից ստեղծվում են տարատեսակ քրեակատարողական հիմնարկներ, իսկ մյուս կողմից՝ մի տեսակի քրեակատարողական հիմնարկում առանձին խմբերի դատապարտյալներ պատիժները կրում են իրարից անջատ: Այս ամենը թույլ է տալիս տարբերակել պատիժը և քրեակատարողական ներգործությունն ազատազրկման վայրերում, պատժի կատարմանը և հանցագործի ուղղմանը մոտենալ կատարված հանցագործության ծանրության ու բնույթի, հանցավոր անձի, պատժի կրման ընթացքում նրա դինամիկայի հաշվառմամբ»²²:

Իրավապահպան մարմինների՝ նախկին աշխատակից դատապարտյալների առանձնահատկությունը չունի ո՛չ քրեաիրավական, ո՛չ քրեակատարողական ընդհանուր առումներ՝ հատկապես, երբ Վ. Ս. Սելվեստրովը դատապարտյալներին անջատ պահելն ու դրանով իսկ քրեակատարողական հիմնարկների տեսակների բազմազանությունը, ի վերջո, կապում է պատժի տարբերակման ու անհատականաց-

ման՝ քրեաիրավական ու քրեակատարողական սկզբունքների հետ:

Կարող ենք եզրակացնել, որ խորհրդային ուղղիչ-աշխատանքային իրավունքի տեսության համար վերը նշված թեման փակ, քննարկման չենթարկվող հիմնահարցերից էր, քանզի գիտությանն արգելված էր հիմնավորել, որ խորհրդային ուղղիչ-աշխատանքային հիմնարկների համակարգում ծաղկում է հանցավոր ենթամշակույթը: Այդ ենթամշակույթով պայմանավորված՝ ազատազրկման դատապարտվածները գտնվում են աստճանակարգային խիստ տարբերակման հարաբերությունների մեջ. որոշակի խումբ ազատազրկվածների նկատմամբ առկա է կայուն ագրեսիվ վերաբերմունք. ընդ որում, այն աստիճանի, որ սպառնում էր նրանց կյանքին ու առողջությանը: Հենց սա է այն սոցիոլոգիական պատճառը, որ խորհրդային իշխանություններին դրդեց առանց տեսական հիմնավորումների ու ծավալումների օրենսդրությամբ սահմանել իրավապահ մարմինների՝ նախկին աշխատակից՝ ազատազրկման դատապարտվածների՝ պատժի կրման անջատ կարգը:

Այսպիսով, արված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ քրեակատարողական համակարգի կառուցվածքային տարրերն ունեն սոցիալական պայմանավորվածություն, դրանց գոյության հիմքում ընկած են որոշակի օբյեկտիվ գործոններ ու պատճառներ: Գրականության մեջ առաջ քաշված այդ օբյեկտիվ գործոնների ու պատճառների շարքում մշակված չէ այն հիմնական գործոնը, որ պայմանավորել է իրավապահ մարմինների՝ նախկին աշխատակից՝ ազատազրկման դատապարտվածների՝ պատժի անջատ կատարման պահանջը: Տեսության կողմից արդեն վեր հանված և վերլուծված գործոնների համադրումը հիմք է տալիս՝ առաջ քաշելու այն թեզը, որ իրավապահպան մարմինների՝ նախկին աշխատակից դատապարտյալներին անջատ պահելու ինստիտուտի հիմքում ընկած սոցիոլոգիական պատճառը խորհրդային հասարակության մեջ ձևավորված և մինչև այժմ գոյատևող հանցավոր ենթամշակույթի առանձնահատկություններն են:

21. Տե՛ս **Селивестров В. С.**, «Система учреждений и органов, исполняющих наказание» //Уголовно-исполнительное право России /Под ред. проф. **В. И. Селивестрова.** – 2-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2000.- էջ 136:

22. Տե՛ս **Селивестров В. С.**, «Система учреждений и органов, исполняющих наказание» //Уголовно-исполнительное право России /Под ред. проф. **В. И. Селивестрова.** – 2-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2000.- էջ 136-137:

Այդ ենթամշակույթի նորմատիվ առանձնահատկությունները, կազմակերպական ձևերը, արժեքները (օրինակ՝ յուրային-օտար բաժանումը, անվստահությունը պետության և նրա պաշտոնյաների նկատմամբ) ստեղծեցին լուրջ հասարակական հակասություններ, որոնք անհամատեղելի էին դարձնում որոշակի խմբի պետական պաշտոնյաների ու հանցավոր ենթամշակույթը կրող կամ դրա ազդեցության տիրություն գտնվող անձանց համատեղ գոյակցությունը: Այս հանգամանքը հիմք դարձավ իրավապահայան մարմինների՝ նախկին աշխատակից՝ ազատագրկման դատապարտված անձանց առանձին քրեակատարողական հիմնարկում պահելու ինստիտուտի ձևավորման համար²³:

Քրեական օրենսդրությամբ սահմանված պատժի կատարման նպատակները կոնկրետացվում են քրեակատարողական օրենսդրության մեջ: ՀՀ ՔԿՕ-ի 2-րդ հոդ. ամրագրում է քրեակատարողական օրենսդրության խնդիրները: Այս խնդիրների համատեքստում իրավապահայան մարմինների՝ նախկին աշխատակից դատապարտյալների և մնացած դատապարտյալների համատեղ կեցությունը մշտական քրեածին գործոն է, որը վտանգում է նշված դատապարտյալների անվտանգությունը, որովհետև քանակապես նրանք զիջում են մնացած

դատապարտյալներին: Հնարավոր չէ վերացնել այդ վտանգը քրեակատարողական հիմնարկում պահպանության ու դատապարտյալների վարքագծի նկատմամբ հսկողության սովորական միջոցներով: Անհրաժեշտ է հարցին տալ արմատական լուծում:

Քրեակատարողական օրենսդրության և հիմնարկների առջև դրված՝ վերը բերված խնդիրներից բացի, առաջ է գալիս ևս մեկ խնդիր՝ դատապարտյալների անվտանգությունը, որի ապահովման միջոցներից են դատապարտյալներին անջատ պահելու մի շարք ինստիտուտներ: Դրանք էական ու անմիջական կապ չունեն պատժի անհատականացման ու վերասոցիալականացման՝ քրեակատարողական սկզբունքների հետ: Հետևաբար, անհրաժեշտ է կատարել տեսական վերաիմաստավորում և քրեակատարողական օրենսդրության սկզբունք ճանաչել դատապարտյալների անվտանգությունը և այդ մասով լրացնել ՀՀ ՔԿՕ-ի 5-րդ հոդվածը: Դրան համապատասխան՝ անհրաժեշտ է նաև լրացում կատարել ՀՀ ՔԿՕ-ի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝ դրանում ավելացնելով «ապահովել դատապարտյալի անվտանգությունը» ձևակերպումը, որով դա այլ խնդիրների հետ միասին կվերածվի ՀՀ քրեակատարողական օրենսդրության խնդրի:



23. Հակասական հասարակական գործընթացները միշտ և բոլոր երկներում էլ ազդում են հանցավորության դեմ պայքարի և քրեական պատիժների կիրառման ոլորտի քաղաքականության վրա: Այդ մասին տես **Зубков А. И.**, «Формирование уголовно-исполнительной политики» //Уголовно-исполнительное право России /Под ред. **А. И. Зубкова.** - М.: Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 324:

ԱՐԹՈՒՐ ՂԱՄՔԱՐՅԱՆ

ի. գ. դ., պրոֆեսոր,
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության
և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
արդարադատության առաջին դասի խորհրդական

ԹԱՄԱՐԱ ՇԱՔԱՐՅԱՆ

ի. գ. թ., դոցենտ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի,
ՀՀ-ում ֆրանսիական համալսարանի դասախոս,
ԵԽ ազգային փորձագետ, արդարադատության
առաջին դասի խորհրդական

**ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՂԱԿԱՐԳԸ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

1. *Ընդհանուր բնութագիրը*: 2005 թվականի փոփոխություններով ՀՀ սահմանադրությամբ դատախազության կարգավիճակն ամրագրող նորմերը սահմանված էին «Դատական իշխանությունը» վերտառությամբ 6-րդ գլխում: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ հստակորեն տարանջատվեցին և առանձին գլուխներում իրենց ամրագրումը ստացան դատական իշխանության և դատախազության վերաբերյալ նորմերը, ինչպես նաև սահմանվեց «Դատախազությունը և քննչական մարմինները» վերտառությամբ՝ ՀՀ Սահմանադրության 8-րդ գլուխը:

Այնուհանդերձ, հարկ է նկատել, որ դատախազության վերաբերյալ սահմանադրական նորմերում ամրագրված չէ քաղաքական իշխանությունից դատախազության անկախության մասին պահանջ:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նախատեսված է դատախազության գործառույթների (լիազորությունների) սահմանափակ ցանկ, որը հնարավորություն չի տալիս ճկունությամբ արձագանքելու հանրային կյանքում տեղի ունեցող փոփոխություններին և դատախազությանը վերապահել անհրաժեշտ գործառույթներ կամ լիազորություններ:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ առաջին անգամ նախատեսվեցին քննչական մարմինների և նրանց գործառույթների վերաբերյալ դրույթներ: Առանձին գլխում քննչական մարմինների մասին դրույթ նախատեսելով՝ Սահմանադիրը, կարծես, նպատակ էր հետապնդում գործադիր իշխանության համակարգից առանձնացնել նախաքննություն իրականացնող ինստիտուտ-

ները, մինչդեռ առայսօր ՀՀ-ում գործում են երկու տեսակի քննչական մարմիններ (ստորաբաժանումներ)՝ գործադիր իշխանության համակարգում գործող քննչական ստորաբաժանումներ և գործադիր իշխանությունից անկախ քննչական մարմիններ:

1.2. *Փոփոխությունների ընդհանուր ուղղությունները*: Սույն բաժնում ներկայացվում է արդի սահմանադրական փոփոխությունների երկու ուղղություն՝

1. *ՀՀ դատախազության կարգավիճակի՝ սահմանադրական հիմքերի բարեփոխումներ՝*

- **դատախազության անկախության մասին դրույթի սահմանադրական ամրագրում.**
- **դատախազության գործառույթների (լիազորությունների) համակարգի վերափոխում և հստակեցում.**

2. *Քննչական մարմինների կարգավիճակի բերափոխումներ՝*

• **քննչական մարմինների՝ որպես առանձին մարմնի մասին սահմանադրական կարգավորման վերանայում.**

• **քննության գործառույթից կիսադատական տարրի առանձնացումը և քննչական մարմինների՝ գործադիր բնույթի (ապացույցների հավաքման) գործառույթների հստակեցում.**

• **քննչական մարմինների և քննիչների կարգավիճակի միասնականության ապահովում:**

II. Դատախազության սահմանադրական կարգավիճակի փոփոխությունները

2.1. *Առկա վիճակը և խնդիրները*: 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանա-

դրությամբ դատախազությանը նվիրված է առանձին գլուխ (8-րդ գլուխը), որից բխում է, որ դատախազությունը գործադիր իշխանության համակարգից դուրս գործող պետական մարմին է: Ենթադրաբար կարելի է նշել նաև, որ դատախազությունը Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմին է, սակայն ՀՀ Սահմանադրության տեքստում ուղղակիորեն նախատեսված չէ դատախազության անկախության մասին որևէ դրույթ:

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածում սպառիչ թվարկված են դատախազության գործունեության հիմնական ուղղությունները՝ որպես լիազորություններ, ինչն ունի ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական կողմեր: Այդպիսի կարգավորումը պետք է դրական գնահատել, քանի որ դրանով կարևորվում է դատախազական գործունեության դերը և նշանակությունը, սակայն եթե դրանք դիտարկվում են որպես գործունեության հիմնական ուղղություններ, այլ ոչ թե լիազորություններ: Միաժամանակ, դատախազության գործառույթների (լիազորությունների)՝ սահմանադրական կարգավորումը սահմանափակում է դատախազության գործունեության շրջանակները:

Դատախազության գործառույթների (լիազորությունների)՝ սպառիչ ցանկն օրենսդրին զրկում է դատախազության գործառույթները միջազգային չափորոշիչներին համահունչ համապատասխանեցնել փոփոխվող հանրային կյանքի օբյեկտիվ պահանջներին: Այսպես՝ հասարակական-քաղաքական կյանքի փոփոխությունները պահանջում են դատախազության առջև դնել նոր խնդիրներ, որոնց լուծման նպատակով պետք է օրենսդիրը հնարավորություն ունենա դատախազությանն օժտել համապատասխան լիազորություններով:

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված են առավելապես դատախազության գործունեության ուղղությունները (դատախազության գործառույթները), քանի որ գործունեության՝ նշված ոլորտներում դատախազությունն օժտված է ընդարձակ լիազորություններով, որոնք նախատեսվում են առանձին օրենսդրական ակտերով: Ինչպես նշեցինք, ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի տերմինաբանական վերլուծու-

թյան արդյունքում պարզ է դառնում, որ այդ նորմում թվարկված՝ դատախազության սահմանադրական գործառույթները որակվում են որպես լիազորություններ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված *լիազորությունների* (ընդգծումը՝ հեղ.) շրջանակում՝ օրենքի հիման վրա: Նշվածի համատեքստում դատախազության գործառույթների համակարգը վերանայման կարիք ունի:

2.2. Առաջարկվող փոփոխությունների ընդհանուր նկարագրությունը: Առաջարկվում է սահմանադրորեն ամրագրել, որ դատախազությունն անկախ և միասնական պետական մարմին է, որն իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է Սահմանադրությանը և օրենքներին:

Դատախազության գործառույթները կամ լիազորությունները չպետք է Սահմանադրությամբ սպառիչ սահմանավեն: Օրենսդիրը պետք է հնարավորություն ունենա օբյեկտիվ անհրաժեշտության դեպքում դատախազությանը վերապահի նոր լիազորություններ կամ գործառույթներ:

2.3. Հիմնավորումները

Ա. Պատմաիրավական և դիալեկտիկական տեսանկյունները

(1) *Դատախազության անկախության մասին:* XVIII դարում ֆրանսիական հեղափոխությունից հետո՝ 1790 թ. դեկտեմբերի 1-ի օրենքով հիմնադրվեց le ministère public պաշտոնը, որն օժտված էր անկախության երաշխիքներով (նշանակվում էր ցմահ): Հետագայում այս գաղափարից նահանջը բացատրվում էր Նապոլեոնի այն մոտեցմամբ, որ դատախազությունը միջոց է՝ ազդելու դատարանի վրա, որի անկախությանը հակադրվում էր դատախազությունը: XIX դարում առանձին գերմանական պետություններում առկա էին անկախ դատախազություններ, որոնց պաշտոնատար անձինք անփոփոխելի էին¹:

Խորհրդային իշխանությունների ժամանակաշրջանում բնականաբար չէր քննարկվում և չէր էլ կարող քննարկվել Խորհուրդներից և Կոմունիստական կուսակցությունից դատախա-

1. Закон и Суд: Вестник Русского юридического общества. – Рига, 1934. – № 1 (41). С. 1399.

զության անկախության հարցը²: Խորհրդային պետական իրավունքում դատախազության մարմինների առանձնացումը՝ որպես ինքնուրույն համակարգ, բացատրվում էր տեղական մարմիններից նրա անկախությունը ապահովելու նպատակով³:

Հայաստանի Հանրապետությունում դատախազությունը չի հանդիսացել գործադիր իշխանության մարմին, իսկ 1995 թ. Սահմանադրությամբ և 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությունում դատախազության մասին դրույթն ամրագրված էր դատական իշխանության վերաբերյալ գլխում:

2015 թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակ ՀՀ դատախազության կողմից ներկայացվել է առաջարկ՝ Սահմանադրության տեքստում ամրագրել դատախազության անկախության մասին դրույթ, սակայն այդ առաջարկը չի ընդունվել:

Այսպիսով՝ ՀՀ սահմանադրական զարգացման պատմության մեջ դատախազության անկախության մասին դրույթ Սահմանադրության տեքստում ամրագրված չի եղել⁴:

(2) *Դատախազության գործառույթների (լիազորությունների) մասին*: 1995 թ. Սահմանադրությամբ և 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությունում նախատեսված է եղել դատախազության լիազորությունների սպառիչ ցանկ: Հստակ սահմանվել է, որ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, դատախազության մասին օրենքի հիման վրա:

Դատախազության լիազորությունների՝ սպառիչ ցանկի նախատեսումը զրկել է օրենս-

դրին՝ դատախազությանը վերապահելու օբյեկտիվ անհրաժեշտություն ունեցող նոր գործառույթներ. օրինակ՝ երկար տարիներ քննարկման հարց էր քրեաիրավական ոլորտում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության սահմանադրականության հարցը:

Առայսօր վիճահարույց է մինչդատական վարույթի ընթացքում միջազգային համագործակցության ոլորտում հանձնման (էքստրադիցիայի)՝ դատախազության գործունեության սահմանադրականությունը:

Բ. Իրավահամեմատական տեսանկյունը

(1) *Միջազգային «փափուկ» իրավունքը դատախազության անկախության մասին*

Բ.1.1. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի դիրքորոշումը: Նախարարների կոմիտեի՝ 2000 թ. N R (2000) 19 հանձնարարականի 14-րդ կետի համաձայն՝ այն պետություններում, որտեղ դատախազությունն անկախ է կառավարությունից, պետությունը պետք է ձեռնարկի արդյունավետ միջոցներ, որպեսզի օրենքով ամրագրի դատախազության անկախության բնույթը և ծավալը: Նույն հանձնարարականի 19-րդ կետում նշված է՝ դատախազը բոլոր դեպքերում պետք է հնարավորություն ունենա անխոչընդոտ կերպով հարուցելու քրեական հետապնդում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հատկապես կոռուպցիայի, լիազորությունների անօրինական օգտագործման, մարդու իրավունքների խախտման համար:

2. 1922 թ. Ստալինին հասցեագրված Լենինին «Երկակի ենթակայության և օրինականության մասին» նամակում նա նշում էր. «Որպեսզի աշխատավորական դասակարգի դիկտատուրայի ձեռքում դատախազությունը համարվի ուժեղ և ճկուն գործիք՝ պետք է գործի կուսակցական հիմնարկների ամենամոտ դիտարկման ներքո և անմիջական համագործակցությամբ»: Ленин, т. XXVII, С. 299:

Секция].

3. Советское государственное право: Учебник / Под ред. А. Я. Вышинского; Академия наук СССР, Институт права. М.: 1938. С. 378-379.

4. «Դատախազության մասին» 1998թ. օրենքի 5-րդ հոդվածում ամրագրված էր՝ լիազորություններն իրականացնելիս դատախազության մարմինների անկախության մասին դրույթ, իսկ «Դատախազության մասին» 2007թ. օրենքում «դատախազության մարմինների անկախություն» ձևակերպումը հանվեց և դրա փոխարեն ամրագրվեց՝ յուրաքանչյուր դատախազի՝ իր լիազորություններն իրականացնելիս ինքնուրույն որոշումներ ընդունելու մասին և դատախազի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտությունն արգելելու մասին դրույթ (Հոդված 6) և դատախազի անկախության մասին դրույթը (Հոդված 44): «Դատախազության մասին» ՀՀ 2017թ. օրենքում նախատեսված են 2007թ. օրենքի դրույթներին նման կարգավորումներ: Փաստորեն՝ 2007թ. և 2017թ. օրենքներում բացակայում է դատախազության որպես առանձին մարմնի ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ մասին սկզբունք, դրա փոխարեն ամրագրված է դատախազի ինքնուրույնության և անկախության մասին ոչ իրատեսական պահանջներ: Եթե դատախազությունը՝ որպես առանձին համակարգ չունի անկախության երաշխիքներ, այդ համակարգի տարրերը՝ դատախազները իրականության մեջ նույնպես չեն կարող լինել անկախ կամ ինքնուրույն

Բ.1.2. Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը: Վենետիկի հանձնաժողովի՝ 2017 թ. հոկտեմբերի CDL-PI (2018)001 «Դատախազության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքների և զեկույցների ամփոփում» վերտառությամբ փաստաթղթում ներկայացվել են դատախազության անկախության վերաբերյալ այս կառույցի դիրքորոշումները: Ընդհանուր առմամբ պետք է առանձնացնել հետևյալ դրույթները:

1. Դատախազության անկախության մասին միջազգային չափանիշ գոյություն չունի⁵, որը, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք պետություններում դատախազությունը գործադիր իշխանության մաս է և ենթարկվում է Արդարադատության նախարարությանը:

2. Վենետիկի հանձնաժողովը պարբերաբար հաստատում է, որ առկա է դատախազության անկախության ապահովման ընդհանուր միտում⁶: Ավելին՝ «Դատական համակարգի անկախության վերաբերյալ եվրոպական չափանիշների հաշվետվության մասին» CDL-AD (2010) 040 փաստաթղթում Հանձնաժողովը նշել է, որ առկա է ոչ թե դատախազությունը գործադիր իշխանությանը կապելու կամ ենթարկելու միտում, այլ առավել անկախ դատախազական համակարգ ստեղծելու՝ լայն տարածում ստացած միտում:

Վենետիկի հանձնաժողովը «Հունգարիայի Հանրապետության նորմատիվային հանձնաժողովի վերաբերյալ» CDL (1995) 073rev կարծիքում նշել է. «Պետությունում հանրային մեղադրանքի համակարգի լիարժեք անկախությունը պետք է հանդիսանա այդ համակարգը կարգավորող հիմնարար սկզբունք: Հասարակությունն այս համակարգին կվստահի, եթե այդ համակարգի անկախությունը երաշխավորված է և պաշտպանվում է օրենքով»:

3. Դատախազության անկախության ճա-

նաչման համար կարևոր է Սահմանադրության կառուցվածքում նրա զբաղեցրած տեղը: Այսպես, Հանձնաժողովը «Դատախազության ծառայության մասին Մոլդովայի օրենքի նախագծի վերաբերյալ» CDL-AD (2008) 019 կարծիքում նշել է՝ «Սահմանադրությամբ դատախազությունը դատական իշխանության մաս է (Սահմանադրության IX գլուխ): Դա այլ պետական մարմիններից դատախազության անկախության համար ունի կարևոր նշանակություն»:

4. Միևնույն ժամանակ կարևոր է խուսափել դատախազության անկախությունն այլ պետական մարմինների՝ այդ թվում դատարանների անկախությանը սպառնալիք դառնալու հավանականությունից⁷: «Թեև Սահմանադրությունը պետք է ապահովի ինչպես դատախազության համակարգի, այնպես էլ գլխավոր դատախազի անկախությունը, սակայն պետք է ցուցաբերել զգուշություն, որպեսզի մի կողմից հավասարակշռվի կառավարության, պառլամենտի, ոստիկանության կամ հասարակության միջամտությունը, մյուս կողմից՝ գլխավոր դատախազի պատասխանատվությունը պատշաճ կատարելու իր գործառույթը»⁸:

(2) Այլ երկրների սահմանադրական կարգավորումները

Բ.2.1. Դատախազության անկախության

մասին: Իրավահամեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական այն երկրները, որոնց Սահմանադրություններում նախատեսված են դատախազության վերաբերյալ դրույթներ, որպես կանոն, ամրագրում են նաև դատախազության՝ իբրև անկախ կամ ինքնուրույն մարմին լինելու մասին պահանջ: Այսպես՝ Խորվաթիայի Սահմանադրության 121a հոդվածի համաձայն՝ դատախազությունն ինքնուրույն (autonomous) և անկախ իրավաբանական մարմին է...⁹: Սերբիայի Սահմանադրության 156-րդ հոդվածում ամրագրված է, որ դատախազությունը պետք է լինի անկախ պետական մարմին ...¹⁰:

5. CDL-AD (2013) 006, Мнение о проекте поправок к Закону о публичном преследовании Сербии, § 20.

6. Նույն տեղում:

7. Նույն տեղում:

8. CDL (1995) 073rev, Мнение о концепции регулирования Конституции Венгерской Республики, глава 11, стр.7.

9. **հղումը բացակայում է:**

10. <https://worldconstitutions.ru/?p=369>.

11. Սահմանադրության 134-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը յուրահատուկ և անկախ պետական մարմին է: <https://mylektsii.ru/9-69152.html>.

12. Սահմանադրության 106-րդ հոդվածի համաձայն՝ հանրային դատախազությունը միասնական և ինքնուրույն պետական մարմին է, որը ...<https://worldconstitutions.ru/?p=113>

Նման մոտեցում նախատեսված է նաև Մոնտենեգրոյում¹¹, Մակեդոնիայում¹², Բելգիայում¹³, Իսպանիայում¹⁴, Իտալիայում¹⁵, Պորտուգալիայում¹⁶ և այլն:

Ֆրանսիայի Սահմանադրության 64-րդ հոդվածն ընդհանուր հղում է կատարում դատական մարմինների անկախությանը, սակայն Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը նշել է, որ այն ամբողջ ծավալով վերաբերելի է նաև դատախազության մագիստրատուրային (11.08.1993թ. թիվ 93-326 որոշում)¹⁷:

Բ.2.2. Դատախազության գործառույթների (լիազորությունների) մասին: Այն պետություններում, որտեղ դատախազությունը սահմանադրական ինստիտուտ է, նրա գործառույթներն այս կամ այն աստիճանի կոնկրետացմամբ ամրագրված են հիմնական օրենքում¹⁸:

Սահմանադրություններում, որպես կանոն, նախատեսված են դատախազության

գործառույթների՝ ոչ սպառիչ ցանկ: Այսպես՝ Սլովենիայի Սահմանադրության 135-րդ հոդվածի համաձայն՝ պետական դատախազը հարուցում և ներկայացնում է քրեական մեղադրանքը և օժտված է օրենքով սահմանված այլ լիազորություններով: Դատախազության կազմակերպման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով¹⁹: Մակեդոնիայի Սահմանադրության 106-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը եզակի և ինքնուրույն պետական մարմին է, որը պաշտպանում է պետական մեղադրանքն այն անձանց վերաբերյալ, ովքեր կատարել են քրեական և այլ հանցագործություններ, ինչպես նաև իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ: Դատախազությունն իր լիազորություններն իրականացնում է Սահմանադրության և օրենքների հիման վրա և շրջանակներում²⁰:

Դատախազության լիազորությունների կամ գործառույթների բաց ցանկ է նախա-

13. Սահմանադրության 151-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի համաձայն՝ դատախազն անկախ է անհատական քննություն կատարելիս կամ հետապնդում իրականացնելիս: <https://worldconstitutions.ru/?p=157>:

14. Սահմանադրության 124-րդ հոդվածի համաձայն՝ դատախազն անկախ է այլ պետական մարմինների գործառույթներից, որի խնդիրն է նպաստել արդարադատության իրականացմանը՝ օրինականության և մարդու իրավունքների պաշտպանության նպատակով: <https://worldconstitutions.ru/?p=149>:

15. Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ օրենքն ապահովում է հատուկ դատարանների դատավորների, դրանց աղընթեր դատախազների անկախությունը: <https://worldconstitutions.ru/?p=148>:

16. Սահմանադրության 219-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն ունի օրենքով սահմանված հատուկ կարգավիճակ և ինքնավարություն: <https://worldconstitutions.ru/?p=141>:

17. Суд и государство / Под ред. Л. В. Головки, Б. Матё. – М.: Статут, 2018. С. 85.

18. Додонов В.Н., Крутских В.Е. Прокуратура в России и за рубежом.-М.: Изд. НОРМА, 2001, С. 51.

19. <https://worldconstitutions.ru/?p=109>.

20. <https://worldconstitutions.ru/?p=113>.

21. Դատախազությունը համարվում է ինքնուրույն և անկախ պետական մարմին, որն իրավասու և պարտավոր է հետապնդել քրեական և այլ պատժելի արարքներ կատարած անձանց, ձեռնարկել միջոցներ Խորվաթիայի Հանրապետության սեփականությունը պաշտպանելու և օգտագործել իրավական միջոցներ Սահմանադրությունը և օրենքը պաշտպանելու համար: Դատախազության ստեղծումը, կազմակերպումը, լիազորություններն ու իրավասությունները սահմանվում են օրենքով (Սահմանադրության 125-րդ հոդված): <https://legalns.com/download/books/cons/croatia.pdf>.

22. Դատախազությունը անկախ պետական մարմին է, որն իրականացնում է հետապնդում հանցագործություններ և այլ պատժելի արարքներ կատարած անձանց նկատմամբ, միջոցներ է ձեռնարկում՝ պաշտպանելու սահմանադրականությունը և օրինականությունը: Դատախազությունն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրության, օրենքների, վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքի հիման վրա ընդունված կարգավորումների համապատասխան:

Դատախազության կառուցվածքը, կազմակերպման կարգը և իրավասությունը (յուրիսդիկցիա) պետք է սահմանվեն օրենքով (Սահմանադրության 156-րդ, 157-րդ հոդվածներ): <https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/74694/119555/F838981147/SRB74694%20Eng.pdf>:

23. Դատախազությունը պաշտպանում է ֆիզիկական, իրավաբանական անձանց և պետության իրավունքներն օրենքով պաշտպանվող շահերը: Դատախազի նշանակման և հետևանքման կարգը, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև դատախազության կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով (Սահմանադրության 149-րդ, 151-րդ հոդվածներ): <https://www.ustavnysud.sk/en/ustava-slovenskej-republiky>:

24. Դատախազությունը հարուցում է քրեական հետապնդում և հօգուտ պետության պաշտպանում է մեղադրանքը: Դատախազությունը իրականացնում է նաև օրենքով սահմանված այլ լիազորություններ (Սահմանադրության 148-րդ հոդված): [http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/constitutions/eng/eur/alb?fn=document-frameset.htm\\$f=templates\\$3.0](http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/constitutions/eng/eur/alb?fn=document-frameset.htm$f=templates$3.0):

տեսված նաև Խորվաթիայում²¹, Սերբիայում²², Սլովակիայում²³, Ալբանիայում²⁴, Հունգարիայում²⁵ և այլուր:

Գ. Դոկտրինալ տեսանկյունը

(1) *Դատախազության անկախության մասին*: Դոկտրինայում դատախազության անկախության երաշխիքների հարցը քննարկվել է վաղուց: Օրինակ՝ պրոֆեսոր Ս. Զավադկսին, որը ցարական Ռուսաստանում զբաղեցրել է դատախազի, սենատորի պաշտոններ, նշում էր. «Կարելի է բավարարվել նաև առանց դատախազների անփոփոխելիության պահանջի՝ միայն այն պայմանով, եթե նախաքննության, ինչպես նաև ոստիկանական հետաքննության ավարտը կբխի դատարանից, եթե դատախազի ոչ մի առաջարկություն (ցուցում՝ հեղ.) (այդ թվում կալանքից ազատելու մասին) առանց դատավորի վավերացման, դատական քննիչի համար պարտադիր չի լինի, և վերջապես՝ բոլոր գործերը դատարան փոխանցելը լինի դատավորի իրավասությունը: Ցավալի կլինի, եթե որևէ մեկը դատի տրվի կամ ազատվի պատասխանատվությունից միայն դատախազի վրա ադմինիստրացիայի (գործադիր մարմնի՝ հեղ.) ճնշման ազդեցության ներքո: Հասարակության համար կարևոր է, որ ազդեցիկ հանցագործները չխուսափեն դատարանից, իսկ առանձին մարդկանց համար ոչ պակաս կարևոր է, որ նրանց հետ հաշիվներ չմաքրեն՝ ամբաստանյալի աթոռին նստեցնելով: **Լավ է արդարացված լինել, սակայն առավել լավ է, անմեղ լինելով, հետապնդման չենթարկվել**»²⁶:

Այս հոդվածից հետո մինչև հոկտեմբերյան

հեղափոխության ժամանակաշրջանի մեկ այլ իրավագետ նշել է. «**Չի կարելի բավարարվել առանց դատախազի անփոփոխելիության պահանջի**»: Ընդ որում, հեղինակը, որը նույնպես դատախազական աշխատանքի փորձ ուներ, նշում էր. «Այն երկրներում, որտեղ դատախազությանը վերապահված է պաշտոնատար անձանց՝ այդ թվում բարձրագույն իշխանության կրողների դեմ քրեական հետապնդում հարուցելու լիազորություն, այն կարող է բավարար կերպով իրականացվել միայն վարչական իշխանությունից դատախազության անկախության պարագայում»²⁷:

(2) *Դատախազության գործառույթների (լիազորությունների) մասին*: Ս. Ա. Օսիպյանն արդարացիորեն նշում է, որ Սահմանադրության մեջ դատախազության մասին հիշատակելու ուժով դատախազությունը, ինչպես Նախագահը, օրենսդիր մարմինը, կառավարությունը, դատարանները, հանդիսանում է սահմանադրական ինստիտուտ: Սահմանադրական ինստիտուտներն օժտված են լեգիտիմության՝ ավելի բարձր աստիճանով, նրանց կարգավիճակն ավելի կայուն է և չի կարող փոփոխվել կամ վերացվել առանց Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ նախատեսելու²⁸:

Միևնույն ժամանակ, դոկտրինում մշտապես քննարկվել է դատախազության՝ այս կամ այն գործառույթի Սահմանադրությամբ նախատեսված չլինելու դեպքում այդ գործառույթների իրականացման սահմանադրականությունը: Ընդ որում, նշվել են գործառույթներ, որոնց իրականացումը թեև Սահմանադրությամբ նա-

25. 1. Գլխավոր դատախազը և դատախազությունը անկախ են, նպաստում են արդարադատության իրականացմանը՝ որպես հանրային մեղադրող բացառապես կիրառելով պատասխանատվության վերաբերյալ պետության պահանջը: Դատախազությունը հետապնդում է հանցագործությունները, միջոցներ է ձեռնարկում ապօրինի գործողությունների կամ անգործության դեմ, ինչպես նաև նպաստում է դրանց կանխմանը:

2. Գլխավոր դատախազը և դատախազությունը՝ Իրականացնում են օրենքով սահմանված հետաքննության հետ կապված իրավասություններ, Դատարանում պաշտպանում են մեղադրանքը. վերահսկողություն են իրականացնում պատիժների կիրառման օրինականության նկատմամբ, որպես հանրային շահի պաշտպան իրականացնում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ գործառույթներ (Սահմանադրության 29-րդ հոդված): <https://web.archive.org/web/20140221180827/http://www.kormany.hu/download/a/1c/11000/The%20New%20Fundamental%20Law%20of%20Hungary.pdf>.

26. Заметки о прокуратуре / Проф. С. В. Завадский // Закон и Суд: Вестник Русского юридического общества. – Рига, 1929. – № 3 (сентябрь). – Стб. 85 – 88.

27. Лазаренко А. Н. О независимости прокуратуры // Закон и Суд: Вестник Русского юридического общества. – Рига, 1934. – № 1 (41). – С.1402.

28. Осипян С. А. Российский федерализм и конституционно-правовой статус прокуратуры: концептуальные проблемы. Автореф. дисс. ... докт. юрид. наук. М.: 2006. С. 47.

խատեսված չի եղել, սակայն օրենսդիրն այն ամրագրել է. օրինակ՝ քրեաիրավական ոլորտում օպերատիվ- հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ հսկողությունը²⁹:

Գ. Դատախազության գործառույթների (լիազորությունների) համակարգի վերանայումը

(1) *Քրեական հետապնդման հարուցումը և դադարեցումը*: Քրեական հետապնդում հարուցելը, իսկ մինչդատական վարույթում՝ հետապնդումը դադարեցնելը դատախազության բացառիկ լիազորությունն է:

Քրեական հետապնդման հարուցումը և այն դադարեցնելը կիսադատական գործառույթ է, ինչը վճռորոշ նշանակություն ունի այն իրականացնող մարմնի անկախության և պետական իշխանության համակարգում այդ մարմնի տեղորոշման համար:

Օրենսդրական քաղաքականության ընթացքում մշտապես քննարկվել և նույնիսկ պոզիտիվ-իրավական ամրագրում է ստացել (թեև չի գործել³⁰) այն գաղափարը, որ քրեական հետապնդում հարուցելը դատախազության բացառիկ լիազորությունն է:

Քրեական դատավարության նոր օրենսդրության հայեցակարգում երկար քննարկումների արդյունքում ընդունվեց այն առաջարկը, որ քրեական հետապնդում հարուցելը դատախազի կողմից անձին մեղադրյալի կարգավիճակ տալն է: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը կայացնում է ոչ թե գործադիր իշխանության համակարգում գործող պաշտոնատար անձը, այլ դատախազը:

(2) *Քննչական գործողությունների կատարումը*: Դատախազությունն օրենքով նախա-

տեսված դեպքերում պետք է օժտված լինի (հատկապես գործադիր իշխանության մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու նպատակով) ապացույցներ հավաքելու լիազորությամբ (չշփոթել դատախազության համակարգում քննիչներ ունենալու՝ նախկին անթույլատրելի պրակտիկայի հետ): Բանն այն է, որ քննության գործառույթը վերապահվում է գործադիր իշխանության մարմիններին, որոնք կարող են բավարար կամք ու ջանասիրություն չցուցաբերել պաշտոնատար անձանց մեղքը հիմնավորող ապացույցների հավաքման ուղղությամբ: Նման բացառիկ իրավիճակներում դատախազը պետք է հնարավորություն ունենա կատարելու, այսպես կոչված, «դատախազական հետաքննություն»:

Դատախազի կողմից քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ ակտերը կամ այլ դատավարական որոշումներն անմիջապես բողոքարկվում են դատարան: Այլ կերպ ասած՝ եթե գործադիր իշխանության մարմնի կողմից ապացույցների հավաքման գործընթացը գտնվում է դատախազի հսկողության ներքո, ապա դատախազի կողմից առանձին դեպքերում ապացույցների հավաքման գործընթացը գտնվելու է դատարանի **հսկողության** ներքո:

(3) *Պեղական շահերի պաշտպանության հայցի հարուցումը*: Հայաստանի սահմանադրական իրավունքի զարգացումը վկայել է այն մասին, որ քաղաքական իշխանությունն ամեն գնով՝ հատկապես եվրոպական չափանիշների ապահովման հղմամբ փորձել է սահմանափակել պետական շահերի պաշտպանության գործառույթի բովանդակությունը կամ այն

29. **Մնացականյան Ս.** Հայաստանի Հանրապետության դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները: Թեկնածուական ատենախոսություն: Երևան, 2009:

30. «Դատախազության մասին» 2007թ. օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված էր, որ քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորությունն է, սակայն նույն օրենքի 66-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված էր, որ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ են մտնում քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից հետո:

31. Իրավագիտության դոկտոր Գ. Դանիելյանը նշում է, որ դատախազությանը որևէ լրացուցիչ գործառույթ վերապահելու միտում գոնե վերջին տասնամյակի ընթացքում անգամ չի առկայծել: ... Դատախազության գործառույթները հանել սահմանադրական կարգավորումից և թողնել ընթացիկ օրենսդրության կարգավորմանը: Նշված մոտեցման ընդդիմախոսները նշում են. «Սահմանադրության դրույթներն բնավ արհեստական արգելք չեն կենսականորեն անհրաժեշտ խնդիրներ լուծելու համար: Իսկ ինչ վերաբերում է լրացուցիչ գործառույթներ վերապահելու խնդրին, ապա... այսօր նկատվում է Սահմանադրությամբ ամրագրված գործառույթները՝ սահմանափակման նկատառումով նենգափոխելու ընդգծված քաղաքականությունը»: Տե՛ս **Դանիելյան Գ.**, Սահմանադրական բարեփոխումների գործընթացի շեղումները // Օրենք և իրականություն, 2001, թիվ 23-24, էջ 3:

իրականացնելու հնարավորությունը³¹:

Այս քաղաքականության վերջնակետն այն էր, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ պետական շահերի պաշտպանության գործառույթը հանվեց դատախազության՝ ընդհանուր գործառույթների համակարգից և առանձին մասով այն որակվեց որպես **բացառիկ դեպքերում** իրականացվող գործառույթ:

Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման նկատմամբ նման քաղաքականությունը կարող է բացատրվել երկու հանգամանքով՝

ա) խորհրդային դատախազությանը հատուկ «ընդհանուր հսկողության» ուրվականի վերակենդանացման եվրոպական վախերով,

բ) կոռումպացված դերակատարների՝ պետության և համայնքի գույքային շահերի դեմ հանցավոր ոտնձգությունները դատախազության աչքից անտեսանելի դարձնելու ձգտմամբ:

Այս ենթադրյալ գործոնները հետհեղափոխական Հայաստանում ժամանակավրեպ են, քանի որ ներկայումս ոչ միայն բացակայում են պետության գույքային շահերի դեմ ոտնձգություններին չհակազդելու՝ լատենտային ձգտումները, այլև քաղաքական բարձր մակարդակում ողջունվում է կոռուպցիայի դեմ պայքարի գործունակ կառուցակարգերի ներդրումը:

Բացի այդ, դատախազությունում տեղի ունեցած սերնդափոխությունը ջնջել է խորհրդային դատախազությանը ներհատուկ ընդհանուր հսկողության վերաբերյալ որևէ ինստիտուցիոնալ հիշողություն: Բացակայում է այն վերականգնելու որևէ իրավա-քաղաքական նախադրյալ: Այս ժամանակահատվածում կայացել են ՄԻՊ-ի ինստիտուտը, հաշվեքննիչ պալատը. գործադիր իշխանության համակարգում գործում է նաև պետական վերահսկողության ծառայությունը:

Այսպես՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: 2015 թվականի փոփոխություն-

ներով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Վերը նշված նորմերի համադրումից բխում է, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նշված լիազորության իրականացման համար սահմանվել է «**բացառիկ դեպքերում**» եզրույթը: Վերջինս ավելի է սահմանափակել առանց այդ էլ օրենսդրությամբ սահմանափակված լիազորությունը, թեև «օրենքով սահմանված դեպքերում» եզրույթը արդեն իսկ նշանակում է որ ոչ բոլոր դեպքերում է, որ դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Հարկ է նշել, որ Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի կողմից 2008 թվականի հոկտեմբերի 21-ին «Դատախազության դերը քրեաիրավական ոլորտից դուրս» վերտառությամբ թիվ 3 կարծիքում նշված է, որ կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է՝ որոշ պետություններում դատախազները գործառույթներ ունեն քրեական իրավունքի ոլորտից դուրս՝ քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, վարչական, ընտրական իրավունքի բնագավառներում, ինչպես նաև շրջակա միջավայրի, սոցիալական իրավունքների և խոցելի խմբերի (ինչպիսիք են անչափահասները, սահմանափակ կարողությամբ, ինչպես նաև շատ քիչ եկամուտ ունեցող անձինք) իրավունքների պաշտպանության ասպարեզում: Որոշ անդամ պետություններում դատախազությունների խնդիրները և աշխատանքի ծավալն այս ոլորտում կարող է գերազանցել քրեական արդարադատության բնագավառում դատախազների դերին³²:

Նշված մոտեցումներն ամրագրված են նաև ԵԽ նախարարների կոմիտեի՝ 2012 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունված թիվ 11 հանձնարարականում և դրա բացատրական հուշագրում: **Այնուհանդերձ, քրեական ոլորտից դուրս դատախազության պարտականությունների, գործառույթների վերաբերյալ**

32. Stu` Opinion No 3(2008) Consultative Council of European Prosecutors : “THE ROLE OF PROSECUTION SERVICES OUTSIDE THE CRIMINAL LAW FIELD” կետ 16.

միջազգայնորեն ճանաչված նորմեր և կանոններ չկան. այդ գործառույթները պայմանավորված են ներպետական իրավական և պատմական ավանդույթներով³³:

2.4. Փոփոխության համակարգային կայան այլ նորմերի հետ

Ա. Դատախազության անկախության մասին: Սահմանադրությունում դատախազության անկախության մասին դրույթի ամրագրումը, ինչպես նաև քրեական հետապնդման հարուցման և դադարեցման՝ կիսադատական գործառույթները բացառապես դատախազությանը վերապահելը կառաջացնի սահմանադրական այլ նորմերի փոփոխության կամ նոր նորմերի սահմանման անհրաժեշտություն:

(1) Գլխավոր դատախազի վերանշանակման (վերընտրման) հնարավորության վերացումը և պաշտոնավարման ժամկետի երկարացումը: Դատախազության իրական անկախության ապահովման նպատակով անհրաժեշտ է ապահովել ՀՀ գլխավոր դատախազի անկախությունը քաղաքական իշխա-

նությունից, որի նպատակով պետք է՝

նախ՝ վերանայել Գլխավոր դատախազի վերանշանակման հնարավորությունը և պաշտոնավարման ժամկետը: Նկատի ունենալով, որ Գլխավոր դատախազի նշանակման գործընթացում ներգրավված է քաղաքական իշխանությունը, ուստի առաջին պաշտոնավարումից հետո կրկին վերանշանակվելու՝ Գլխավոր դատախազի ձգտումը ակամայից կախվածություն է ստեղծում նրան առաջադրող և նշանակող քաղաքական մարմիններից. հետևաբար՝ Սահմանադրության այլ նորմերում պետք է նախատեսել, որ Գլխավոր դատախազը կարող է նշանակվել մեկ անգամ՝ առանց պաշտոնավարման ժամկետը լրանալուց կամ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելուց հետո վերանշանակվելու հնարավորության³⁴:

Երկրորդ՝ Գլխավոր դատախազի վերանշանակման հնարավորության վերացման և քրեական հետապնդման ոլորտում քրեական քաղաքականության՝ հարաբերական կայունության ապահովման նպատակով Սահմանադրու-

33. Մի շարք երկրների փորձը, մասնավորապես, Բելգիա, Չեխիա, Գերմանիա, Բուլղարիա, Հունգարիա, Իռլանդիա, Էստոնիա, Դանիա, Ֆինլանդիա, Կրաստան, Շվեդիա, Շվեյցարիա և Միացյալ Թագավորություն և այլն, ցույց է տալիս, որ դատախազությունը քրեական ոլորտից դուրս օժտված է լայն լիազորություններով, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին՝ դատախազը կարող է հարուցել վարույթ՝ ամուսնությունը անվավեր ճանաչելու համար, մահացած երեխայի անունից հայրությունը չեղյալ ճանաչելու համար, եթե որպես հայր ճանաչված անձն մահացած երեխայի հայրը չէ, այն անձի անունից, որը ճանաչվել է որպես երեխայի հայր, և որն ի վիճակի չէ վարույթ հարուցելու իր հայրությունը չեղյալ հայտարարելու համար, անչափահասների որդեգրումը անվավեր ճանաչելու համար, ալիմենտի պահանջով, երեխայի խնամքի հարցով, ծնողական իրավունքից զրկելու համար, եթե անձը ցանկացած պատճառով ի վիճակի չէ պաշտպանելու սեփական իրավունքները, ինչպես նաև, եթե հիմնադրամը չի իրականացնում իր ստեղծման նպատակները կամ եթե հիմնադրամի գրանցումը ենթակա է մերժման օրենքի փոփոխության հիմքով՝ հիմնադրամը լուծարելու համար, հանրային հիմնադրամների ստեղծման օրինականությունն ապահովելու համար, եթե հիմնադրամի գործունեության օրինականությունն այլ կերպ հնարավոր չէ ապահովել, մահացած անձի կամ լուծարված իրավաբանական անձի գրպարտության դեպքում, եթե խախտվում է հանրային շահը, ցանկացած պայմանագրի պայման, որը ենթադրվում է, որ անարդար է, կարող է վիճարկվել դատախազության կողմից, պայմանագիրն առջին ճանաչելու համար, եթե այդ պայմանագիրը վսասում է հանրային շահին, եթե, բացառությամբ կուսակցությունների, հասարակական կազմակերպության գործունեության օրինականությունն այլ կերպ հնարավոր չէ ապահովել, կազմակերպության գրանցումը չեղյալ ճանաչելու համար, քաղաքացիության վկայականով հաստատված փաստերը դատարանում վիճարկելու համար, շրջակա միջավայրին վնաս հասցնելու դեպքում՝ արգելելով այդպիսի գործունեությունը կամ վնասի հատուցում պահանջելով, ցանկացած անձի դեմ վարույթ է հարուցում, որը խախտել է կենդանիների պաշտպանության օրենսդրությունը, ապրանքային նշանի գրանցման և գրանցումը չեղյալ հայտարարելու մասին, արտոնագրի տրամադրման կամ վերացման մասին որոշումը փոխելու համար, եթե դրանք առևտրային նպատակով շահագործելը հակասում է հանրային կարգին կամ բարոյականությանը, հինգ տարի շարունակ անհայտ կորած անձանց մահացած ճանաչելու համար և այլն: Տես Թ.Շաքարյան, Դատախազության սահմանադրաիրավական հիմքերի իրացման արդի ուղենիշները, «Օրինականություն» թիվ 95, 2016, էջ 24-25:

34. Գլխավոր դատախազի վերանշանակման սահմանափակումը առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծել, որ սահմանափակում է մարդու՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը: Եթե դա նույնիսկ այդպես է, ապա տվյալ պարագայում Գլխավոր դատախազի՝ քաղաքական իշխանությունից անկախ լինելու պահանջը ինքնին արդարացնում է հանրային ծառայության անցնելու իրավունքի նման սահմանափակումը: Վենետիկի հանձնաժողովը նմանատիպ հարց քննարկել է Նախագահների երրորդ անգամ վերընտրվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ և այն համարել է իրավաչափ՝ հանուն ժողովրդավարական ռեժիմների պահպանման:

թյամբ պետք է նախատեսել Դատախազի պաշտոնավարման՝ առավել երկար ժամկետ: Ընդ որում, այդ ժամկետը սահմանելիս պետք է այնպես կարգավորել, որ այն հնարավորինս չհամընկնի քաղաքական իշխանության ընտրությունների ժամկետի հետ:

(2) *Գլխավոր դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու՝ բարդացված ընթացակարգի սահմանումը:* Գլխավոր դատախազի համար իրավական պաշտպանության որոշակի երաշխիքներ, այնուհանդերձ, 2015 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում չամրագրվեցին: Դատախազության անկախության՝ սահմանադրական ամրագրման պայմաններում, պետք է նախատեսել Գլխավոր դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու տարբերակված կարգ. օրինակ՝ Գլխավոր դատախազի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել ՀՀ վճռաբեկ դատարանի երեք դատավորների նախնական վերահսկողությամբ: Ընդ որում, ցանկալի է՝ այս կարգավորումները նախատեսել Սահմանադրության տեքստում, ոչ թե թողնել օրենսդրի հայեցողությանը:

(3) *Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման հիմքերի սահմանադրական կարգավորումը:* Դատախազության անկախության երաշխավորման նպատակով Սահմանադրությամբ պետք է նախատեսել Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման սպառիչ հիմքերը: Քաղաքական իշխանությունը չպետք է հնարավորություն ունենա օրենսդրական կարգավորումները փոփոխելու եղանակով միջամտել Դատախազության գործունեությանը: Հատուկ պետք է կարգավորել Գլխավոր դատախազի պաշտոնանկության հիմքերը և կարգը:

Բ. Դատախազության լիազորությունների մասին: Դատախազության գործառույթները կամ լիազորությունները չպետք է Սահմանադրությամբ սպառիչ սահմանվեն: Սակայն Սահմանադրության մեջ պետք է ամրագրել, որ քրեական հետապնդման հարու-

ցելը (անձին որպես մեղադրյալ ներգրավելը), գործը դատարան ուղարկելը, մինչդատական վարույթի ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելը **դատախազության բացառիկ գործառույթն է:**

Սահմանադրության մեջ նախատեսել դրույթ այն մասին, որ դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու, այդ նպատակով նյութեր հավաքելու դեպքերը և կարգը սահմանվում են օրենքով:

Այս համատեքստում հարկ է հանել «բացառիկ դեպքերում» եզրույթը, ինչպես նաև պետական շահ հասկացությունը փոխարինել հանրային շահ հասկացությամբ՝ հնարավորություն տալով օրենսդրին որոշելու՝ կոնկրետ որ դեպքերում դատախազին լիազորել իրականացնելու հանրային շահերի պաշտպանությունը:

III. Քննչական մարմինների կարգավիճակի փոփոխությունները

3.1. *Առկա վիճակը և խնդիրները:* ՀՀ Սահմանադրության «Դատախազությունը և քննչական մարմինները» վերատառությամբ 8-րդ գլուխը սահմանվեց 2015 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Մինչ այդ, ՀՀ Սահմանադրության մեջ քննչական մարմինների մասին հատուկ սահմանադրական դրույթ նախատեսված չէր³⁵:

Թվում էր, որ նոր խմբագրությամբ Սահմանադրությունն ազդարարելու էր գործադիր իշխանության մարմինների համակարգից քննչական մարմինների (ստորաբաժանումների) դուրս բերման գործընթացը, մինչդեռ ՀՀ-ում առայսօր ինստիտուցիոնալ տեսանկյունից շարունակում են գործել երկու տեսակի քննչական մարմիններ (ստորաբաժանումներ)՝ գործադիր իշխանության համակարգում գործող (ԱԱԾ և ՊԵԿ քննչական ստորաբաժանումներ) և գործադիր իշխանությունից դուրս գործող քննչական մարմիններ (Քննչական կոմիտե (այսուհետ՝ ՔԿ) ու Հատուկ քննչական ծառայություն (այսուհետ՝ ՀՔԾ):

Քննչական մարմինների՝ գործադիր իշխանությունից անկախ մարմնի ինստիտուցիո-

35. ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի համաձայն՝ քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը: Քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

նալ առանձնացումն արդարացված է քրեա-դատավարական հարթությունում քննչական մարմինների կիսադատական գործառույթների առկայությամբ: Քննչական մարմինների կիսա-դատական բնույթի գործառույթին օտար է վարչաիրավական ենթակայությունը, մինչդեռ պետական կառավարման մարմիններին ներ-հատուկ է վարչաիրավական ենթակայության հարաբերությունները:

Այս տրամաբանությունն ամբողջ ծավա-լով իրացնելու դեպքում քննչական բոլոր մարմինները պետք է դուրս բերվեին պետական կառավարման համակարգից:

Առաջին՝ պետական կառավարման և քննչական մարմինների տարանջատվածու-թյունը ՀՀ Սահմանադրության կառուցվածքի *տեսանկյունից*: Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանա-դրությամբ դատախազության և քննչական մարմինների վերաբերյալ սահմանադրական նորմերն առանձնացված են ինչպես գործադիր իշխանության, այնպես էլ դատական իշխանու-թյան մարմինների վերաբերյալ գլուխներից, դատախազությանը և քննչական մարմիններին նվիրված է առանձին գլուխ: ՀՀ Սահմանա-դրության կառուցվածքը թեև ունի առավելապես իրավատեսիսիկական նշանակություն, սակայն ի թիվս այլ հանգամանքների, Սահմանա-դրության կառուցվածքի տրամաբանությունից կարելի է բխեցնել, որ դատախազությունը և նախաքննության մարմինները պետական կա-ռավարման մարմինների համակարգից դուրս գործող մարմիններ են:

Երկրորդ՝ պետական կառավարման հա-մակարգի և քննչական մարմինների տարան-ջատվածությունը պաշտոնատար անձանց հարթությունում: ՀՀ Սահմանադրությամբ պե-տական կառավարման և քննչական մարմին-ները միմյանցից տարանջատված են ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև պաշտոնատար ան-ձանց հարթությունում: Այսպես՝ ՀՀ Սահմանա-դրության 44-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զին-ված ուժերում, ազգային անվտանգության, ոս-տիկանության և այլ ռազմականացված մար-միններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահ-մանափակումներ: Ինչպես նկատում ենք, ՀՀ Սահմանադրությամբ տարանջատված է դա-

տարաններում, դատախազությունում և քնն-չական մարմիններում պաշտոնները զբաղեց-նող անձանց և պետական կառավարման՝ ռազմականացված մարմինների ծառայողների՝ կոնկրետ իրավունքի սահմանափակման իրա-վական կարգավորումը:

Ավելին, ՀՀ Սահմանադրությամբ նշված պաշտոնատար անձանց առանձին իրավունք-ների սահմանափակման հարցերի՝ տարբերակ-ված կարգավորումը կրում է սկզբունքային բնույթ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավոր-ները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազ-մականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ: Ինչպես նկատում ենք, դատավորի, դատախազի և քննիչի՝ կու-սակցության անդամ լինելու իրավունքը հս-տակ սահմանափակված է սահմանադրական արգելքով, իսկ պետական կառավարման՝ ռազմականացված մարմինների ծառայողների համար կուսակցության անդամագրվելու իրա-վունքի հնարավոր սահմանափակումը թողն-ված է օրենսդրի հայեցողությանը: Գործնա-կանում հնարավոր է, օրինակ, որ օրենսդիրը չսահմանափակի ազգային անվտանգության մարմինի ծառայողների՝ կուսակցության անդա-մագրվելու իրավունքը, մինչդեռ ազգային ան-վտանգության համակարգում գործող քննիչ-ների համար նման արգելքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ: Նման պայմաններում կստեղծվի ազգային անվտանգության ծառա-յողների կարգավիճակի երկվություն:

3.2. Առաջարկվող փոփոխությունների ընդհանուր նկարագրությունը: Քննչական մար-մինները, ազատվելով իրենց ոչ հատուկ կիսա-դատական բնույթի գործունեությունից (քրեա-կան հետապնդումը դադարեցնելը), իրականացնելու են դասական քրեական-ոս-տիկանական գործունեություն՝ ապացույցների հավաքում, որն իր բնույթով գործադիր գոր-ծունեություն է: Նման պայմաններում վերա-նում է քննչական մարմինների՝ գործադիր իշխանությունից առանձնացնելու անհրաժեշ-տությունը:

3.3. Հիմնավորումները

Ա. Պատմաիրավական տեսանկյունը:

Քննչական մարմինների՝ գործադիր իշխանությունից սահմանադրական հարթությունում առանձնացման կամ ստորադասության սկզբունքի հիման վրա գործող քննիչի դատավարական ինքնուրույնության՝ օրենսդրական ճանաչման իրականության հետ օբյեկտիվորեն չկապված կեղծ գաղափարների ծագումաբանությունը գալիս է խորհրդային իրավունքից:

Ինչպես նշում է համեմատական իրավունքի՝ ռուս հայտնի մասնագետ պրոֆեսոր Լ. Գոլովկոն. «խորհրդային իրավական համակարգը, չճանաչելով իշխանության տարանջատումը, հայեցակարգային հարթությունում ամբողջությամբ միախառնել էր ոստիկանական և դատական գործառույթները՝ ոստիկանությանը վերապահելով իրենց բնույթով դատախազական և դատական գործառույթներ: Ոստիկանությունն արարքին տալիս էր իրավաբանական որակում, քրեական գործի ընթացքի վերաբերյալ կայացնում էր որոշումներ, կիրառում էր հարկադրանքի միջոցներ և այլն: Ոստիկանությանը, վերապահելով իրեն ոչ հատուկ գործառույթներ, խորհրդային իրավունքը տեսական հարթությունում նենգափոխել էր ոստիկանության, դատախազության և դատարանի ինստիտուցիոնալ տարանջատումը տարբեր տեսակի «քննիչ», «հետաքննիչ», «քննչական բաժնի պետ», «օպերատիվ-հետախուզական ծառայություն» և «քննության մարմին» կեղծ-դատավարական տարբերակումներով (դիֆերենցացիաներով՝ Ա.Դ.): Այս հիմքով ծագել են բազմաթիվ չփարատված հակասություններ «քննիչի դատավարական ինքնուրույնության» և գերատեսչական հիերարխիկ վերահսկողության միջև, քրեաիրավական վեճն ըստ էության լուծելու (օրինակ՝ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը) լիազորության պատկանելիության հարցում: Նման կեղծ-դատավարական տարբերակման ցանկացած փորձ առաջացնում է տեսական և գործնական փակուղի: Ոստիկանության՝ այս կամ այն ներկայացուցիչը, ինչպես էլ որ այն կոչվի (քննիչ, հետաքննիչ և այլն) նա իրավասու է իրակա-

նացնել միայն քրեական-ոստիկանական գործունեություն՝ իր ողջ գենետիկ սահմանափակումների պահպանմամբ:

Ինստիտուցիոնալ հարթությունում հայեցակարգային առումով չկա և չպետք է լինի ոչ «քննության մարմին», ոչ էլ «հետաքննության մարմին». առկա է միայն քրեական ոստիկանություն: Այս իմաստով «քննչական կոմիտեի» ստեղծման գաղափարը պետք է գնահատել բացառապես նոր ոստիկանական գերատեսչություն ստեղծելու տեխնիկական անհրաժեշտության առկայության կամ բացակայության պրիզմայով: Քննչական կոմիտեն ոչ այլ ինչ է, քան «ոստիկանական գերատեսչություն»³⁶:

Բ. Իրավահամեմատական տեսանկյունը:

Իրավահամեմատական տեսանկյունից Սահմանադրությամբ առանձին քննչական մարմիններ, ինչպես օրինակ քննչական կոմիտեն է, ունենալու հստակ օրինաչափություն առկա չէ: Եվրոպական երկրներում քննությունը, որն ազատված է կիսադատական տարրից, դիտվում է որպես ոստիկանական գործունեություն և հատուկ սահմանադրական կարգավորումներ նախատեսված չեն:

Հետխորհրդային պետություններից Ռուսաստանի Դաշնությունը և Բելառուսի Հանրապետությունը թեև ունեն ԲԿ, սակայն Սահմանադրության տեքստում քննչական մարմինների վերաբերյալ հատուկ սահմանադրական նորմ նախատեսված չէ:

Գ. Քննչական գործունեությունը (ապացույցների հավաքումը) - ոստիկանական գործունեություն:

Քրեական արդարադատության համակարգը (նրա պետական հատվածամասը) պետք է կառուցել երեք ինստիտուցիոնալ տարրերի՝ ոստիկանության, դատախազության և դատարանների գործառույթների տարանջատման հիման վրա: Այս իրավիճակում ոստիկանությունը հավաքում է ապացույցներ, իսկ դատախազությունը, ոստիկանության հավաքած ապացույցների հիման վրա արարքին տալիս է իրավական գնահատական և լուծում է դատարանում քրեական հետապնդում հարուցելու կամ հետապնդումը դադարեցնելու հարցը: Ոստիկանական գործունեությունը տարբերվում է դատախազական գործունեությունից

36. Головки Л. В. Реформа полиции в контексте модернизации предварительного производства в российском уголовном процессе // <https://www.iuaj.net/node/484>.

այն իորդությամբ, որ առաջինի բուն էությունն ապացույցների հավաքման գործընթացն է, իսկ դատախազությանը՝ արարքներին իրավաբանական որակում տալը, քրեական գործի հետագա ընթացքի վերաբերյալ որոշումներ կայացնելը և այլն³⁷:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունից հետո ակնկալվում էր, որ քննչական բոլոր մարմինները (ստորաբաժանումները) պետք է դուրս բերվեին պետական կառավարման համակարգից, մինչդեռ այս ժամանակահատվածում ԱԱԾ և ՊԵԿ քննչական ստորաբաժանումները ոչ միայն պահպանվեցին գործադիր իշխանության համակարգում, այլ իրավական քաղաքականություն մշակող սուբյեկտների հայեցակարգային ընկալումներում է ապագայում ստեղծելիք Ներքին գործերի նախարարությանը որոշ գործերով վերապահել քննության գործառույթ:

Քննչական մարմինների՝ գործադիր իշխանության համակարգից դուրս, իբրև անկախ մարմնի առանձին սահմանադրան կոնստրուկցիայի արհեստական լինելու մասին է վկայում նաև այն, որ Սահմանադրությունը չի նախատեսել քննչական մարմինների ղեկավարների նշանակման և ազատման այնպիսի կարգ, որը հատուկ է գործադիր իշխանության համակարգից դուրս գործող՝ Սահմանադրությամբ նախատեսված մյուս մարմինների համար: Այսպես, ընթացիկ օրենսդրությամբ քննչական մարմինների ղեկավարների և տեղակալների

նշանակումը և ազատումը վերապահված է գործադիր իշխանության մարմիններին: Օրինակ՝ ՔԿ նախագահին, ՀԲԾ պետին նշանակում է ՀՀ կառավարությունը՝ վարչապետի ներկայացմամբ, իսկ տեղակալներին՝ ՀՀ վարչապետը: Մինչդեռ գործադիր իշխանության համակարգից դուրս գործող Սահմանադրությամբ նախատեսված մարմինները (ՄԻՊ³⁸, ԿԸՀ անդամներ³⁹, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներ⁴⁰, Հաշվեքննիչ պալատի անդամները⁴¹, Կենտրոնական բանկի նախագահ և խորհրդի անդամներ⁴²) ձևավորվում են ոչ թե գործադիր, այլ օրենսդիր իշխանության կողմից:

Նշվածը վկայում է այն մասին, որ իրավաքաղաքական իրականությունը նույնպես չարձագանքեց գործադիր իշխանությունից դուրս քննչական մարմինների ստեղծման՝ արհեստական կոնստրուկցիային: Ավելին, քննության գործառույթից կիսադատական տարրերի զտումը և այն դատախազությանը վերապահելը լիովին իմաստագրկում է գործադիր իշխանությունից դուրս քննչական մարմնի կարգավիճակի պահպանումը:

3.4. Փոփոխության համակարգային կապն այլ նորմերի հետ: Քննչական գործունեության բովանդակությունն ապացույցների հավաքումն է, որը կազմում է քրեական ոստիկանության բուն էությունը: Ուստի, քննչական մարմինների մասին սահմանադրական դրույթը կարող է հանվել կամ տեղափոխվել գործադիր

37. Այս մասին մանրամասն տե՛ս **Головко Л. В.** Реформа полиции в контексте модернизации предварительного производства в российском уголовном процессе // <https://www.iuaj.net/node/484>.

38. Մարդու իրավունքների պաշտպանին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

39. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

40. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

41. Հաշվեքննիչ պալատի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

42. Կենտրոնական բանկի նախագահին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական բանկի նախագահ: Կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով:

իշխանության մարմիններին նվիրված գլուխ: Սահմանադրության 8-րդ գլուխը պետք է վերախմբագրել՝ «Դատախազությունը» վերտառությամբ:

Մարդու իրավունքների գլխում քննիչների վերաբերյալ նորմերը պետք է վերացնել այնքանով, որքանով դրանք գործելու են ռազմականացված մարմինների համակարգում:

Եզրահանգումներ: Այսպիսով առաջարկվում է սահմանադրորեն ամրագրել, որ դատախազությունն անկախ և միասնական պետական մարմին է, որն իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է Սահմանադրությանը և օրենքներին:

Առաջարկվող փոփոխությունները միտված են դատախազության՝ քաղաքական իշխանությունից անկախության ապահովմանը: Դատախազության անկախության սահմանադրական ամրագրման պարագայում կբացառվի նաև անհատական գործերի քննարկումն իշխանության առանձին ներկայացուցիչների հետ. պետք է վերանայել նաև տարիներ շարունակ ձևավորված պրակտիկան, որի համաձայն՝ Գլխավոր դատախազն առանց որևէ հատուկ անհրաժեշտության, ներկա է գտնվում Կառավարության նիստերին: Դատախազության գործառույթները կամ լիազորությունները չպետք է Սահմանադրությամբ սպառիչ սահմանվեն: Սակայն, Սահմանադրության մեջ պետք է ամրագրել, որ քրեա-

կան հետապնդման հարուցումը (անձին որպես մեղադրյալ ներգրավելը), գործը դատարան ուղարկելը, մինչդատական վարույթի ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելը դատախազության բացառիկ գործառույթն է:

Սահմանադրության մեջ նախատեսել դրույթ այն մասին, որ դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու, այդ նպատակով նյութեր հավաքելու դեպքերը և կարգը սահմանվում են օրենքով: Այս համատեքստում հարկ է հանել «բացառիկ դեպքերում» եզրույթը, ինչպես նաև պետական շահ հասկացությունը փոխարինել հանրային շահ հասկացությամբ՝ հնարավորություն տալով օրենսդրին որոշելու՝ կոնկրետ որ դեպքերում դատախազին լիազորել իրականացնելու հանրային շահերի պաշտպանությունը:

Քննչական մարմինների մասին սահմանադրական դրույթը կարող է հանվել կամ տեղափոխվել գործադիր իշխանության մարմիններին նվիրված գլուխ, իսկ Սահմանադրության 8-րդ գլուխը պետք է վերախմբագրել «Դատախազությունը» վերտառությամբ: Այս փոփոխության արդյունքում ոստիկանական գերատեսչության կողմից քրեական ոլորտում ապացույցների հավաքման գործունեությունը կսահմանազատվի դատախազական կամ դատական բնույթի գործառույթներից:



ՍԱՐԳԻՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ

**ՕՐԵՆՍՊԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՈՒՄ**

Պետության սահմանադրական անվտանգության ապահովումը ենթադրում է պետական իշխանության մարմինների այնպիսի համակարգի ստեղծում, որի համար այդ մարմինները լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Անշուշտ, այդպիսի անվտանգության ապահովման երաշխավորման նպատակով առանցքային դերակատարում ունի օրենսդիր մարմինը:

Սահմանադրության 1-ին հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության հռչակումն ինքնին կանխորոշում է պետականության զարգացման նպատակը: Այսպես, օրինակ, իրավական պետության հիմքում ընկած օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի շնորհիվ պետական իշխանության համակարգում ստեղծվում է այդ իշխանության մարմինների միջև այնպիսի փոխհարաբերություն, որը հնարավորություն է տալիս մի կողմից զսպել և մյուս կողմից վերահսկել մյուսանց՝ չթուլատրելով մի անձի կամ համակարգի ձեռքում կենտրոնացնել իշխանությունը:

Այս առումով իշխանության բաժանման համակարգում օրենսդիր իշխանության մարմնի գերիշխող դիրքը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործադիր և դատական իշխանությունները, լինելով անկախ իրենց լիազորությունների իրականացման տեսանկյունից, կարող են գործել միայն գործող իրավունքի

սահմաններում՝ խորհրդարանի իրավաստեղծ գործունեության արդյունքում¹: Մասնավորապես, հենց այս հանգամանքով է հիմնավորվում Ազգային ժողովի՝ որպես խորհրդարանի (պառլամենտի) հատուկ դերակատարությունը:

Սակայն ասվածի համատեքստում պառլամենտարիզմի զարգացման աստիճանը, առաջին հերթին, պետք է որոշվի օրենսդիր իշխանության իրականացման և գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության ընթացքում խորհրդարանի ինքնուրույնության աստիճանով: Այսպես, եթե իշխանության բաժանումը և պառլամենտարիզմը փոխկապակցված պետաիրավական երևույթներ են, ապա պետությունում նույն պառլամենտարիզմի զարգացման բնույթը անմիջականորեն բխում է իշխանության բաժանման սկզբունքի՝ փաստացի իրացման վիճակի բովանդակությունից:

Ոչ ոք կասկածի տակ չի դնում այն հանգամանքը, որ իշխանության բաժանման մեխանիզմում միայն խորհրդարանն իրավունք ունի իրականացնել օրենսդիր իշխանություն. ավելին, միայն խորհրդարանն է օժտված Սահմանադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում ամբողջական և ոչնչով չսահմանափակված օրենսդիր բնագավառի իրավասությամբ²: Միաժամանակ, անհերքելի է նաև այն իրողությունը, որ պետության կառավարման ձևի կարգավիճակից են բխում օրենսդիր իշխանության մարմնի կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև այդ մարմնի հետ բնակչության փոխհարաբերությունների բնույթը³:

1. Научно-практический комментарий к Конституции РФ. Указ. Соч. С. 70.
2. Козлова Е. И., Кутафин О. Е., Конституционное право России. 2005. С. 418.
3. Усфнов В. Е. Разделение властей как основа конституционного строя и его роль в формировании парламентаризма в современной России. // Государство и право. 2005. №12. Ст. 13-14

Օրինաստեղծ և խորհրդարանական վերահսկողության գործառույթների իրականացմամբ խորհրդարանին հնարավորություն է տրվում ակտիվ մասնակցություն ունենալ պետության սահմանադրական անվտանգության ապահովման գործում: Եվ դա բնական է, քանի որ միայն խորհրդարանն է կոչված հասարակության պահանջարկի ուսումնասիրության և հասարակական զարգացման ընկալման միջոցով իրականացնելու օրենսդիր գործունեություն: Բացի այդ, հենց օրենքի կամ օրենքի հիման վրա նորմատիվ այլ իրավական ակտի ընդունման համար հիմնական ազդակ են հասարակական նշանակալի խնդիրները, սոցիալական իրավիճակը, պետության անվտանգության սպառնալիքները, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների պաշտպանության ու պետության համար նշանակություն ունեցող յուրաքանչյուր չլուծված հարց և այլն:

Սակայն անհրաժեշտ է նկատել, որ սահմանադրական անվտանգության ապահովման համակարգում օրենսդիր իշխանության տեղն ու դերը որոշվում է սահմանադրական նորմերի իրականացման մասնակցությամբ, պետության և հասարակության գործունեության ընթացքում ծագող անհրաժեշտ իրավահարաբերությունների՝ մանրակրկիտ կանոնակարգման, ինչպես նաև պետության անվտանգությանն ուղղված տարաբնույթ սպառնալիքները չեզոքացնելու նպատակով համապատասխան օրենքների ընդունման եղանակով: Ավելին, խորհրդարանը համապատասխան օրենքների ընդունմամբ կանոնակարգում է պետական իշխանության բոլոր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և իշխանության տարբեր մակարդակի մարմինների պաշտոնատար անձանց փոխհամագործակցությունը:

Այստեղից հետևություն՝ յուրաքանչյուր սոցիալական հասարակության զարգացում իրենից ներկայացնում է բարդ և հակասական գործընթաց, որի կենսագործման որոշակի ժամանակահատվածում տեղի է ունենում տարաբնույթ հակասությունների խորացում (սոցիալական, տեխնաճին, բնական և այլ): Դա կարող է բերել պետության անվտանգության, հասարակության և անձնական շահերի՝ տարաբնույթ

վտանգի սպառնալիքի առաջացման, որի կանխարգելման գործում կարևոր դերը պատկանում է իրավունքին: Հենց իրավունքը, հանդես գալով որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ, մարդուն, հասարակությանը և պետությանը սպառնացող արտակարգ իրավիճակի հետևանքների կանխարգելման կամ չեզոքացման համար նախատեսում է անհրաժեշտ համակարգային միջոցների կիրառում տնտեսական, քաղաքական, վարչական, զինվորական, իրավական, գաղափարախոսական և այլ բնագավառներում:

Անդրադառնալով այս հիմնախնդրի հետազոտության տեսական նշանակությանը՝ արդարացիորեն անհրաժեշտ է մեջբերել պրոֆեսոր Վ. Օ. Լուչինի այն խոսքը, ըստ որի՝ «Սահմանադրական սկզբունքների և նորմերի հստակեցումը գործող օրենսդրության մեջ, որպես դրանց իրացման միջոց, իրականացվում է սահմանադրական ընդհանուր պահանջների փոխակերպման և առանձին տեսակի սոցիալական սուբյեկտներին վերաբերելի օրենսդրությունում ամրագրման եղանակով, տեղի է ունենում վերափոխում, սահմանադրական սկզբունքների փոխադրում բարձր աստիճանի վերացականությունից մեկ այլ տեխնոլոգիական աստիճանի, որի արդյունքում սահմանադրական սկզբունքների իմաստն արտահայտող հիմնական պահանջները ձեռք են բերում համապատասխան սուբյեկտների իրավունքները և պարտականությունները սահմանող տեսք»⁴:

Օրենսդիր մարմնի օրինաստեղծ լիազորությունների կարևորագույն դերը դրսևորվում է նաև պետության անվտանգությանն ուղղված տարաբնույթ սպառնալիքների՝ վաղաժամ կամ կանխարգելիչ հնարավոր միջոցների կառավարման անհրաժեշտությամբ: Հայաստանի Հանրապետության և ընդհանրապես միջազգային հանրության ժամանակակից զարգացման, դրանց անվտանգության սպառնալիքների բնույթը ենթադրում է, որ համապատասխան օրենսդրությունը պետք է դիտարկել որպես նորմատիվ ակտերի համակցություն, որն օժտված է ներքին կազմակերպական միասնությամբ և համակարգային բնույթով:

Պետության անվտանգության ապահովման բնագավառում որպես օրենսդրության

4. Лучин В. О. Конституция Российской Федерации. Проблемы реализации. Указ. Соч. С.79.

օբյեկտներ հանդես են գալիս հասարակական հարաբերությունները, որոնք դրված են անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովմանն ուղղված պետական մեխանիզմի գործունեության գործընթացում: Սպառնալիքի տեսակից և բնույթից կախված՝ դրանք գործնականում կարող են առաջանալ հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում, իսկ դա հատուկ պահանջներ է ներկայացնում օրենսդիր իշխանության մարմնի գործունեությանը: Իրավական ներգործության հիմնական օբյեկտներ պետք է դիտարկել հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են պետության կողմից իրավապահ գործառույթի իրացման ընթացքում, սակայն, միևնույն ժամանակ, պետության սահմանադրական անվտանգության սպառնալիքների՝ հատկապես դրանց յուրահատուկ բնույթը բերում է այնպիսի մի վիճակի, որ օրենսդիր իշխանության մարմնի՝ կարգավորող ազդեցության տակ են ընկնում պետության այլ գործառույթներ՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, գաղափարախոսական:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական անվտանգության սպառնալիքները կարող են կրել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթ, անհրաժեշտ է նշել, որ ցանկացած պետություն տարաբնույթ պատճառներով կարող է բախվել երկրի քաղաքական իրավիճակի ապակայունացմանը, իսկ դա, իր հերթին, ենթադրում է պետության քաղաքական մեխանիզմի գործունեության ընթացքում ճգնաժամային իրավիճակի՝ հնարավոր կարգավորմանն ուղղված օրենսդիր իշխանության մարմնի համապատասխան գործունեություն, ինչը նշանակում է նաև, որ քաղաքական դաշտում անխուսափելիորեն կառաջանան որոշակի բնույթի հակասություններ, որոնք վերաբերելի կլինեն պետական իշխանության բոլոր մարմիններին:

Քաղաքական հարաբերությունների չկարգավորումը նեգատիվ ազդեցություն է ունենում երկրի տնտեսական իրավիճակի վրա: Ներկա ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունը չի կարելի դասել այն պետությունների շարքը, որոնք իրականում ապահովում են իրենց քաղաքացիների արժա-

նավայել կենսամակարդակը, իսկ դա նշանակում է, որ օբյեկտիվորեն ձևավորվում են անվտանգությանն սպառնացող գործոններ: Քաղաքական և տնտեսական բնագավառում նեգատիվ գործընթացի համակցությունն իր զարգացման սահմաններում էական ազդեցություն է գործում պետության և հասարակության նկատմամբ, քանի որ նման պայմաններում անհնարին են դառնում քաղաքական և քաղաքացիական ինստիտուտների՝ օպտիմալ գործունեությունը, տնտեսության բնականոն զարգացումը. տեղ են գտնում քաղաքացիների իրավունքների և ազատությունների՝ ամենալուրջ խախտումներ, այսինքն՝ փաստացի առաջանում է երկրի սահմանադրական անվտանգության կորստի սպառնալիք:

Այսպիսով, օրենսդիր իշխանության մարմնի՝ իրավաստեղծ իրավասությունը կարևոր դեր է խաղում սահմանադրական անվտանգության ապահովման գործընթացում, բայց օրենսդրության իրացումը, դրանց իրատեսական կիրառությունն ամբողջ պետության տարածքում հաճախ կախված է դրանց կատարման վերահսկողությունից՝ մասնավորապես Սահմանադրությամբ Ազգային ժողովին հատկացված դերից:

Ազգային ժողովի՝ խորհրդարանական վերահսկողական գործառույթը կարևոր նշանակություն ունի հատկապես պետության անվտանգությունն ապահովելու գործում, որը բխում է խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական և օրենսդիր մարմնի իրավասության բնույթից: Բացի այդ, խորհրդարանական վերահսկողությունը, ինչպես նշել է պրոֆեսոր Դ. Ա. Կովաչովը, չի սահմանափակվում միայն պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության օրինականության վերահսկողությամբ. այն ընդգրկում է նաև պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նպատակահարմարությանը վերաբերող՝ խորհրդարանի վերահսկողական լիազորությունը⁵: Այստեղից հետևում է, որ, փաստորեն, խորհրդարանի վերահսկողական լիազորություններից է կախված նրա իրական տեղը պետական իշխանության մարմինների համակարգում:

Վերը նշվածի համատեքստում անհրա-

5. Институты конституционного права иностранных государств. –М. 2002. С. 256.

ժեշտ է կարևորել, մասնավորապես, Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների նշանակությունը պետության սահմանադրական անվտանգության ապահովման բնագավառում:

1. ՀՀ Ազգային ժողովն ակտիվ մասնակցություն ունի պետական իշխանության մարմինների ձևավորման գործընթացում:

Հայաստանի Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից: Հանրապետության նախագահն անհապաղ ՀՀ վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին, նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ գլխավոր դատախազին, ընտրում է ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորներին, բարձրագույն դատական խորհրդի ներկայացմամբ ընտրում է վճռաբեկ դատարանի նախագահին, ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահին և անդամներին, ՀՀ կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի անդամներին, մարդու իրավունքների պաշտպանին:

2. Նախաձեռնում և իրականացնում է ՀՀ նախագահի պաշտոնանկությունը:

Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը դիմում է Սահմանադրական դատարան: Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա:

3. ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական գործառույթը գործադիր իշխանության մարմնի նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է «Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն»:

Ազգային ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ:

Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

Ազգային ժողովը, Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ, քննարկում և

որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ (ՀՀ Սահմանադրության 110-111-րդ հոդվածներ):

4. ՀՀ Ազգային ժողովի կարևոր վերահսկողական լիազորություններից է ՀՀ վարչապետին անվստահություն հայտնելու իրավունքը (ՀՀ Սահմանադրության 115-րդ հոդված):

5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական անվտանգության ապահովման համակարգում ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների ձևերից է ՀՀ կառավարության կողմից ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու որոշման հաստատումը:

ՀՀ Սահմանադրության 119-րդ և 120-րդ հոդվածների 3-րդ մասերը սահմանում են, որ Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական, արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական, արտակարգ դրության՝ իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:

ՀՀ կառավարության կողմից ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու որոշման հաստատումը ՀՀ Ազգային ժողովի կողմից ունի հետևյալ պատճառաբանությունը. քանի որ ճգնաժամային և արտակարգ վիճակները հնարավոր չէ մանրակրկիտ կանխատեսել, ուստի անհրաժեշտություն է առաջանում գործադիր իշխանությանը վերապահել միանգամայն լայն և ոչ հստակ մի քանի լիազորություն: Դա կարող է բերել այնպիսի իրավիճակի, երբ գործադիր իշխանությունն արտակարգ դրության ռեժիմի ապահովման ընթացքում, ձգտելով կարճ ժամկետում կարգավորել ստեղծված իրավիճակը, խախտում է օրենքը. ավելին, այդ վիճակում օրենքով նախատեսված կարգով սահմանափակվում են պետական իշխանության մարմինների լիազորությունները և հայտարարված տարածքում բնակվող կամ գտնվող քաղաքացիների սահմանադրական որոշակի իրավունքներն ու ազատությունները: Արդյունքում, գործադիր իշխանության մարմինների նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունն անհրաժեշտ պայման է արտակարգ դրության իրավական ինստիտուտի գործունեու-

թյան համար: Արտակարգ դրության առաջացման պայմաններում օրենսդիր մարմինն իրավունք չունի կաշկանդելու գործադիր մարմնի՝ արագ կարգավորման հնարավորությունը, սակայն պարտավոր է կարգավորել գործադիր իշխանության ղեկավարի լիազորությունների ծավալը, հաստատել, փոփոխել կամ չերկարացնել արտակարգ դրությունը և միաժամանակ խիստ վերահսկել գործադիր իշխանության բոլոր թույլատրելի արձագանքներն արտակարգ հանգամանքներում: Այսինքն՝ այս դեպքում ՀՀ Ազգային ժողովը փաստացիորեն ստանձնում է զսպող և կայունացնող դեր առաջացած արտակարգ իրավիճակի կառավարման մեխանիզմում:

6. Հայաստանի Հանրապետության սահմանադրական անվտանգության ապահովման գործընթացին օրենսդիր իշխանության մասնակցության ձևերից մեկն է ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում ՀՀ Ազգային ժողովին ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի վերապահումը՝ իշխանության՝ տարբեր մակարդակի նորմատիվ իրավական ակտերի, ուժի մեջ չմտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցը որոշելու համար: Գործի քննության համար հիմք են հանդիսանում անորոշության հայտնաբերումը, օրենքի կամ այլ նորմատիվ ակտի համապատասխանությունը Սահմանադրությանը, սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առումով առաջացած վեճը:

Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության մարմինները պետության սահմանադրական անվտանգության ապահովման գործընթացում վերը քննարկված վերահս-

կողական լիազորություններն իրացնում են ինքնուրույն և անմիջապես իրենք՝ համապատասխան իրավական ձևերով: Բացի այդ, օրենսդիր իշխանությունը վերահսկողական լիազորությունների մի մասն իրացնում է անուղղակիորեն՝ ստեղծելով խորհրդարանական վերահսկողության հատուկ մարմիններ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության մարմինները կարևոր դերակատարություն ունեն պետության սահմանադրական անվտանգության ապահովման գործում, Սահմանադրությամբ վերապահված լիազորություններն իրացնում են ինչպես ուղղակի, այնպես էլ իրենց կողմից ստեղծված խորհրդարանական վերահսկողության հատուկ մարմինների միջոցով:

Այնուամենայնիվ, նշված լիազորությունների, դրանց իրացման պայմանների և եղանակների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անհրաժեշտ է ընդլայնել և իրատեսորեն ավելացնել օրենսդիր իշխանության մարմինների՝ կոնկրետ լիազորությունները: Այս առումով նպատակահարմար է փոփոխության ենթարկել ՀՀ կառավարության ձևավորման կարգը և նրա լիազորությունների մի մասը փոխանցել Ազգային ժողովին: Ներկայումս հանրապետությունում քաղաքական իրավիճակը կտրուկ փոխվել է, որից ելնելով, կարճես թե, առկա են բոլոր նախապայմանները՝ օրենսդրական և ներկայացուցչական մարմնի դերը բարձրացնելու համար: Օրենսդիր իշխանության մարմնի՝ վերահսկողական գործառույթի ընդլայնումը կարող է կարևորագույն քայլ դառնալ ինչպես խորհրդարանի օրենսդրական գործունեության՝ օրենքների ընդունման, այնպես էլ անձի, հասարակության և պետության անվտանգության՝ իրական ապահովման կատարելագործման գործընթացում:



ՍՅՈՒՋԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ
վարույթների իրականացման բաժնի մաքսային տեսուչ

**ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎԱԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում մաքսային գործը՝ որպես կապող օղակ պետության և արտաքին տնտեսական գործունեության մյուս մասնակիցների միջև, ստեղծում է փոխգործակցության և փոխկապակցվածության հատուկ հարաբերություններ: Պետությունների արտաքին տնտեսական համագործակցությունն իրականացվում է Եվրոպական և Եվրասիական տնտեսական միությունների ակտիվ մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է միասնական մաքսային քաղաքականություն, որն արտաքին և ներքին տնտեսական քաղաքականությունների անբաժանելի մասն է և մեծ դեր է կատարում այլ երկրների հետ առևտրային հարաբերությունների ձևավորման ու զարգացման գործում¹: ՀՀ մաքսային քաղաքականության հիմնական խնդիրներից են արտաքին տնտեսական գործունեության մաքսասակագնային կարգավորման մեխանիզմի, մաքսային մարմինների՝ իրավանորմատիվային հիմքի կատարելագործումը, մաքսային օրենսդրության դրույթների կիրառումը և վերջիններիս նկատմամբ վերահսկումը, համագործակցության ապահովումն օտարերկրյա պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների հետ, մաքսային գործի վերլուծման, հետազոտման իրականացումը²:

Մաքսային քաղաքականությունը համարվում է մաքսային գործի հիմքը: Մաքսային քաղաքականության իրականացման հիմնական միջոցներն են մաքսային հսկողությունը,

մաքսային ձևակերպումը, սակագնային և ոչ սակագնային կարգավորման միջոցները:

Պետք է նշել, որ մաքսային համակարգն իր էությանը դիմամիկ զարգացող կառուցակարգ է. այսինքն՝ տնտեսական նոր որակի հարաբերությունների անցնելիս ենթադրվում են համապատասխան փոփոխություններ ինչպես մաքսային քաղաքականության նպատակներում, այնպես էլ խնդիրներում³: Անկախ Հայաստանի մաքսային համակարգը ստեղծվել է 1992 թ. հունվարի 4-ին ՀՀ նախագահի հրամանագրով⁴: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործն ընդգրկում է ինչպես ԵԱՏՄ մաքսային, այնպես էլ Հայաստանի Հանրապետության սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգն ու պայմանները, մաքսային վճարների գանձումը, մաքսային ձևակերպումները, մաքսային հսկողությունը և մաքսային քաղաքականության իրագործման այլ միջոցներ⁵:

Այդ հարաբերությունները հանրային հարաբերություններ են, քանի որ դրանք կարգավորող և մասնակիցը պետությունն է: Վճարել դատարանը գտնում է, որ հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ձևավորված շփումներում⁶: Լինելով հանրային հարաբերություն՝ **մաքսային իրավահարաբերությունը բնորոշ-**

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

1. Սուքիասյան Գ. Ա., Սուքիասյան Ն. Գ., Մաքսային իրավունք, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար: Երևան, հեղ. իրատ., 2016, 470 էջ:
2. www.petekamutner.am.
3. Գրիգորյան Ռ. Լ., Մաքսային գործ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012, 107 էջ:
4. ՀՀ նախագահի հրամանագիրը Հայաստանի Հանրապետության մաքսային վարչություն ստեղծելու մասին: Հրաման ՆՀ-58, ուժի մեջ է մտել 04.01.1992 թ.:
5. Տե՛ս «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-241-Ն՝ ընդունված 17.12.2014 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015: ՀՀ ՊՏ 2014.12.30/76 (1089).1 Հոդ.1253.30:
6. Տե՛ս «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-241-Ն՝ ընդունված 17.12.2014 թ., ուժի մեջ է մտել 02.01.2015: ՀՀ ՊՏ 2014.12.30/76 (1089).1 Հոդ.1253.30:

վում է որպես այնպիսի հասարակական հարաբերություն, որը կազմում է մաքսային գործի համապատասխան տարր, մտնում նրա կառուցվածքի մեջ և կարգավորվում է մաքսաիրավական նորմերով:

Ցանկացած իրավահարաբերության՝ այդ թվում մաքսայինին ներհատուկ են երեք հիմնական կառուցվածքային տարրեր. ա) մաքսային իրավունքի սուբյեկտներ (մաքսային իրավահարաբերության մասնակիցներ), բ) մաքսային իրավահարաբերության օբյեկտներ, գ) այդ իրավահարաբերության բովանդակություն:

• Մաքսային իրավահարաբերություններում կարևոր դեր ունեն **մաքսային ձևակերպումները**, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխումը ՀՀ մաքսային սահմանով: ԱՏԳ-ն և, առաջին հերթին, արտաքին առևտուրը կապված են մաքսային սահմանով ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման հետ, որի ընթացքում դրանք ենթակա են մաքսային ձևակերպման և հսկողության: ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և այլ առարկաների տեղափոխման նկատմամբ մաքսային հսկողության պահովման, դրանք մաքսային տարածք ներմուծելու, մաքսային սահմանից արտահանելու և ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրման պետական ու տնտեսական կարգավորման միջոցների կիրառումն ապահովելու նպատակով մաքսատան կամ մաքսային կետի պաշտոնատար անձինք կատարում են մաքսային ձևակերպման գործողություններ, որոնց իրականացման կարգը սահմանված է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում, ՀՀ մաքսային օրենսգրքում, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում և օրենսդրական այլ ակտերում:

Մասնագիտական գրականության մեջ մաքսային ձևակերպումը բնորոշվում է որպես ապրանքների և տրանսպորտային միջոցների

բացթողման համար անհրաժեշտ, որոշակի հաջորդական գործողությունների և միջոցառումների ամբողջություն⁷: Մեկ այլ սահմանմամբ՝ մաքսային ձևակերպումը ներկայացվում է որպես ապրանքների և տրանսպորտային միջոցների՝ որոշակի մաքսային ընթացակարգով մաքսային սահմանով տեղափոխման և տվյալ ընթացակարգի գործողության ավարտման ընթացակարգ: Մեր կարծիքով՝ մաքսային ձևակերպումները մաքսային կանոնների ամբողջություն են, որոնք ուղղված են մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման նկատմամբ իրավասու մարմինների կողմից պատասխանատվության միջոցների ապահովմանը:

Ընդ որում, մաքսային ձևակերպման գործողություն ասելով՝ պետք է հասկանալ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ փաստաթղթային և բեռնային բոլոր գործողությունների ամբողջականությունը՝ ներառյալ հայտարարագրումը և զննումը, մաքսային վճարումների կատարումը⁸:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի 35-րդ մասի համաձայն՝ մաքսային հայտարարագրումը բնորոշվում է հայտարարատուի կողմից մաքսային մարմիններին մաքսային հայտարարագրի միջոցով ապրանքների վերաբերյալ տվյալների, մաքսային ընթացակարգի վերաբերյալ և (կամ) այլ տեղեկությունների հայտագրում՝ անհրաժեշտ ապրանքների բացթողման համար⁹:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ: Առկա կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ գործող օրենսդրությամբ սահմանված է հայտարարագրման իրավասություն ունեցող անձանց 2 շրջանակ՝ «*հայտարարարարու՝ անձ, որը հայտարարագրում է ապրանքներ կամ որի անունից հայտարարարար*

6. Տե՛ս թիվ ԵԱԲԴ/1369/02/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թ. դեկտեմբերի 3-ի որոշումը: www.arlis.am.

7. **Сальникова А. В.**, Организация таможенного контроля товаров и транспортных средств, курс лекций, изд. во ВлГУ, 2015.

8. **Սուրիասյան Գ. Ա., Սուրիասյան Ն. Գ.**, նշվ. աշխ.:

9. ԵԱՏՄ մաքսային օրենսգրք, ընդունված 11.04.2017, ուժի մեջ է մտել 01.01.2018, ՀՀՊՏ 2018.03.12/17(1375).1:

գրվում են ապրանքներ և «մաքսային ներկայացուցիչ, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և մաքսային գործառնություններ է կատարում հայտարարարուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ: Պետք է նկատել նաև, որ «Մաքսային Միության Մաքսային Օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն¹⁰՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ հայտարարատուն կամ հայտարարատուի անունից և նրա հանձնարարությամբ գործող մաքսային ներկայացուցիչը պատասխանատվություն է կրում մաքսային արժեքի հայտարարագրում նշված ոչ հավաստի տեղեկությունների և սույն Օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված պարտականությունների չկատարման համար: Ընդ որում, այդ պատասխանատվության հիմքում ընկած է մեղքի սկզբունքը:

Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն¹¹՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

Հետևաբար՝ **մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր**, հանդիսանում է վարչական պատասխանատվության՝ իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածն անդրադարձել է վարչական իրավախախտման հասկացությանը՝ վարչական իրավախախտումը (զանցանք) բնորոշելով որպես պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման՝ սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգուշ) այնպիսի գործողություն կամ անգործություն, որի համար օրենսդրությամբ

նախատեսված է վարչական պատասխանատվություն:

ՎԻՎ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Սույն օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված են վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս պարզման ենթակա հանգամանքները. մասնավորապես, մաքսային մարմինը պարտավոր է պարզել՝

- կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում.
- արդյոք տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ.
- արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության.
- կա՞ն, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ.
- պատճառվել է, արդյոք, գույքային վնաս,
- գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ¹²:

Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ՝ անձնական պատասխանատվության սկզբունքի հետ, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի և տեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պատասխանատու սուբյեկտին¹³: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորված անձը գործում է տեղափոխողի անունից և ի շահ վեր-

10. Տե՛ս Մաքսային Միության Մաքսային Օրենսգրք ընդունված 27.11.2009, ուժի մեջ է 02.01.2015, ՀՀՊՏ 2015.01.21/3(1092) Հոդ.29:

11. Տե՛ս ՀՀ մաքսային օրենսգրքի ՀՕ-83, ընդունված 06.07.2000, ուժի մեջ է: 01.01.2001, ՀՀՊՏ 2000.08.21/19 (117):

12. Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրք, ընդունված 06.12.1985, ուժի մեջ է 01.06.1986, ՀՍՍՀԿՍ 1985/2:

13 Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը քաղաքացի Արտաշես Անտոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Մաքսային Օրենսգրքի 203-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, ՍԴՈ թիվ 920, Ընդունված: 12.10.2010. ուժի մեջ է: 12.10.2010:

ջինիս՝ համապատասխան ակտի հիման վրա տրամադրված լիազորությունների շրջանակներում, և հայտարարագրումն իրականացնում է տեղափոխողի տրամադրած տեղեկատվության հիման վրա՝ այդ լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա տեղափոխողը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձևավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատասխանատվությունը և բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ որևէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, թույլ չի տալիս արդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը. այն է՝ ապահովել տնտեսավարող սուբյեկտի կողմից Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը:

Այս խնդրի իրավակարգավորումը հետագա համակարգային և հանգամանալից բարեփոխման անհրաժեշտություն ունի: Ուստի, ելնելով վերոգրյալ իրավակարգավորումներից՝ պետք է հստակեցնել, թե ո՞վ է հանդիսանում իրավախախտման սուբյեկտ այն դեպքում, երբ պատվիրատուի և կատարողի միջև կնքված մաքսային ծառայությունների մատուցման պայմանագրով ապրանքի վերաբերյալ հավաստի տեղեկությունների ներկայացման պարտավորությունն ընկնում է որպես պատվիրատու հանդես եկող իրավաբանական անձի տնօրենի և/կամ լիազոր ներկայացուցչի վրա, սակայն վերջինիս տրամադրած ոչ հավաստի և ամբողջական տեղեկությունների հիման վրա կատարողի (մաքսային ձևակերպումների մասնագետ) կողմից սխալ հայտարարագրման պատասխանատվությունը կրում է կատարողը:

Իրավահարաբերության սուբյեկտներին անդրադառնալիս հարկ է նկատել այն փաստը, որ որպես հայտարարատու «Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգով ապրանքների ներկրման դեպքում հանդիսանում է փոխադրողը: ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝ «Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգն այնպիսի մաքսային

ընթացակարգ է, որի դեպքում ուղարկող մաքսային մարմնից նշանակման մաքսային մարմին ապրանքները փոխադրվում են առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է Միության մաքսային տարածքով, ինչպես նաև Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով օտարերկրյա և Միության ապրանքների փոխադրման համար: Այս մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը: «Հայաստանի Հանրապետության» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի 5-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքները պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակն օտարերկրյա պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքից դեպի Միության մաքսային տարածք «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխման դեպքում¹⁴:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 83-րդ հոդվածն անդրադարձել է այն հանգամանքին, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի հայտագրման դեպքում կարող են հանդես գալ փոխադրողը՝ այդ թվում նաև մաքսային փոխադրողը, առաքողը, եթե նա Մաքսային միության անդամ պետության անձ է: Միաժամանակ հստակեցրել է, որ Օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողը, անկախ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների հայտարարատուն լինելու հանգամանքից, պարտավոր է ապահովել ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետում ապրանքներն ու դրանց փաստաթղթերը հասցնել ապրանքների առաքման վայրը, ապահովել ապրանքների, մաքսային կապարակներների և կնիքների կամ նույնականացման այլ միջոցների

պահպանվածությունը, թույլ չտալ ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողությունների իրականացումը, ինչպես նաև այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումը Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում՝ առանց ուղարկող մաքսային մարմնի թույլտվության:

Մասնավորապես, ՀՀ-ում գործող օրենսդրությունը նախատեսում է երրորդ երկրից ներմուծվող բեռների հայտարարագրումը փոխադրողի, մաքսային փոխադրողի, առաքողի կողմից, մինչդեռ, մեր կարծիքով, փոխադրողին վարչական պատասխանատվության ենթարկել փոխադրվող բեռի անվանման, նկարագրության, գնի, քանակի, ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններով հայտագրման համար, համարում ենք ոչ իրավաչափ՝ նկատի ունենալով, որ վերջինս իրազեկված չէ ապրանքի տեխնիկական բնութագրի մասին և վերջինս հայտարարագրումն իրականացնում է մատակարար ընկերության տրամադրած բեռնառաքող փաստաթղթերի հիման վրա և որ փոխադրողը փաթեթավածքում առկա ապրանքի եղելությունը

չի կարող պարզել հայտարարագրի լրացման ժամանակ անկախ նախնական զննման իրավունքից օգտվելու հանգամանքից:

Միաժամանակ, ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրման կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկությունների նշման դեպքում, որի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում, որն առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50 հազար դրամի չափով:

Նշված դեպքում որպես իրավախախտման սուբյեկտ և հայտարարատու՝ պատասխանատվության է ենթարկվում փոխադրողը, մաքսային փոխադրողը կամ առաքողը տարանցման հայտարարագրի սխալ լրացման համար. մինչդեռ, կարծում ենք, որ իրավախախտման սուբյեկտ կարող է հանդիսանալ ճշգրիտ տեղեկություններ տրամադրող անձը:



14. Տե՛ս «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագիր: Տե՛ս նաև ՀՀ Սահմանադրական դատարանի N ՍԴՈ-1175 որոշումը, ընդունված 14.11.2014 թ.: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշեց՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ուսական միջազգային համալսարանի հայցորդ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ-ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Իրավունքի որակական-արժեքային հատկանիշներն իրավունքի օրգանական հատկություններն են, առանց որոնց իրավունքը որպես այդպիսին չի կարող գոյություն ունենալ, կատարել իր սոցիալական դերն ու պահպանել նշանակությունը:

Իրավունքի ուսումնասիրությունն արժեքաբանության տեսանկյունից ունի գիտական, գործնական և բարոյագիտական նշանակություն¹: Իրավական արժեքներն ունեն կարգավորիչ նշանակություն: Իրավական նորմերը, իրենց հերթին, օժտվում են արժեքային հատկանիշներով և վերածվում գնահատման օբյեկտ²: Արժեքներն արտահայտում են համոզմունք և նախապատվություն, որոնք էմպիրիկ հիմք չունեն: Ի տարբերություն գիտելիքի, արժեքները ենթակա չեն տրամաբանական հիմնավորման և փորձարարական ստուգման: Դրանք տվյալների (երևույթների) վերաբերյալ մտավոր (ինտելեկտուալ) և զգացմունքային ընկալման ելակետային պատկերացումներ են: Ընդհանրապես, արժեքաբանությունը (աքսիոլոգիա) փիլիսոփայական ուսմունք է արժեքների և գնահատականների բնույթի, մարդկային հոգևոր և առօրյա կյանքում դրանց դերի ու նշանակության մասին³:

Արժեքաբանությունը փիլիսոփայական կատեգորիա է, որն ուսումնասիրում է արժեքները որպես մարդկային կեցության իմաստավորման հիմնավորում: Արժեքաբանության

նպատակն է հետազոտել մարդկային կեցության և կոնկրետ արարքների՝ իրավացի և ոչ իրավացի շարժառիթներն ու ուղղությունները բարու և չարի, մարդկային վարքի ճանաչողության և մարդկային կեցության այլ բնագավառների համատեքստում⁴:

Արժեքաբանությունը ծագել և ձևավորվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Կանտի փիլիսոփայական, բարոյական և իրավական հայացքների հիման վրա⁵, նրա հետևորդների՝ այսպես կոչված բաղեյան կամ ֆրեյբուրգյան դպրոցի հիմնադիրներ ու առաջամարտիկներ Ներման Լոստցեի, Վիլհելմ Վինդեբանդի, Հենրիխ Ռիկերտի և այլոց աշխատություններում: Թեև արժեքների ու գնահատականների, կյանքի, դրա իմաստի ու նպատակի, գաղափարների ու գաղափարատիպերի (իդեալների), իրավունքի, բարոյականության, կրոնի, հասարակական գիտակցության այլ ձևերի, դրսևորումների ու նորմատիվ կարգավորիչ համակարգերի, դրանց դերի ու նշանակության մասին դատողություններ ու հետևություններ արվել են շատ ավելի վաղ՝ անտիկ դարաշրջանում, սակայն Վ. Վինդեբանդը և այլոք առաջինն էին, որոնք Կանտի հայացքների հիման վրա բավականին հետևողականորեն ու համակարգված կերպով ստեղծեցին արժեքաբանական ուրույն ուսմունք, որը հիմք է մնացած բոլոր՝ հաճախ նրանց ուսմունքին հակոտնյա արժեքներն ու գնահատա-

1. Տե՛ս **Жуков В. И.** Введение в юридическую аксиологию (вопросы методологии). – «Государство и право», 2009, № 6, էջ 20:
 2. Տե՛ս **Мартышин О. В.** Проблема ценностей в теории государства и права, – «Государство и право», 2004, №10, էջ 5-6:
 3. Տե՛ս **Мартышина О. В.** Проблема ценностей в теории государства и права. – «Государство и право», 2004, № 10, էջ 5; Смоленский М. Б. Право и правовая культура как базовая ценность гражданского общества. – «Журнал российского права», № 11, 2004, էջ 73; Бабенко А. И. Правовая социализация как процесс освоения правовых ценностей. – «Государство и право», 2004, № 2, էջ 104:
 4. Տե՛ս **Поляков А. В.** Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода: Курс лекций. СПб. 2004, էջ 328:
 5. Տե՛ս **И. Кант.** Сочинения в шести томах. М., 1965. Т.4. ч. 2, էջ 121-125, 139, 233, 266, 294:

կանները տրամագծորեն հակառակ դիրքերից մեկնաբանող արևմտյան արժեքաբանական տեսությունների ու ուսմունքների առաջացման համար:

Հետևելով Կանտի ուսմունքին՝ նեոկանտականներն ամեն կերպ և ամենից առաջ ջանում էին փիլիսոփայության ու հասարակության մասին այլ գիտությունների առարկան առանձնացնել բնական գիտությունների առարկաներից:

Չատելով փիլիսոփայությունն այլ գիտություններից՝ համարվել է, որ բնության զարգացման օրենքներն ու օրինաչափություններն այլ են, հասարակությունը՝ այլ:

Եթե բնական գիտությունների առարկան առկա կեցությունն է, էմպիրիկ նյութը, բնությունը, որը ենթակա է փորձի, ապա փիլիսոփայության առարկան պետք է լինեն միայն մարդկանց բացարձակ, իդեալական, նորմատիվ բնույթ ունեցող, տրանսցենդենտալ, ապրիորի արժեքները. փիլիսոփայությունն ուսմունք է միայն մարդկային գաղափարատիպերի (իդեալների) մասին, բարոյական, գեղագիտական, իրավական նորմերի արժեքավորության, դրանց արտացոլած արժեքների մասին և այլն⁶: Նրանք գտնում էին, որ բնական գիտությունների ու փիլիսոփայության՝ այդ թվում բարոյագիտության, գեղագիտության և տրամաբանության առարկան նույնը լինել չի կարող, բայց դրանով ոչ թե ժխտում էին օբյեկտիվ իրողությունը, մատերիայի, նյութի գոյությունը, իրականության մեջ գոյություն ունեցողը, ինչպես դա պնդում է Ե. Ռուդելսոնը⁷, այլ այն համարում էին բնական գիտությունների ուսումնասիրության առարկա և հնարավորություն, իսկ փիլիսոփայության առարկա համարվող արժեքները՝ ապրիորի, բացարձակ, հավերժական, տրանսցենդենտալ, միայն նորմատիվ, որոնք անկախ են իրենց էմպիրիկ հիմքից, հոգեբանական ծագումից, բայց որոնց առաջացման նախապայմանը բոլոր դեպքերում էմպիրիկ նյութն է, ինչպես նաև ամեն մի դատողության և գնահատականի հիմքը:

Նրանք գտնում էին, որ փիլիսոփայության

խնդիրն էմպիրիկ ընկալվող իրողությունից վեր կանգնելն է և ոչ թե ժխտում էին մատերիայի, նյութի գոյությունը: Ոչ թե իրականը, առկան, այլ պատշաճը, ցանկալին, անհրաժեշտն է փիլիսոփայության ոլորտը, նրա առարկան: Այդ պատշաճի ոլորտում, որը տրանսցենդենտալ է, գտնվում են նորմատիվ, հետևաբար՝ նաև համապարտադիր և համընդհանուր նշանակալից արժեքներ, առանց որոնց ենթարկվելու անհնարին է անհատի սոցիալական գոյությունը:

«Ես չեմ ժխտում «փիլիսոփայություն» բառի նշանակության՝ պատմական կենսունակությունը – նշում է Վ. Վինդելբանդը, – և ոչ մեկից չեմ խլում նրա իրավունքը՝ փիլիսոփայություն կոչել այն ամենը, ինչ անհրաժեշտ է համարում: Բայց ինքս օգտվելով այդ իրավունքից, որը բխում է նրա պատմական ճիշտ նշանակության բացակայությունից, և հենվելով հարցի պատմական դիտարկման շարադրանքի վրա՝ ես փիլիսոփայությունը կարող եմ հասկանալ սիստեմատիկական (և ոչ պատմական) իմաստով որպես քննադատական գիտություն համընդհանուր, պարտադիր արժեքների մասին. դա որոշում է փիլիսոփայության առարկան, քննադատական գիտությունը, նրա մեթոդը»⁸:

Ելնելով դատողությունների (որպես գիտական ճանաչողության միջոցի) և գնահատականների (որպես արժեքային ճանաչողության միջոցի) տարբերությունից, որոնք կազմում են նրա տեսության կենտրոնական մասը՝ Վ. Վինդելբանդը հանգում է իդեալական պատշաճության գոյության գաղափարին, որն արժեքների աշխարհի գոյությունն է: Այն էմպիրիկ, փոփոխական աշխարհի նկատմամբ կայուն է, գտնվում է պատշաճի, ցանկալի ոլորտում, բարձրագույն անհրաժեշտություն է, կառավարում է մեր գիտակցությունն առանց հենվելու հարկադրանքի վրա և առանց այլ վարքագծի դրսևորման:

Փիլիսոփայության և բնական գիտությունների, դրանց առարկաների տարբերությունները շեշտելու համար Վ. Վինդելբանդը բերում է իր նշանավոր օրինակը, որը հաճախ օգտա-

6. Տե՛ս **В. Виндельбанд.** Прелюдии. СПб., 1904, էջ 116-117:

7. Տե՛ս **Е. А. Рудельсон.** Неокантианское учение о ценностях. «Проблемы ценности в философии». М. -Л., 1966, էջ 130:

8. Տե՛ս **В. Виндельбанд.** Прелюдии, էջ 23:

գործվում է այլ փիլիսոփաների և աքսիոլոգների կողմից: Եթե դատողությունները (դրանց պրեդիկատը, ստորոգյալը), օրինակ «այս աղջիկը սևամորթ է», արտահայտում է էմպիրիկ, առկա, գոյություն ունեցող հատկանիշներ (հատկություններ), դրություն և բնույթ, թեև նույնպես ենթադրում է և՛ գնահատականի սուբյեկտ, և՛ պրեդիկատ, օրինակ «այս աղջիկը գեղեցիկ է», բայց գնահատականի դերն այս դեպքում զուրկ է ճանաչողական բովանդակությունից, արժեքային է և վկայությունն է այն բանի, թե մարդն ինչպես է ընկալում տվյալ առարկան: Այս դեպքում էլ ոչ Վ. Վինդելբանդը և ոչ էլ Հ. Ռիկերտը ճշմարտության սահմաններից դուրս չեն գալիս: Խոսքը վերաբերում է մարդու և արտաքին աշխարհի փոխհարաբերությանը, մարդու ճանաչողության գործընթացին, մանավանդ, որ նրանք չեն ժխտում դատողության և գնահատականի փոխադարձ կապը և համարում են, որ դրանք համատեղ են հանդես գալիս⁹:

Եթե իրականում աղջիկը սևամորթ է և դա ոչ ոք չի կարող ժխտել, ապա գեղեցիկ է, թե ոչ, կարելի է վիճարկել: Մեկի կողմից աղջիկը կարող է գնահատվել գեղեցիկ, մյուսի կողմից՝ տգեղ:

Քանի որ գնահատականի չափանիշը նպատակն է, որն առաջադրում է դատողունակ մարդը, ապա այն արտահայտվում է միշտ այլընտրանքային (ալտերնատիվ) տեսքով և նշանակություն ունի միայն այն անհատի համար, որն արտահայտում է այն (լավ-վատ, չար-բարի, օգտակար-ոչ օգտակար, գեղեցիկ-տգեղ և այլն): Այս միտքն ավելի հստակ ձևակերպելու համար կարելի է բերել մեկ այլ օրինակ: Երկրագունդը կլոր է, որն ապացուցված է ոչ միայն կանխատեսմամբ, այլ նաև գիտափորձով: Դա գիտական ճշմարտություն է, ունի ճանաչողական բնույթ, գիտության կողմից ապացուցված անվիճելի ճշմարտություն է, ապրիորի չէ: Գիտական մտածողության նպատակը ճշմարտության հայտնաբերումն է, գիտական ճանաչողության օբյեկտը՝ ճշմարտությունը, իսկ, օրինակ, ճիշտ էր, թե սխալ, լավ էր, թե վատ, անհրաժեշտ էր, թե ոչ, հասարակական այնպիսի մի երևույթ, փաստ, ինչպի-

սին Մոլոտով-Ռիբենտրոպ դաշնագրի կնքումն էր Խորհրդային Միության համար՝ գիտնականները վիճում են մինչև օրս. կվիճեն, և այդ առթիվ նույն փաստերի հիման վրա գոյություն ունեն տրամագծորեն տարբեր, միմյանց լիովին հակադիր կարծիքներ ու գնահատականներ: Դա արդեն արժեքային գնահատման մոտեցում է և վերաբերմունք հասարակական երևույթների նկատմամբ: Գնահատման աղբյուրը, ըստ նեոկանտականների, մարդն է, անհատը և, հակառակ համայնավարական (կոմունիստական) գաղափարախոսության, այն չի կարող լինել «հասարակական կամ դասակարգային պահանջ», գնահատական: Գնահատականները լինում են տեսական՝ ուղղված պատշաճի, արժեքների ոլորտին, հավերժական են, համակարգի մեջ կայուն, նորմատիվ և արժեքների հետ կազմում են փիլիսոփայության բովանդակությունն ու առարկան և առօրյա գնահատականներ, որոնք զգայուն և փափագող անհատի հակազդեցություններն են իրենց շրջապատող առարկաների հանդեպ, ունեն նաև ճանաչողական որոշակի բովանդակություն (գովեստ, հավանություն, պարսավանք, հակակրանք, համակրանք), ուղղված են կյանքի արժեքներին և չեն կարող դառնալ փիլիսոփայության բովանդակություն: Այդպիսիք կարող են լինել միայն գնահատողական նորմերը, հավերժական կանոնները, որոնք համընդհանուր են, ունեն բացարձակ իմաստ, տրանսցենդենտալ են, բայց ունեն նաև էմպիրիկ և հոգեբանական պայմանավորվածություն և ուղղված են հավերժական արժեքներին: Գնահատականների երեք ձևերն են՝ տրամաբանական, բարոյական և գեղագիտական, որոնք ուղղված են համապատասխան արժեք-նորմատիվներին. ընդ որում, դրանց տարբերիչ հիմնական հատկանիշն ընդհանուր նշանակությունն է, որը ոչ թե փաստացիին, այլ պատճառին, իդեալական նպատակին ուղղված գնահատական է, որով դրանք առանձնանում են այլ տեսակի՝ միայն անհատական զգացմունքների, բավարարվածություն կամ անբավարարվածություն արտահայտող գնահատականներից և ուղղված են կյանքի առկա արժեքներին¹⁰: Համընդհանուր նշանակությունը գոյություն ունի միայն իդեալա-

9. Տե՛ս В. Виндельбанд, նշվ. աշխ. էջ 25-26:

կան պատշաճության՝ բացարձակ, հավերժական արժեքների, նպատակների ոլորտում, կազմում են բացարձակ անհրաժեշտություն, հիմնված են ոչ թե հարկադրանքի, այլ բացասական վարքագիծը բացառելու վրա: Դատողությունից բխում է փաստ, կեցություն, իսկ գնահատականից՝ արժեքայնություն և պատշաճություն: Ե՛վ դատողությունը, և՛ գնահատականը նորմատիվ են, քանզի գիտակցությունը նորմատիվ է և իդեալական: Արժեքները, որոնց ուղղված են տեսական գնահատականները, վերացական են. այսպիսի նորմերը անապացուցելի, ապրիորի, բայց ակնհայտ են: Դրանք չունեն իրական նմանօրինակներ (անալոգներ), այսինքն՝ իրողության հետ չեն համընկնում, թեև ունեն բնական և սոցիալական ծագում, նախասկզբ, սոցիալապես ճշտորոշված (դետերմինացված) են, բայց տրված են որպես իդեալական անփոփոխ հիմք, սուբստանց և կարգավորիչ նորմեր. դրանց հետևելն անհրաժեշտ է և պարտադիր: Անհատական և փաստացի արժեքները (կյանքի առօրյա արժեքները) դրանց չեն վերաբերում և համընդհանուր նշանակություն չունեն:

Արժեքային հարադրություններում ռացիոնալի և իռացիոնալի հարաբերակցության սահմանումն առավել հաջողված ձևակերպել է ամերիկյան տեսաբան Ջոն Ֆինիսը: Ըստ նրա՝ արժեքները չեն կարող ապացուցման առարկա լինել, սակայն կարող են ճանաչվել դիտարկման և դիալեկտիկական փաստարկման շնորհիվ¹⁰:

Արժեքները երևան են գալիս պատմական փորձի շնորհիվ և դրանց հավաստիությունն ապացուցվում է հասարակական ճանաչմամբ¹¹:

Իրավունքի էության բովանդակությունն են կազմում սկզբնական, առաջնային, էական, արժեքային հատկությունները՝ ազատությունը, ձևական հավասարությունը և արդարությունը: Դրանք համարժեք և միաժամանակ իրավունքի ելակետային հատկություններն են¹²:

Հանրահայտ է, որ Կանտը և Հեգելն ազատությունը, արդարությունը, հավասարությունը, ըստ դրանց վերացարկման ու ձևականացման աստիճանի, դիտարկում էին և՛ բարոյականության, և՛ իրավունքի, և՛ կրոնի կատեգորիաներ ու բովանդակություն՝ նայած, թե որ արժեքային համակարգն էր նրանց կողմից քննարկվում ըստ դրանց վերացարկման ու ձևականացման աստիճանի: Բ. Ա. Կիստյակովսկին ազատությունը և արդարությունը համարում էր իրավունքի գլխավոր և ամենաէական բովանդակությունը¹⁴: Լ. Ս. Յավիչը, նշելով իրավունքի և բարոյականության կապը, գրում է, որ բարոյականության գլխավոր կատեգորիաներից մեկը՝ արդարությունը, միաժամանակ իրավաբանական կատեգորիա է¹⁵: Նույնպիսի կարծիք է Ե. Ա. Լուկաշևան¹⁶, որը, հետևելով Կանտին, Հեգելին և այլոց, արդարությունը, ազատությունն ու հավասարությունը համարում է բարոյական և իրավական կատեգորիաներ, միաժամանակ՝ նաև իրավունքի չափանիշներ, որոնց հիման վրա բարոյականության դիրքերից գնահատվում է իրավունքը: Արդարության՝ որպես իրավունքի կատեգորիայի և դրա ամենահիմնական սկզբունքի՝ իրավաբանական լայնածավալ հիմնավորում տալիս է Վ. Վ. Ստեփանյանը¹⁷:

Նշելով «ազատություն» բառին տրվող տարբեր նշանակությունները՝ Մոնտեսքյոն «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ գրել է. «Չկա այնպիսի բառ, որն ունենա այսքան տարբեր նշանակություններ և մտքերի վրա թողնի այդքան տարբեր տպավորություններ, որքան «ազատություն» բառը: Ոմանք ազատություն են անվանում այն անձին տապալելու դյուրին հնարավորությունը, որին օժտել են բռնապետական իշխանությամբ, մյուսները այն անձին ընտրելու իրավունքը, որին պետք է ենթարկվեն: Երրորդները զենք կրելու և բռնություն գործադրելու իրավունքը: Չորրորդներն

10. Տե՛ս **Варламова Н. В.** Аксиологический аспект правопонимания. - В кн.: Проблемы ценностного подхода в праве: традиции и обновление. М., 1996, էջ 12-13:

11. Տե՛ս **Вих Вг.** Jurisprudence. London, 1996, էջ 75:

12. Տե՛ս **Мартышина О. В.** Проблема ценностей в теории государства и права. - «Государство и право», 2004, МО, էջ 6:

13. Մանրամասն, տե՛ս **Нерсисянц В. С.** Общая теория права и государства. Учебник для вузов. М., 1999, էջ 79-91:

14. Տե՛ս **Б. А. Кистяковский.** Философия и социология права. М., 1998, էջ 360:

15. Տե՛ս **Л. С. Явич.** Право развитого социализма: сущность и принципы. М., 1987, էջ 23:

16. Տե՛ս **Е. А. Лукашина.** Право, мораль, личность. М., 1986, էջ 88, 92:

17. Տե՛ս **Степанян В. В.** Социальная справедливость и социалистическое право. М. 1981

այն տեսնում են իրենց ազգությանը պատկանող մարդու կողմից կառավարվելու կամ իրենց սեփական օրենքներին ենթարկվելու արտոնության մեջ: Ինչ-որ ժողովուրդ երկար ժամանակ ազատությունն ըմբռնում էր որպես երկար մորուք կրելու սովորույթ: Այլոք այդ անվանումը կապում են կառավարման որոշակի ձևի հետ՝ բացառելով այլ ձևերը»¹⁸:

Ազատությունը, ըստ Գ. Հեգելի, նախ և առաջ անհատի ազատություն է, անհատի կամքի ազատությունը, որը մարդու ունակությունն է՝ գործել իր շահերին, ցանկություններին, ձգտումներին, նպատակներին համապատասխան, բայց այն նաև մարդու ունակությունն ու հնարավորությունն է՝ գործել հասարակության և բնության մեջ գոյություն ունեցող օբյեկտիվ անհրաժեշտությանը համապատասխան, որոնց մեջ են նաև, ըստ Հեգելի, օբյեկտիվ ոգու դրսևորումները՝ պետությունը և իրավունքը¹⁹: Օբյեկտիվ ոգու դրսևորումներն ազատության զարգացման դրսևորում են, կախված են նաև մարդուց, և օբյեկտիվ անհրաժեշտության այդ մասերը պետք է ծառայեցվեն մարդուն, լինեն նրա համար: Ե. Ն. Տրուբեցկոյն իրավունքը բնորոշում է որպես արտաքին ազատություն՝ ներկայացված և սահմանափակված նորմով²⁰:

Իրավական ազատությունը, ազատ կամքը և դրա հիման վրա կատարված գործողությունը, այդ գործողության միջոցով ձեռք բերված և հասարակության կողմից ճանաչված, հավանության արժանացած արդյունքի հասնելն իսկական ազատությունն է՝ այն ազատությունը, «երբ մարդը գործում է «մաքսիմի» (վարքագծի կանոն կամ սկզբունք, որը մարդու գործողությունների շարժառիթն է) համաձայն, որը միևնույն ժամանակ կարող է ունենալ համընդհանուր օրենքի ուժ», «կամ երբ իրավունքը բոլորի համար հավասար և ընդհանուր այն արտաքին պայմանն է կամ պայմանների համակցությունը, որոնց դեպքում մեկ անձի կամայականությունը համատեղելի է մեկ ուրիշի

կամայականության հետ՝ ազատության համընդհանուր սկզբունքի տեսակետից», իսկ ազատության այդ համընդհանուր օրենքը պահանջում է «որպեսզի կամայականության ազատ դրսևորումը համատեղելի լինի ամեն մեկի ազատության հետ՝ համապատասխան համընդհանուր օրենքին»²¹: Կանտի այս, ինչպես նաև Հեգելի՝ «եղիր անձ և հարգիր ուրիշներին որպես անձ»²² ասույթներն իրավունքի ու ազատության վերաբերյալ դատողություններ անելիս բերվում են գրեթե բոլոր հեղինակների կողմից, բայց հարկ է նշել, որ անզլիացի հայտնի ազատական մտածող Իսահակ Բերլինը (1909-1997) տարբերակում էր ազատության երկու դրսևորումները՝ նեգատիվ (բացասական) և պոզիտիվ (դրական): Նեգատիվ իմաստով սուբյեկտն ազատ է այնքան, երբ որևէ մեկը չի խառնվում նրա գործերին:

Պոզիտիվ առումով մարդուն կարելի է ճանաչել ազատ, երբ նա ինքնիշխան է, իսկ նրա կյանքը և ճակատագիրն իր ձեռքում են, այլ ոչ թե որևէ արտաքին ուժի²³: Առանց դրա ազատությունը կդառնա ձևական, պատրանքային և զրկված գործնական բովանդակությունից:

Ըստ ակադեմիկոս Վ. Ա. Ներսեսյանցի՝ «Անհատների ազատությունը և նրանց կամքի ազատությունը նույնական հասկացություններ են: Կամքն իրավունքում ազատ կամքն է, որը համապատասխանում է իրավունքի բոլոր էական բնութագրերին և, դրանով իսկ, տարբերվում է կամայականությունից ու հակադիր է կամայականությանը: Իրավունքի կամային բնույթը պայմանավորված է հենց նրանով, որ իրավունքը մարդկանց ազատության ձև է, այսինքն նրանց կամքի ազատությունն է»²⁴:

Ազատությունը հնարավոր է միայն այնտեղ, որտեղ մարդիկ ոչ միայն դրա հասցեատերերն են, այլ նաև դրա կերտողները և պաշտպանները: Իսկ այնտեղ, ուր մարդիկ սոսկ գործող իրավունքի հասցեատերեր են, իրա-

18. Տե՛ս **Монтескье Ш.** Избранные произведения. М., 1955. էջ 288:

19. Տե՛ս **Г. Гегель.** Философия права. М., 1990, էջ 89 և այլ էջեր:

20. Տե՛ս **Е. Н. Трубецкой.** Энциклопедия права, էջ 40:

21. Տե՛ս **И. Кант.** Сочинения в шести томах, Т. 4. ч. 2, էջ 134, 139 140:

22. Տե՛ս **Г. Гегель.** Философия права, էջ 98:

23. **Berlin I.** Two concepts of Liberty // Four Essays on Liberty. Oxford, 1979, էջ 122:

24. Տե՛ս **Нерсесянц В. С.** Общая теория права и государства, էջ 59-60:

վունքի՝ որպես մարդկանց ազատության ձևի, ջատհրական) վերևից պարտադրված հարկա-
գործում են նրանցից օտարված բռնի իշխա- դրական սահմանումները և հրամանները:
նության (բռնակալական, ավտորիտար, ամբողջ-



ԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
 ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական

**ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՊԵՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ,
 ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ՏԱՐԲԵՐ
 ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ**

Ներկայումս դատական նախադեպը իրավունքի հիմնական աղբյուրներից է ընդհանուր (անգլյոսաքսոնական) իրավական համակարգում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա և այլ երկրներ)¹ և աշխարհի գրեթե մեկ երրորդը ղեկավարվում է Անգլիայի իրավունքի համակարգում ձևավորված սկզբունքներով: Նշված համակարգի երկրներում դատական նախադեպը ենթակա է պարտադիր կիրառման, և նախադեպային իրավունքի պահանջներին խստիվ հետևելու՝ դատավորների պարտականությունը բխում է մի շարք ձևական իրավաբանական աղբյուրներից:

Ռոմանագերմանական իրավական համակարգի երկրները, օրինակ՝ Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան և մյուսները, չեն ընդունել ընդհանուր իրավունքին բնորոշող այս սկզբունքները, քանի որ Եվրոպայի մայրցամաքային երկրների իրավական համակարգերը հիմնված են հռոմեական իրավունքի վրա:

Այսպես. Ամերիկյան հայտնի իրավաբանական բառարանում նախադեպ բառը բացատրվում է որպես դատարանի կողմից կոնկրետ գործով առաջին անգամ հաստատված իրավունքի գերակայություն, որն այնուհետև՝ նույնանման գործերով որոշումներ կայացնելիս, դառնում է վերաբերելի²: Գերմանիայի իրավական համակարգում նախադեպը սովորաբար հասկացվում է որպես յուրաքանչյուր նախորդ դատական որոշում՝ որոշակի առնչություն ունե-

ցող տվյալ պահին քննվող գործի հետ³: Իսպանիայում նախադեպը սովորաբար հասկացվում է որպես նախորդ դատական որոշում, որը դատարաններին պարտավորեցնում է հետևել իրեն՝ հետագայում նմանատիպ այլ գործեր քննելիս և որոշումներ կայացնելիս: Այս ըմբռնումը շատ մոտ է նախադեպի դասական հասկացությանը՝ ձևավորված ընդհանուր իրավունքի համակարգում: Սակայն, ի տարբերություն ընդհանուր իրավունքի համակարգի երկրների, Իսպանիայում գոյություն ունի մեկ կարևոր վերապահում, որն իրենից ներկայացնում է Իսպանիայի Սահմանադրական դատարանի կողմից բազմաթիվ անգամ հաստատված սկզբունք, ըստ որի՝ դատավորը ղեկավարվում է օրենքով և ոչ նախադեպով: Հետևաբար՝ դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր այստեղ ունի երկրորդական նշանակություն: Իսկ Իտալիայի Վճռաբեկ դատարանի շնորհիվ վճռաբեկության կարգով անցած ցանկացած դատական որոշում կարող է դառնալ դատական նախադեպ և կիրառվել մյուս դատավորների կողմից⁴:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր տարբեր երկրներում ընկալվում և կիրառվում է տարբեր կերպ: Սակայն իրականում ընդհանուր իրավունքի և ռոմանագերմանական իրավունքի համակարգերի մեթոդները զգալիորեն նույնացվում են⁵, ուստի դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր միաժա-

1. Մանրամասն տե՛ս **Cross R. and Harris J.**, Precedent in English Law, Fourth Edition, Clarendon Press-Oxford, 2004:
 2. Տե՛ս Black's Law Dictionary, 5th ed., 1979, էջ 1059:
 3. Տե՛ս **Марченко М. Н.**, Особенности судебного прецедента в системе романо-германского права, Государство и право, 2006, էջ 22:
 4. Տե՛ս **Ралько В. В.**, Особенности интеграционного процесса и общий вектор модернизации российской правовой системы, Нотариальный вестник, 2010, էջ 34-35:
 5. Տե՛ս **Богдановская И.Ю.**, Судебный прецедент и его эволюция // Законность, 2007, էջ 5:

մանակ հանդիսանում է տարբեր իրավական ընտանիքների ինտեգրման միջոց: Ներկայումս մայրցամաքային իրավական ընտանիքի երկրներում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը նորմատիվ իրավական ակտն է, մեծանում է դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի նշանակությունը, դերը և կիրառումը, իսկ ընդհանուր իրավունքի երկրներում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը դատական նախադեպն է, ուժեղանում է նորմատիվ իրավական ակտերի՝ օրենքների, ստատուտների դերը և կիրառումը. հետևաբար՝ նման պայմաններում կարելի է եզրահանգել, որ նշված իրավական համակարգերի զարգացման արդի պայմաններում առավել ինտենսիվ է դառնում դրանց ինտեգրման գործընթացը, որը պայմանավորված է նաև միջազգային հարաբերությունների սրընթաց զարգացումով:

Նախադեպային իրավունքի պատմատեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս երևույթը հեշտությամբ փոփոխվում է և հարմարվում կոնկրետ ժամանակաշրջանի պայմաններին՝ միաժամանակ պահպանելով իր արդիականությունը, ինչի հիմքով դատական նախադեպն իր բնույթով հանդիսանում է դինամիկ երևույթ: Մշտապես փոփոխվող հասարակական կյանքին և հարաբերություններին համընթաց փոփոխվում են նաև դատական նախադեպերը: Մինչդեռ, օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի և նախադեպերի համեմատության արդյունքում պետք է փաստել, որ նախադեպերն իրենց բնույթով ավելի դինամիկ երևույթ են, քան օրենքները կամ այլ նորմատիվ իրավական ակտերը: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններիս ընդունումը և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը պահանջում է երկարատև և բարդ գործընթաց, մինչդեռ նախադեպերը ձևավորվում են դատարանի կողմից որոշում կայացնելու հետևանքով, ինչը համեմատաբար ավելի կարճ ժամանակ է պահանջում: Թեպետև հասարակական պահանջներից է բխում գործող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելը, այնուամենայնիվ հարկ է հատուկ ուշադրության արժանացնել երկրի իրավական հա-

մակարգի կայունությունը, որի տեսանկյունից մշտապես կատարվող փոփոխությունները չեն կարող ողջունելի համարվել, և նման պայմաններում դատական նախադեպը կարող է դրական դերակատարություն ունենալ:

Բացի վերոնշյալը, կարելի է ընդգծել, որ արդի ժամանակաշրջանում իրավունքի տեսության մեջ գոյություն չունի միասնական մոտեցում նախադեպի հասկացության շուրջ, և այդ հարցի վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ՝ այդ թվում բացասական կարծիքներ: Օրինակ՝ մասնագետներից ոմանք համարում են, որ նախադեպային իրավունքը չափազանց դժվար է, շփոթեցնող ու հակասական. այն թույլ է տալիս, որ դատարանն իրականացնի իրավաստեղծ գործառույթ, ինչպես համապատասխան օրենքի բացակայության, այնպես էլ առկայության պարագայում⁶:

Այս կապակցությամբ հարկ է առանձնացնել դատական նախադեպին բնորոշ հատկանիշները: Դատական նախադեպը մարդկային բանականության, ճկուն տրամաբանության, օրենքի իմացության, իրավաբանական մտածողության և դատական պրակտիկայի վերլուծության, ինչպես նաև իրավաբանորեն հիմնավորված բարդ և երկարատև ստեղծագործ աշխատանքի (ստեղծագործական ընթացակարգի) արդյունք է:

Ըստ որոշ մասնագետների՝ դատական նախադեպը պետք է հասկացվի որպես ամենաբարձր աստիճանի դատարանի կողմից կոնկրետ գործով կայացված որոշում, որը համարվում է դատական նախադեպ և պետք է կիրառվի ինչպես տվյալ, այնպես էլ մյուս դատարանների դատավորների կողմից⁷: Սակայն ցանկացած պարագայում դատական նախադեպն ստեղծվում է միայն դատական իշխանության և, մասնավորապես, բարձր դատական աստիճանների կողմից, այսինքն՝ դատական նախադեպն իր բնույթով դատական գործունեության արդյունք է: Դատական նախադեպի ստեղծման գործընթացը պահանջում է որոշակի իրավական ընթացակարգի պահպանում՝ ինչպես, օրինակ, անհրաժեշտ է, որպեսզի դատարան ներկայացված լինի հայցադիմում, վճռի դեմ ներկայացված լինի վերաքննիչ բողոք

6. Տե՛ս Головистикова А. Н., Дмитриев Ю. А., Теория государства и права: учебник. М. Юрайт, 2005, էջ 356:

7. Տե՛ս Подольская Н. А., К вопросу о понятии прецедента как источника права (общетеоретический аспект), Судебная практика как источник права. 2000, էջ 152:

և այսպես շարունակ: Դատական նախադեպը գրավոր փաստաթուղթ է և այդ իսկ պատճառով նրան բնորոշում են իրավաբանական փաստաթղթերի և ակտերի բոլոր հատկանիշները: Դատական նախադեպերի միջոցով կատարվում է օրենքի դատական մեկնաբանություն, որն ունի պաշտոնական բնույթ: Ավելին, դատական նախադեպն ունի նորմատիվ բնույթ⁸, վերջինիս կատարումն ապահովված ու երաշխավորված է պետական հարկադրությամբ. բացի այդ, դատական նախադեպն անմիջականորեն կապված է նյութական և դատավարական իրավունքի նորմերի կիրառմամբ: Դատական նախադեպը իրավասահմանող (իրավահաստատող) գործառույթ է իրականացնում, այսինքն՝ ընդունում է նոր իրավադրույթ (իրավադրույթներ), որով հետագայում այլ դատարանները պետք է դեկլարարվեն նմանատիպ բազում գործերի լուծման ժամանակ: Հակառակ դեպքում անհրաժեշտ են պատշաճ հիմնավորումներ: Համամատչելիության և դատական

գործունեության թափանցիկության ապահովման նպատակով դատական նախադեպը պաշտոնապես հրապարակվում է:

Թեև իրավունքի տեսության մեջ ընդունված է, որ նախադեպը, որպես կանոն, ձևավորվում է մի քանի որոշումների հետևանքով⁹, այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ նախադեպը կարող է ձևավորվել նաև մեկ որոշմամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումը կամ դրույթը դառնում է կիրառման ենթակա հենց որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած, հետևաբար, օրինական ուժի մեջ մտնելու պահն անմիջականորեն կապված է որոշման՝ նախադեպային բնույթ ձեռք բերելու հետ: Այսինքն՝ դատական որոշումը, ըստ այդմ՝ դրանում բովանդակվող նոր իրավական դիրքորոշումը ձեռք է բերում նախադեպի կարգավիճակ այն պահից սկսած, երբ տվյալ որոշումը մտնում է օրինական ուժի մեջ, այլ ոչ դրանից հետո մի քանի որոշումների կայացման

8. Տե՛ս **Марченко М. Н.**, Судебный прецедент: разнообразие понятий и многообразие форм проявления, Журнал российского права, 2006, էջ 96:

9. Այն մասին, որ դատական նախադեպը, որպես կանոն, ձևավորվում է մի քանի որոշումների հետևանքով, գրվել է Rupert Cross-ի և James Harris-ի «Precedent in English Law» գրքի երրորդ՝ «Stare decisis» և չորրորդ՝ «Exceptions to stare decisis» գլուխներում:

Այս մասին պնդել են նաև ԱՄՆ-ում XX դարի ընթացքում հիմնադրված ռեալիստների դպրոցի ներկայացուցիչները, որոնցից, օրինակ, հայտնի իրավաբան գիտնական Karl Llewellyn-ը իր 1967 թվականի «Jurisprudence: Realism in Theory and Practice» աշխատության 56-րդ էջում նշել է, որ տարբեր որոշումների համադրման գործընթացում ի հայտ է գալիս այն ընդհանուր կանոնը՝ նախադեպը, որը պետք է զարգացնել:

Այս մասին գրել է նաև И. Ю. Богдановская-ն իր «Эволюция судебного прецедента в общем праве» տպագրված հոդվածում, մասնավորապես՝ 77-րդ էջում, որտեղ գրել է, որ նախադեպը, որպես կանոն, ձևավորվում է մի քանի որոշումների միջոցով: Նույն միտքը արտահայտել է իր դոկտորական ատենախոսության մեջ:

И. Ю. Богдановская-ն այս մասին գրել է նաև Մոսկվայում Наука ամսագրում 1993 թվականին հրատարակված իր «Прецедентное право» գրքի 15-րդ և 18-րդ էջերում, մասնավորապես նշել է հետևյալը՝ նախադեպը ոչ միայն ստեղծվում է մի քանի դատական որոշումներով, ըստ էության, դրանց ձևավորում են բարձրագույն դատական ատյանները:

Այս մասին գրել են նաև իրավաբանական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Н. А. Гущина-ն և М. С. Глухоедов-ը իրենց՝ 2013 թվականին Մոսկվայում տպագրված «Судебный прецедент в российской правовой системе: история, теория, практика» հոդվածում /էջ 79-ից 85/, որտեղ նշվել է հետևյալը՝ ընդհանուր իրավունքի երկրների իրավական դոկտրինում ավանդաբար ենթադրվում է, որ դատական նախադեպը ստեղծվում է մի քանի դատական որոշումներով: Այս մասին գրել է Jim Evans-ը իր 1987 թվականի Орефорդի Clarendon ամսագրում տպագրված «Change in the doctrine of precedent during the nineteenth century» գրքի 39-րդ էջում, որտեղ նշվել է հետևյալը՝ որոշ հանգամանքների դեպքում դատավորներն իրավասու են ուղղակիորեն դիմել արդարադատությանը կամ հիմնավորմանը՝ որպես ընդհանուր իրավունքի երկրի իրավունքի աղբյուրի, նույնիսկ եթե այն կանոնը, որը նրանք օգտագործել են, դեռևս համընդհանուր կերպով չի ճանաչվել դատական այլ գործերում:

Այս մասին գրվել է նաև Neil Duxbury-ի Cambridge համալսարանի տպագրության 2008 թվականին հրատարակված «The Nature and Authority of Precedent» գրքի 2-րդ գլխի 1-ին ենթագլխի՝ նախադեպի դոկտրինի ձևավորումը վերտառության ներքո:

Այս կապակցությամբ Անգլիայում 1880 թվականին Re Hallett's Estate-ի թիվ 13-696 գործով լորդ Jessel-ը հայտնել է հետևյալ միտքը՝ հարկ է չմոռանալ, որ ընդհանուր իրավունքի կանոնները պետք է հաստատված լինեն հնագույն ժամանակներից ի վեր:

Կարելի է հավելել նաև, որ պրետորների էդիկտները նույնպես իրենց նշանակությունը ձեռք են բերել հաջորդականության և կրկնության շնորհիվ, ինչն էլ ընդունված է անվանել՝ edictum tralatitium:

և նոր իրավական դիրքորոշման կիրառման հետևանքով: Այս պարագայում որոշիչ դեր է կատարում որոշման բնույթը, բովանդակությունը, ազդեցիկ ուժը, այդ որոշումը կայացրած դատարանի դիրքը և այլն, սակայն ոչ գործնականում նման որոշումների կրկնության հանգամանքը:

Հարկ է հիշատակել, որ դատական նախադեպը, նախևառաջ, հանդիսանում է արդարադատության արդյունք և որպես այդպիսին՝ կոնկրետ վեճը լուծող իրավական ակտ: Այդ որոշումը ձեռք է բերում պարտադիր բնույթով կապ գործով կողմերի համար օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած, ուստիև այդ պահից այն կարող է փաստացիորեն համարվել նախադեպ:

Ավելին, դատական նախադեպը երբեք չի կարող կորցնել իր ուժը, այլ պարզապես կարող է դադարել կիրառվել դատական պրակտիկայում այն պատճառաբանությամբ, որ հանդիսանում է դատական որոշում, որով լուծվել է կոնկրետ անձանց միջև ծագած իրավական վեճը. այն շարունակում է ունենալ իրավական ուժ և պարտադիր լինել գործով կողմերի համար: Նույնիսկ այն դեպքում, երբ նախադեպային որոշում կայացրած դատարանը հանգի հետևության, որ նախադեպային որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումն այլևս արդիական չէ և նոր նախադեպային որոշմամբ փոփոխի այն, ապա երկու որոշումներն էլ կարող են համարվել նախադեպային, իսկ հետագայում, իրավական դիրքորոշման կիրառման նպատակով դրանցից որևէ մեկի ընտրության հարցը կարող է վերապահվել նմանատիպ այլ գործ քննող դատարանին: Այսինքն, դատական նախադեպը կարող է դադարել կիրառվել դատական պրակտիկայում նոր նախադեպային որոշմամբ ավելի հիմնավոր լուծում ստանալու արդյունքում, քանի որ դատարանի կողմից նախադեպային որոշման կիրառման ժամանակ նախապատվությունը կտրվի գործի՝ ավելի հիմնավոր և պատճառաբանված, ինչպես նաև առավել արդիական որոշմանը: Սակայն ցանկացած պարագայում կիրառման նպատակով նախադեպային որոշման ընտրության հարցը որոշում է դատարանը՝ իր հայեցողությամբ:

Որպես օրինակ կարելի է ներկայացնել

հետևյալ իրողությունը. ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0137/04/13 սնանկության գործով 18.07.2014 թվականին կայացրած որոշմամբ գտել է, որ այն դեպքում, երբ պարտատերն, ի հիմնավորումն վճարային պարտավորության անվիճելիության, վկայակոչում է օրինական ուժի մեջ մտած վճիռը և նշում, որ այն գտնվում է հարկադիր կատարման փուլում. միաժամանակ պետք է հիմնավորի հարուցված կատարողական վարույթի՝ իր համար բացասական ելքը, այն է՝ կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ կասեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով: Իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԵՇԴ/0020/04/14 սնանկության գործով գտել է, որ պարտապանի վճարային պարտավորությունն անվիճելի է, քանի որ այն ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով, ինչն ուղակիորեն բխում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի բովանդակությունից: Ինչ վերաբերում է պարտատիրոջ համար հարուցված կատարողական վարույթի՝ բացասական ելքի հիմնավորմանը, ապա կատարողական վարույթի ավարտը՝ այդ թվում պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով, ինքնին հանդիսանում է բացասական ելք պարտատիրոջ համար, քանի որ այն չի հանգեցնում որևէ իրավական հետևանքների: Մասնավորապես, հարուցված վարույթն անհայտ ժամանակահատվածով մնում է անարդյունք: Այս կապակցությամբ մեկ այլ՝ թիվ ԱԲԴ/0115/04/16 սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ պարտատիրոջ համար հարուցված կատարողական վարույթի բացասական ելքի հիմնավորման հանգամանքը չի կարող դրվել պարտապանի՝ սնանկ ճանաչվելու պահանջի մերժման հիմքում: Նշված պրակտիկան ամրապնդվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Այս ամենից հետևում է, որ միևնույն հարցի վերաբերյալ դատական պրակտիկայում արտահայտվել են հակասական իրավական դիրքորոշումներ, ուստի այսուհետ առաջին ատյանի դատարաններն իրենց հայեցողությամբ կարող են վեճը լուծել կամ ՀՀ Վճռաբեկ դատարանի, կամ ՀՀ

վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերը նշված դիրքորոշմանը համապատասխան:

Այնպիսի իրավական համակարգում, որտեղ դատական նախադեպը կատարում է, նախևառաջ, մեկնաբանող գործառույթ և ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, նախադեպային որոշումը կարող է դադարել կիրառվել համապատասխան օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի փոփոխության կամ նորի ընդունման հետևանքով հնի դադարեցման ժամանակ: Այնուամենայնիվ, դրա մեջ ներկայացված իրավական դիրքորոշումը, կատարված մեկնաբանությունները և եզրահանգումները շարունակում են որոշակի արժեք ունենալ նույնանման փաստական հանգամանքներով՝ այլ գործի լուծման համար:

Վերոգրյալից հետևում է, որ բարձր դատական ատյանների կողմից կայացված ցանկացած դատական որոշում, որով տվյալ դատարանը հայտնել է նոր իրավական դիրքորոշում, ըստ էության, կարող է համարվել դատական նախադեպ և դառնալ կիրառման ենթակա հետագայում նմանատիպ փաստական հանգամանքներով այլ գործեր քննելիս:

Դատական նախադեպին բնորոշ վերոնշյալ հատկանիշներին անհրաժեշտ է ավելացնել նաև վերջիններիս դրական և հարաբերականորեն բացասական կողմերը: Դատական նախադեպի դրական հատկանիշներն են կանխատեսելիությունը, որոշակիությունը, իրավական բացերի լրացումը և երկիմաստությունների վերացումը, միասնական դատական պրակտիկայի ձևավորումը, օրենքների՝ միատեսակ կիրառության ապահովումը, իրավական մշակույթի զարգացումը, օրենսդրության կատարելագործումը, իրավակիրառ պրակտիկայի բարելավումը, նոր իրավադրույթների հաստատման եղանակով նորմատիվ կարգավորում չունեցող իրավական վեճերի լուծումը և այլն: Նախադեպի ինստիտուտը կապված է նաև բարձր իրավագիտակցության և իրավական մշակույթի հետ, ուստիև այն որոշակիորեն ազդում է նաև երկրի ընդհանուր և իրավական զարգացվածության վրա: Հենց նախադեպային իրավունքն է առավելագույն կերպով նպաստում իրավունքի զարգացմանը և երաշխավորում օրենքների միատեսակ կիրառությունը: Հատկանշական է նաև, որ նախադեպի ինստիտուտը

զգալիորեն թեթևացնում է դատարանների գործունեությունը, որոնց իրավունք է վերապահված դատական գործերի քննությունն ավարտելով՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս հղում կատարել նմանատիպ գործերով պրակտիկայում առկա դատական նախադեպերին: Այս հանգամանքը վկայում է նախադեպի ինստիտուտի դրական ազդեցության և իրականության մեջ դրա կարևորության մասին:

Իրավունքի տեսության մեջ արտահայտվել է նաև այն կարծիքը, ըստ որի՝ նախադեպային իրավունքը նկատելի ազդեցություն է թողնում իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների տարանջատումը՝ որպես հիմնարար սահմանադրական սկզբունք, ենթադրում է միասնական պետական իշխանության բաժանում երեք՝ հարաբերականորեն ինքնուրույն իշխանությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական, որտեղ օրենսդիր իշխանությանը վերապահված է օրինաստեղծ գործունեությունը, իսկ գործադիր իշխանությունն զբաղվում է ենթաօրինաստեղծ գործունեությամբ: Նման պայմաններում, երբ երեք՝ հարաբերականորեն ինքնուրույն իշխանություններից երկուսն իրականացնում են, համապատասխանաբար, օրինաստեղծ և ենթաօրինաստեղծ գործունեություն, ապա ակնհայտ է, որ երրորդ՝ դատական իշխանության կողմից իրավաստեղծ գործունեության իրականացումը չի կարող որևէ կերպ հակասել կամ բացասական ազդեցություն թողնել իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Ավելին, այն կարող է նպաստել երեք իշխանությունների՝ առավել արդյունավետ, հավասարակշիռ և հակակշիռ գործունեությանը: Նշվածը կարող է իրականացվել հենց բարձր ատյանի դատարանների կողմից նախադեպային որոշումների կայացման միջոցով:

Բացի վերոգրյալը, հարկ է ընդգծել, որ մայրցամաքային իրավունքի երկրներում առաջնային տեղ է զբաղեցնում օրինաստեղծ գործունեությունը, և դատական նախադեպերը որևէ կերպ չեն կարող գերակայել օրենքներին կամ այլ նորմատիվ իրավական ակտերին, քանի որ առավելապես հանդես են գալիս այս կամ այն իրավական դրույթների մեկնաբա-

նության տեսքով: Այսպիսով, կոնկրետ անձանց միջև ծագած վեճը կարգավորելիս դատարանը դատական նախադեպի միջոցով մեկնաբանում է գործող օրենսդրության իրավանորմերը և բացահայտում դրանց հարաբերակցությունը, պարզաբանում այդ իրավանորմերի կիրառման ձևերը և այլն, ինչը նախադեպի առանձնահատկություններից է: Նշվածը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին, որտեղ դատարանները չեն սահմանում նոր իրավադրույթներ՝ վարքագծի համապարտադիր կանոններ, այլ մեկնաբանում են կոնկրետ գործով կիրառման ենթակա իրավունքի նորմերը: Այսինքն, այս առումով ներպետական իրավական համակարգում դատական նախադեպերը տարբերվում են դատական նախադեպի՝ դասական հասկացությունից:

Միաժամանակ, որոշ հեղինակներ գտնում են, որ դատական նախադեպը որոշակիորեն սահմանափակում է դատարանների ինքնուրույնությունը և դատավորի՝ ազատ հայեցողության իրավունքը: Այս կապակցությամբ կարևոր է ընդգծել, որ դատական նախադեպն ինքնին՝ որպես իրավակիրառ կամ իրավաստեղծ ակտ, հանդիսանում է դատական

ազատ հայեցողության արդյունք: Դատարանն օրենքի շրջանակներում իր հայեցողությամբ է որոշում կայացնում նախադեպային դիրքորոշումը կիրառելու կամ չկիրառելու հարցերի շուրջ՝ կախված քննվող գործի լուծման համար այդ դիրքորոշման անհրաժեշտության աստիճանից և հաշվի առնելով գործի բոլոր փաստական հանգամանքներն ու առանձնահատկությունները: Բացի այդ, դատարանը, կիրառելով որևիցե նախադեպային որոշում, կարող է ներկայացնել լրացուցիչ պատճառաբանություններ ու հիմնավորումներ, դրանով իսկ ավելի զարգացնել նախադեպային որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշումը: Նման պայմաններում կարելի է հետևություն կատարել, որ դատական նախադեպը չի սահմանափակում ինչպես դատարանների ինքնուրույնությունը, այնպես էլ դատավորի՝ ազատ հայեցողության իրավունքը:

Իհարկե, վերը շարադրվածը նախադեպի ընդհանուր հատկանիշների և հատկությունների սպառիչ ցանկը չէ, բայց այն հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել այս իրավական երևույթի բնույթի ու առանձնահատկությունների մասին:



ՍԱՄՎԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ (տեսական վերլուծություն)

Ընդհանրապես հասարակական (սոցիալական) գիտություններում իմացաբանական և արժեքաբանական մոտեցումները նույն հարթության վրա են և այն գիծը, որով նրանք սահմանազատվում են, խիստ պայմանական բնույթ է կրում, քանզի մինչ այս կամ այն սոցիալական երևույթը արժեքավորելը, պետք է, բնականաբար, տվյալ խնդրո առարկայի մասին որոշակի գիտելիքների պաշար հավաքել¹: Այլապես ցանկացած գնահատական կամ արժեքավորում առարկայագուրկ կլինի և կարտահայտի խիստ սուբյեկտիվ, օբյեկտիվորեն չհիմնավորված տեսակետ: Այդ իսկ պատճառով պետության՝ որպես մեծագույն սոցիալական արժեքի դիտարկումը մեր կողմից ընթանում է իմացաբանական և արժեքաբանական տեսանկյունից զուգահեռաբար:

Պետությունը քաղաքակրթության զարգացման արդյունք է: Ծագելով մարդկային հասարակության որոշակի աստիճանում՝ տնտեսական, սոցիալական, բարոյական, հոգեբանական և այլ օրինաչափությունների հետևանքով պետությունը դառնում է քաղաքակրթության՝ հիմնական կառավարող համակարգը: Պետական կազմակերպված հասարակությունն իր գոյության համար ձեռք է բերել նոր (եզակի) հնարավորություններ՝ զարգացնելու արտադրական ուժերը, սոցիալական հարաբերությունները, բարոյական հիմքերը, մշակույթը, միջազգային կապերը:

Պետությունը պատմականորեն զարգացող սոցիալ-իրավական երևույթ է: Հասարակության զարգացման առաջընթացի հետ փոխվում են նաև պետությունը, նրա նպատակներն ու խնդիրները, կառավարող կառուցվածքներն ու ֆունկցիաները: Դրան համապատասխան էլ

փոխվում են և պետության հասկացության, հասարակական կյանքում նրա դերի և կոչման վերաբերյալ հայացքները: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում գիտական միտքը փորձել է բացահայտել պետության սոցիալական արժեքը, նրա դերն ու նշանակությունը հասարակական կյանքում:

Ժամանակակից հետազոտողների աշխատություններում առավել ընդգծվում է պետության սոցիալական էությունը, նրա նշանակությունը սոցիալական արժեքների համակարգում²:

Անցյալի մտածողների մեծ մասը պետություն եզրույթը սահմանում էր հիմնականում սոցիոլոգիական բնորոշման հետ միաժամանակ. պետության մասին ուսմունքում նրան իրավաբանական ձևակերպում տալու փորձեր են արվում: Այսպես, Ելլինեկը գտնում էր, որ պետությունն իրենից հատուկ հասարակական կազմավորում և հատուկ իրավական երևույթ է ներկայացնում:

Նրա ուսմունքը համապատասխանաբար բաժանվում է «սոցիալականի» և «իրավականի»: «Քանի որ իրավունքը պետության էական տարրն է,- գրում է Ելլինեկը,-ապա վերջինիս իմացությունն անհնար է առանց նրա իրավաբանական բնույթն ուսումնասիրելու: Իրավունքով կարգավորված պետությունը... պետք է որոշակի տեղ գրավի իրավունքի իսկ ներսում, պետք է գոյություն ունենա պետության մասին իրավական հասկացություն»: Նա պետությունը բնորոշում է որպես իրավաբանական սուբյեկտի հատկանիշներով, կամքով օժտված և իրավունքի կրող հանդիսացող անհատների նպատակային միասնություն:

Ռուս հայտնի իրավաբան Գ. Ֆ. Շեննևիչը

1. Տե՛ս **Бутенко А. П.** Государство: его вчерашние и сегодняшние трактовок// «Государство и право», 1993, N7..
2. Տե՛ս **Мамут Л. С.** Государство в ценностном измерении. М., 1998.

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

այդպիսին էր համարում սոցիալական պետությունը՝ որպես մարդկանց քաղաքական միություն³:

Կոկոշկինը պետությունը բնութագրում էր որպես մեկ իշխանության ներքո և մեկ տարածքի սահմաններում ապրող մարդկանց միավորում⁴: Իսկ Կորկունովը, օրինակ, պետությունը բնորոշում է որպես «հասարակական միություն, որն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ազատ մարդկանց նկատմամբ իշխանական հարկադրանքի ճանաչում»⁵:

Տրուբեցկոյը գտնում էր, որ «պետությունը մարդկանց միություն է, որն իշխում է ինքնուրույն և բացառապես որոշակի տարածքի սահմաններում»⁶:

Իսվոստովը գրել է, որ պետությունը «որոշակի տարածքում ապրող և հարկադրանքի ու ինքնուրույն գերագույն իշխանության ենթարկված ազատ մարդկանց միություն է»⁷:

20-րդ դարի լիբերալիզմի խոշորագույն ներկայացուցիչ Հայեկի կարծիքով՝ պետությունը համատեղ ապրող մարդկանց կողմից գիտակցաբար ստեղծված կազմակերպություն է միատեսակ կառավարելու նպատակով: Այդ կազմակերպությունը «ոչ մի դեպքում չի կարելի նույնացնել հասարակության հետ»⁸: Իսկ Ֆրանսիացի հայտնի քաղաքագետներ Բ. Բադիի և Պ. Բիրնբաումի կարծիքով՝ պետությունը «լավ կազմակերպված իշխանական մեքենա է, որտեղ ծառայում են քաղաքացիական և զինվորական աստիճանավորներ»⁹:

Ա. Ս. Ախիզերի կարծիքով՝ պետությունը հասարակությունից առանձնացված պրոֆեսիոնալ կառավարման ապարատ է¹⁰: Մի փոքր այլ տեսանկյունից է բնորոշում պետությունը Է. Յա. Բատալյովը: Ըստ նրա՝ նույնիսկ ամենաժողովրդավարական պետությունը համարվում

է որպես հարկադրանքի մեքենա, բռնություն մարդու վրա: «Պետությունը,- շարունակում է նա,- միշտ այդպիսի մեխանիզմ է եղել ու կմնա այդպիսին, քանի դեռ գոյություն ունի որպես քաղաքակրթության՝ համընդհանուր ինստիտուտ»¹¹: Իսկ Ջ. Հելլոուելլի կարծիքով՝ ընդհակառակը՝ պետությունը հնարավորություն է տալիս մարդու էությունն ավելի բարելավելու, բացահայտելու մարդկանց ստեղծագործական ունակությունները հանուն համընդհանուր բարօրության, անվտանգ ու բարեկեցիկ կյանքի¹²:

Նշված հայեցակետերից զգալիորեն տարբերվում է պետության վերաբերյալ մարքսիստական կամ մատերիալիստական մոտեցումը: Ըստ մարքսիստական հայեցակարգի՝ պետությունը բնորոշվում է՝ ելնելով նրա անփոփոխ դասակարգային էությունից: Քանի որ պետությունը ծագում է որպես դասակարգային հասարակարգի արդյունք, հասարակության՝ անհաշտելի դասակարգերի տրոհման հետևանքով, ապա «այն ընդհանուր կանոնի համաձայն՝ հանդիսանում է ամենահզոր տնտեսապես տիրապետող դասակարգի պետություն, որը պետության օգնությամբ դառնում է նաև քաղաքականապես իշխող դասակարգ և այդպիսով ձեռք է բերում նոր միջոցներ՝ շահագործվող դասակարգին ճնշելու և կեղեքելու համար»¹³: Հիմնականում ուշադրությունը կենտրոնացնելով պետության ծագման և գոյության սոցիալ-տնտեսական գործոնների վրա, մարքսիզմ-լենինիզմը պետությունը բնորոշում է որպես տնտեսապես տիրապետող դասակարգի քաղաքական իշխանության կազմակերպություն: «Պետությունը,- գրում է Լենինը,- մեքենա է մի դասակարգի համար՝ հնազանդության տակ պահելու ենթակա մնացած

3. Տե՛ս **Шершеневич Г. Ф.** Общая теория права. Учебное пособие. Т.1, Вып. 1, М., 1995, с. 171-182.
 4. Տե՛ս **Кокошкин Ф. Ф.** Русское государственное право, М., 1908, с.4.
 5. Տե՛ս **Коркунов Н. М.** лекции по общей теории права, с. 240.
 6. Տե՛ս **Трубецкой Е. Н.** Лекции по энциклопедии права, с. 22.
 7. Տե՛ս **Хвостов В. А.** Общая теория права, М., 1914, с. 15.
 8. Տե՛ս **Хайек Ф.** Обществосвободных. Сдерживание власти и развенчание политики.- «Открытая политика», 8/10/, 1995, с. 41.
 9. Տե՛ս **Бади Б.**, Бирбаун П. Переосмысление социологии государства. –«Международный журнал социальных наук», 4/7/, 1994, с. 17.
 10. Տե՛ս **Ахиезер А.С.** Синкретири или либерализм.- «Рубежи», N4, 1995, с. 71.
 11. Տե՛ս **Баталов Э. Я.** Политическое – «слишком человеческое». – «Полис», N5, 1995, с. 6.
 12. Տե՛ս **Хеллоуелл Дж.** Моральные основы демократии. М., 1993, с. 114.
 13. Տե՛ս **Маркс К.**, Энгельс Ф. Соч. Т. 21, с. 171-172.

այլ դասակարգերին»¹⁴:

Վերլուծելով 19-րդ դարի կեսի բուրժուական պետության բնույթը՝ Մարքսն ու Էնգելսը նշում են, որ այն «իր էությանը կապիտալիստական մեքենա է, կապիտալիստների պետություն, իդեալական միագումար կապիտալիստ»¹⁵:

Ինչ վերաբերում է խորհրդային իրավագիտությանը, ինչպես նաև հասարակագիտությանը, ապա այն որդեգրել էր պետության և իրավունքի՝ մարքսիստական տեսությունը:

Խորհրդային իրավաբանական գրականության մեջ պետության, նրա հասկացության և էության մասին հայացքները շարադրվում էին բացառապես դասակարգային տոնայնությամբ, ժխտվում էին այդպիսի ձևակերպումներին չհամընկնող ցանկացած այլ մեկնաբանություններ: «Պետության էությունն այն է, - գրել են Ս. Ս. Գոլունսկին և Մ. Ս. Ստրագովիչը, - որ տիրապետող դասակարգը հատուկ հարկադրանքի ապարատի օգնությամբ իր կամքը բռնի կերպով փաթաթում է ամբողջ հասարակությանը. պետությունը միշտ տիրապետող դասակարգի դիկտատուրա է»¹⁶: Ա. Ի. Դենիսովը, հենվելով մարքսիզմ-լենինիզմի դասականների եզրակացությունների վրա, գտնում էր, որ «պետություն է կոչվում հենց այն հատուկ կազմակերպությունը, որի միջոցով դասակարգն իրականացնում է ոչ մի օրենքով չսահմանափակված իր իշխանությունը՝ դիկտատուրան»¹⁷:

«Պետության և իրավունքի տեսություն» դասագրքի հեղինակները՝ Մ. Պ. Կարևան, Ս. Ֆ. Քեչեկյանը, Ա. Ս. Ֆեդոսենը, Տ. Ի. Ֆեդկինը, պետության մեջ առանձնացնում են երկու դասակարգային տարրեր՝ ներքին և արտաքին: Նրանք հանգում են այն եզրակացությանը, որ «պետությունը տնտեսապես տիրապետող դասակարգի քաղաքական կազմակերպություն է, իշխանության ապարատ, որի միջոցով այդ դասակարգն իրականացնում է դիկտատուրան, իր դասակարգային հակառակորդներին պահում հնազանդ վիճակում և իր գոյության նյու-

թական միջոցները պաշտպանում է թշնամական ուժերից, դրանց նկատմամբ ամեն տեսակի ոտնձգություններից ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս»¹⁸:

Անցյալ դարի 60-70-ական թվականների աշխատություններում «պետություն» հասկացությունը քննարկվում է առավել համապարփակ և ոչ այդքան խիստ դասակարգային դիրքերից: Այսպես, «Պետության և իրավունքի՝ մարքս-լենինյան ընդհանուր տեսություն» բազմահատոր հրատարակության հեղինակները գտնում են, որ պետությունը «պատմականորեն անցողիկ, հասարակությունից առանձնացված և նրա տնտեսակարգով պայմանավորված քաղաքական անկախ իշխանության՝ դասակարգային կազմակերպություն է, որն ապահովում և պաշտպանում է արտադրության համական միջոցների սեփականատերերի ընդհանուր շահերը»¹⁹: Պետության բնորոշումը որոշ չափով կոնկրետացնում է պրոֆեսոր Ս. Ս. Ալեքսենի խմբագրությամբ «Պետության և իրավունքի տեսություն» դասագիրքը: Դասագրքում պետությունը դիտվում է որպես «տնտեսապես տիրապետող դասակարգի իշխանության կազմակերպություն, սոցիալիստական հասարակարգում աշխատավորների՝ բանվոր դասակարգի գլխի սովորությամբ, որն իր տրամադրության տակ ունի հարկադրանքի հատուկ ապարատ և իր հրամաններին տալիս է պարտադիր ուժ երկրի ամբողջ բնակչության համար»²⁰:

Դասակարգայնությունը որպես ցանկացած պետության կարևորագույն հատկանիշ՝ ընդունվել է խորհրդային իրավաբանների մեծ մասի կողմից: Այսպես, Վ. Ս. Պետրովը գտնում է, որ «պետության բնորոշումն ընդհանրապես, իսկ որոշակի պատմական տիպը՝ մասնավորապես, հնարավոր է միայն պետության՝ մարքսիստական դիալեկտիկական հասկացության հաշվարկմամբ, որը բացահայտում է

14. Տե՛ս **Ленин В. И.** Полн. Собр. соч. Т.39, с. 75.

15. Տե՛ս **Маркс К.**, Энгельс Ф. Соч. Т.4, с.436.

16. Տե՛ս **Голунский С. А.**, Строгович М. С. Конспект по теории государства и права, М. 6, 1940, с. 53.

17. Տե՛ս **Денисов С. И.** Теория государства и права. М. 6 1967. с. 21-22.

18. Տե՛ս Теория государства и права. М. 6 1955. с. 50-51.

19. Տե՛ս Марксистско-ленинская общая теория государства и права. Основные институты и понятия, М., 1970, с. 216.

20. Տե՛ս Теория государство и права. Под ред. **С. С. Алексеева**, М., 1987, с. 29-30.

նրա դասակարգային էությունը»²¹:

Պետության վերաբերյալ հայացքների բազմազանությունը պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ պետությունն իրենից ներկայացնում է արտակարգ բարդ, բազմակողմանի և պատմականորեն փոփոխվող երևույթ: Այդ հայացքների գիտականությունը որոշվում է հասարակության զարգացման, այս կամ այն փուլում մարդկային մտքի հասունությամբ պետության ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցման օբյեկտիվությամբ:

Պետության օրինաչափ հատկությունների ու հատկանիշների իմացությունն «ընդհանրապես», ըստ երևույթին, հնարավոր է միայն որոշակի պատմական հեռանկարում, պետական կազմակերպված հասարակության բովանդակությունն ու կառուցվածքը բնորոշ տնտեսական, սոցիալական, կրոնական, ազգային, հոգևոր, բնապահպանական և այլ գործոնների՝ մշտապես փոփոխման պատճառով: Ավելին, հաճախ պետության մասին հասկացությունը տրվում է ոչ թե պատմական իրականության, այլ իդեալական պատկերացման մեջ: Փոխանակ բնորոշելու, թե ինչ է պետությունը, հաճախ միայն նկարագրում են՝ ինչպիսին այն պետք է լինի: Պետության հասկացությունը բնորոշելիս մեթոդաբանական խնդիրը, ինչպես նշում է Շերշենևիչը, այն է, որ հարկ է տալ «պետություն» անվանումը կրող պատմական երևույթի հատկանիշները: Այստեղից բխում է, որ իրականության հիման վրա բնորոշելով հասկացությունը՝ մենք այդ հասկացության մեջ չպետք է մտցնենք իրականում գոյություն չունեցող ինչ-որ բան, իսկ մյուս կողմից պետք է վերցնենք տվյալ սեռի ողջ իրականությունը՝ թույլ չտալով կամայական ընտրություն: Պետության բնորոշումը պետք է պատասխանի այն հարցին, թե ինչ է պետությունն իր պատմական իրականու-

թյան մեջ և իր բոլոր դրսևորումներով²²:

20-րդ դարի 80-90-ական թվականների սկզբներին ռուսական իրավագիտությունում պետության հիմնական էությունը տեսնում էին նրա համասոցիալական գործունեության մեջ, իսկ պետությանը դիտարկում էին որպես քաղաքական իշխանության կազմակերպման ու գործառնության՝ իրավական ձև²³: Պրոֆեսոր Վ. Ե. Չիրկինը գտնում է, որ պետության էությունն արտահայտվում է հետևյալ երեք բնութագրական հատկանիշներում՝ ա) որպես համապարփակ քաղաքական կազմակերպություն, բ) որպես պետություն – արբիտր, գ) որպես լեգալացված (օրինականացված) հարկադրանքի ինստիտուտ²⁴: Իսկ պրոֆեսոր Յու. Ա. Տրիխմիրովը գտնում է, որ պետությունն իրականացնում է հետևյալ երեք կատեգորիայի գործերը՝ դասակարգային, ընդհանուր (համասոցիալական գործառույթ) և միջազգային, որի հետևանքով հանրային իրավունքը հնարավորություն է տալիս պետությունը դիտարկել ավելի լայն իրավական համատեքստում²⁵:

Արևմտյան մասնագիտական գրականությունում իրավագիտորեն գերիշխում է այն մտայնությունը, ըստ որի՝ պետությունը պետք է դիտարկել իրավունքի տեսանկյունից²⁶:

Ըստ պրոֆեսոր Ս. Ս. Ալեքսենի՝ իրավունքի հիմնարար (իրենց անցած նշանակությամբ՝ հավերժական) սկզբունքներն իրենց մեջ խտացնում են իրավունքի յուրահատուկ ուժը՝ «օբյեկտիվացված բանականությունը»²⁷:

Շարունակելով իր միտքը՝ պրոֆեսորը գտնում է, որ այդպիսի հիմնարար իրավական արժեքներ են իրավունքի՝ «հատուկ նորմատիվ – իրավաբանական կառուցվածքը» (մշտապես գործող համապարտադիր նորմերի համակցություն²⁸, որը երաշխավորված է պետության կողմից), «իրավական կառուցվածքները»:

Հատուկ նորմատիվ – իրավական կառուց-

21. Տե՛ս **Петров В. С.** Сущность содержание и форма государства. Л., 1971, с. 6.

22. Տե՛ս **Շերշենևիչ Գ. Ֆ.**, նշվ. աշխ., էջ 201:

23. Տե՛ս **Нерсисянц В. С.** Право и закон. М., 1983, с. 330-359; **Четвертнин В. А.** Размышления по поводу теоретических представлений о государстве. – «Государство и право», 1992, N 5.

24. Տե՛ս **Чиркин В. Е.** Элементы сравнительного государственоведения. М., 1994, с. 6-13.

25. Մանրամասն տե՛ս **Тихомиров Ю. А.** Публичное право. М., 1995, с. 82-134, 266-329; Он же: Государство на рубеже столетий.- "Государство и право. 1997, N2, с. 25-32.

26. Տե՛ս, օրինակ, **John Akler.** Constitutional and Administrative Law, second edition, London, 1994, p. 3-59.

27. Տե՛ս **Алексеев С. С.** Тайна право. Его понимание, назначение, социальная ценность.- М., Изд- во НОРМА. 2001, с. 92.

28. Տե՛ս **Алексеев С. С.**, նշվ. աշխ., էջ 93

վածքի՝ արժեքային հատկանիշի շնորհիվ «իրավական նորմերն իրենցից ներկայացնում են յուրահատուկ նմուշներ (մոդելներ) հավերժության համար», որոնց միջոցով հասարակությունում փորձի և ողջախոհ որոշումների հիման վրա ապահովվում է մարդկանց վարքագծի՝ հուսալի և անընդմեջ գործող հակասություններից զերծ համակարգ (իհարկե պատշաճ կազմակերպվածության և օրինականության պահպանման դեպքում), որտեղ կանխատեսելի է մարդկանց վարքագիծն անորոշ երկարատև ժամանակ²⁹: Հենց պրակտիկ կյանքում է արտահայտվում իրավունքը որպես համապարփակ նորմատիվ-կարգավորչի, «օբյեկտիվացված բանականության» սոցիալական արժեքը:

Ըստ պրոֆ. Ս. Ս. Ալեքսեևի՝ իրավական հիմնարար արժեքներից են նաև, այսպես կոչված, «իրավաբանական (իրավական) կառուցվածքները (կոնստրուկցիաները)»։ օրինակ՝ «սեփականության իրավունք», «իրավախախտում», «պարտավորություն» և այլն³⁰:

Այդպիսի իրավաբանական կառուցվածքի և իրավաբանական տեխնիկայի սքանչելի ստեղծագործություններ են հռոմեական իրավունքի կարևորագույն հուշարձաններից «Դիգեստները», նոր և նորագույն ժամանակներում Գերմանիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքերը և այլն: Նշված ակտերում արտացոլված են իրավունքի՝ որպես սոցիալական արժեքի ինչպես բովանդակային էությունը (ազատությունը, արդարությունը, հավասարությունը, այլ համամարդկային սկզբունքներն ու գաղափարները), այնպես էլ արտաքին - ձևական վայրը, իրավաբանական կառուցվածքը և իրավաբանական տեխնիկան (կուռ տրամաբանական կառուցվածքը, լակոնիկ ոճը, տերմինաբանական միատեսակությունը և այլն):

Պետությունը որպես սոցիալական արժեք է դիտում նաև պրոֆեսոր Վլ. Նազարյանը: Ըստ

նրա՝ «Պետությունը ամբողջությամբ վերցրած, պետական մարմինները և պաշտոնատար անձինք գործում են իշխանության միակ տիրոջից՝ ժողովրդից, նրանց տրված մանդատի շրջանակներում, որը մարդուն և ժողովրդին (ազգին) պատկանող բնական և անօտարելի իրավունքների և ազատությունների կենսագործմանը նպաստելու, այն ապահովելու արտոնագիր է և ոչ ավելի»³¹: «Պետությունը - շարունակում է Վլ. Նազարյանը, - ժողովրդի շահերի սպասավորն է, նրա կամքի գործադրողը և ոչ ավելին: Պետությունը, բոլոր իշխանությունները, մարմինները և պաշտոնատար անձինք գործում են բացառապես ժողովրդից տրված արտոնագրի հիման վրա»³²:

Ըստ ամերիկացի սոցիոլոգ Թ. Պարսոնի՝ «Արժեքները... դրանք սոցիալական համակարգի բաղկացուցիչ մասերն են... ցանկալի սոցիալական համակարգի վերաբերյալ համընդհանուր պատկերացումները»³³:

Իրավացի է Ի. Գ. Յակովենկոն, երբ պնդում է, որ մեր պատկերացումները «Մեծ հասարակության» (այսինքն՝ պետականորեն կազմակերպված հասարակության) մասին, ենթակա են արմատական վերափոխության և պետականությունը պետք է դիտել որպես քաղաքակրթության մեծագույն արժեքներ³⁴:

Իհարկե, այստեղ և քննարկվող հիմնահարցերում խոսքը գնում է ընդհանրական հասկացությունների՝ պետականության և իրավունքի մասին, այլ ոչ թե կոնկրետ պատմական դարաշրջանի՝ այս կամ այն պետության, պետական կառուցվածքի, կառավարման ձև, քաղաքական ռեժիմի և իրավական համակարգի մասին: Թեպետ հարկ է ասել, որ վերջիններիս կարևորությունը կոնկրետ պետության արժեքավորման խնդրում ակնհայտ է: Գիտնականներից ոմանք՝ օրինակ Լ. Ս. Մամուտը, պետության արժեքային հատկանիշներն է համարում ինքնիշխանությունը և պետական իշխանության լեգիտիմությունը, պետության ներքին և արտա-

29. Տե՛ս **Алексеев С. С.**, նշվ. աշխ., էջ 93:

30. Տե՛ս նույն տեղում, էջ 94-95:

31. Տե՛ս **Վլ. Նազարյան**, ՀՀ Սահմանադրության կոնցեպցիան, Երևան, «Գոշ», 1992, էջ 16:

32. Տե՛ս նույն տեղում, էջ 23:

33. Տե՛ս **Парсонс Т.** Общий обзор - в кн. Американская социология. Перспективы. Проблемы. Методы. М., 1972, с. 368; տե՛ս նաև **Смезлер Н.** Социология. М., 1994, с. 660.

34. Տե՛ս **Ахиезер А. С., Яковленко И. Г.** Что же такое общество? - "Общественные науки и современность", N3, 1997, с. 37.

քին անվտանգությունը, ընդհանուր բարօրությունը, իրավակարգը և այլն³⁵: Սակայն մեր կարծիքով՝ այդ հատկանիշներն ինքնին վերցրած, ըստ էության, հասարակության համար մեծագույն կամ պարզապես արժեք չեն ներկայացնում: Հասարակության համար որպես սոցիալական արժեք կարող է հանդիսանալ մեկ միասնական համակարգը՝ տվյալ դեպքում պետությունը (կամ պետականությունն իր բոլորատրիբուտներով հանդերձ), ինքնիշխանությամբ, իրավակարգով, ներկայացուցչական մարմիններով, ընտրական համակարգով, իրավական համակարգով և այլն:

Ամփոփելով կարելի է նշել, որ եթե անտիկ դարաշրջանում պետությունն ընկալվում էր իբրև քաղաքական հարաբերություններով կապված մարդկանց միություն (Արիստոտել, Յիցերոն), միջնադարում պետականությունը հասկացվում էր որպես մեկ միասնական աստվածապետություն, ապա նոր և նորագույն շրջանում՝ որպես ազատ մարդկանց՝ կատարյալ միություն:

Մեր կարծիքով՝ պետության սոցիալական արժեքավորումն ամենից առաջ դրսևորվում է հասարակությունում նրա համասոցիալական գործառույթների իրականացմամբ, որոնք արտահայտում են և՛ քաղաքական, և՛ սոցիա-

լական, և՛ տնտեսական, և՛ իրավական, և՛ միջազգային բնագավառներում:

Լինելով հարաբերականորեն ինքնուրույն կատեգորիաներ՝ պետությունը և իրավունքն առանձին - առանձին չեն կարող գոյություն ունենալ: Այդ կատեգորիաներն օրգանապես կապված ու փոխապայմանավորված են և նրանց սոցիալական արժեքը պայմանավորված է հենց դրանց անխզելի միասնությամբ:

Պետության և իրավունքի՝ որպես մեկ միասնական իրավական երևույթների սահմանումներ, առավել ամբողջական և տեսականորեն հիմնավորված մշակել է ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցն իր աշխատություններում³⁶: Ըստ Վ. Ս. Ներսիսյանցի՝ պետությունը ոչ միայն իրավական կատեգորիա է, այլև սոցիալական արժեհամակարգ, որում պահպանվում է մարդու իրավունքները, անվտանգ ու բարեկեցիկ կյանքը:

Այսպիսով, պետությունը հանդիսանալով որպես քաղաքակրթության զարգացման արդյունք՝ միևնույն ժամանակ իրենցից ներկայացնում է սոցիալական մեծագույն արժեք, որն արտահայտում է պետության էությունը և առաքելության հասարակության քաղաքական համակարգում:



35. Մանրամասն տե՛ս **Мамут Л. С.** Государствов ценностном измерени. -М.: 1998, с. 12-16:
 Бутенко А.П. Государство, его вчерашние и сегодняшние трактовки// Государство и право 1993, N7.

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ, ասպիրանտ

**«EX-OFFICIO» ԵՎ ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ ՍԿՉՐՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Վարչական արդարադատությունը հիմնված է որոշակի սկզբունքների վրա, որոնք արտացոլված են իրավական նորմերում և հանդիսանում են վարչական արդարադատության իրականացման ուղենիշներ:

Վարչական դատավարության սկզբունքները վարչական դատավարության իրավունքի նորմերում ամրագրված դրույթներն են, որոնք ընկած են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերով արդարադատության իրականացման հիմքում և արտահայտում են վարչական դատավարության առանձնահատկություններ¹:

ՎԴՕ-ի 5-9-րդ հոդվածներով սահմանված են վարչական դատավարության սկզբունքները: Դրանք են գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելը, վարչական դատավարության իրականացումը կողմերի իրավահավասարության հիման վրա, գործերի քննության բանավորությունը, դատական վարույթի հրապարակայնությունը, վարչական դատավարությունը պետական լեզվով իրականացնելը:

Վերը նշվածը չի վկայում այն մասին, որ ՎԴՕ-ն սահմանափակվել է միայն հինգ սկզբունքներով, իսկ դատավարության մյուս հանրաճանաչ սկզբունքները կիրառելի չեն համարվում: Այն, որ ոչ միայն միջազգային իրավունքի նորմերով, այլև ազգային օրենսդրությամբ սահմանված դատավարության նաև մյուս սկզբունքներն են տարածվում վարչական

դատավարության վրա, խոսում է ՎԴՕ 2-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հետևյալ դրույթը. «Վարչական դատավարության կարգը սահմանվում է սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով»:

Մինչդեռ, հարկ է նկատել, որ վարչական դատավարության սկզբունքների մասով ՎԴՕ-ում բացակայում է որևէ նորմ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կկարգավորեին այդ հարցը, սակայն ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի նորմերը տարածվում են ամբողջությամբ, ինչը նշանակում է, որ վարչական դատավարության սկզբունքներ են համարվում նաև հիշյալ օրենսգրքով սահմանված սկզբունքները:

Համադրելով վերը նշված իրավական դիրքորոշումները և գործող օրենսդրությունը՝ կարելի է առանձնացնել դատավարության հետևյալ ընդհանուր սկզբունքները՝

- ա) արդարադատության իրականացումը Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան,
- բ) դատավարության իրականացումը կողմերի իրավահավասարության հիման վրա,
- գ) կողմերի մրցակցությունը,
- դ) գործերի քննության հրապարա-

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

1. Տե՛ս **Ярков В. В.**, Административное судопроизводство, Учебник для студентов высших учебных заведений, Уральский государственный юридический университет, Екатеринбург - Москва, 2016, էջ 9:

կայնությունը,

ե) վարչական դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելը,

զ) դատավարության լեզուն,

է) դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն Սահմանադրությանն ու օրենքին,

ը) գործերի քննության բանավորությունը,

թ) արդարադատության մատչելիությունը:

Թվարկված սկզբունքների շարքում «ex officio» սկզբունքը, հանդիսանալով վարչական դատավարության առանձնահատկություններն ընդգծող սկզբունք, պայմանավորում է նաև վարչական դատավարությունում այլ սկզբունքների դրսևորման առանձնահատկությունները²:

Դատավարագետները, ուսումնասիրելով այս սկզբունքի հարաբերակցությունը վարչական դատավարության այլ սկզբունքների հետ, առանձնացնում են իրավական այն հարցադրումը, թե արդյոք «ex officio» սկզբունքի ամրագրումը և ըստ այդմ դատարանին ակտիվ լիազորություններով օժտելը չի խոչընդոտում վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքի իրացմանը³:

Մրցակցության սկզբունքը դատավարության համընդհանուր սկզբունք է և բնորոշ է վարչական դատավարությանը ևս, սակայն այն ունի որոշ առանձնահատկություններ: Այս սկզբունքի հայեցակարգը մանրամասն մշակվել է Ա. Խ. Գոլստենի կողմից, որը մրցակցության սկզբունքը

սահմանում էր որպես սկիզբ, որի ուժով կողմերի դիմումից է կախված, թե դատարանը ինչպես կգործի: Այսինքն՝ վիճող կողմերը հանդիսանում են դատավարության լիիրավ տերը, իսկ դատարանը օբյեկտիվ դիրք է գրավում⁴:

Մինչխորհրդային շրջանում մրցակցության սկզբունքի մասին մոտեցումները իրարամերժ էին, շատ դեպքերում՝ նաև հակասական: Այսպես, օրինակ՝ Մ. Բերնարդը, մերժելով դատավարությունում «մաքուր մրցակցությունը», նշում էր, որ դատավորն այդ դեպքում դառնում է անտարբեր, որին արդարադատությունը քիչ է հետաքրքրում⁵:

Մրցակցության սկզբունքն առավել խորը վերլուծության ենթարկվեց խորհրդային շրջանի դատավարագետներ Մ. Ավդյուկովի, Ս. Կուրիլևի, Վ. Տարանենկոյի, Մ. Տրեուշնիկովի և այլոց կողմից: Մ. Ավդյուկովը և Ա. Կլեյմանը գտնում էին, որ դատավարության մրցակցության սկզբունքը օբյեկտիվ ճշմարտությունը պարզելու հիմնական խոչընդոտն է, և այս սկզբունքի համաձայն՝ դատարանը որոշման հիմքում կարող է դնել միայն այն փաստերը, որոնք վկայակոչում են կողմերը, կամ կարող է օգտագործել միայն այն ապացույցները, որոնք ներկայացրել են կողմերը և այլն: Այսպիսի կարգը դատավարությունում հաղթանակ կարող է ապահովել ոչ թե նրան, ով ճիշտ է, այլ նրան, ով իրավաբանական օգնության համար հնարավորություն ունի վճարելու այն փաստաբանին, որն ավելի փորձառու է և կարողացել է օգտվել մյուս կողմի վրիպումներից⁶:

2. Տե՛ս **Phillips D.**, The Inquisitorial Aspects of an Adversarial System //Med. Sci. & L., T. 42, 2002, էջ 98:

3. Տե՛ս **Henrichsen C.**, "Administrative Justice in a Scandinavian Legal Context: From a Liberal and a Social State to a Market State or a Milieu State." Administrative Justice in Context, Ed. Michael Adler, London, Hart Publishing, Bloomsbury Collections, 2010, էջ 321–350:

4. Տե՛ս **Гольстмен А.Х.**, Составительное начало гражданского процесса в теории и русском законодательстве, Юридические исследования и статьи, СПб, 1884, էջ 404:

5. Տե՛ս **Бернард М.**, Предполагаемые изменения в процессуальном законодательстве // Судебная газета, N 19, 1980թ., էջ 4:

6. Տե՛ս **Авдюков М. Г., Клейнман А. Ф., Треушников М. К.**, Основные черты буржуазного гражданского процессуального права, Москва, 1978, էջ 18-20:

Իսկ, օրինակ, Ս. Վ. Վասիլևի կարծիքով՝ դատավարության մրցակցային ձևը նպատակաուղղված է գործով փաստական հանգամանքները և արդարությունը բացահայտելուն⁷: Նրա մատնանշամբ մրցակցության սկզբունքի էությունը հիմնականում հետևյալում է՝

- դատարանի գործողությունները կախված են հայցվորի պահանջներից և պատասխանողի առարկություններից. դատարանը գործը քննում է կողմերի ներկայացրած պահանջների ծավալով,

- ապացուցողական միջոցների օգտագործման հնարավորության ազատություն է տրված կողմերին,

- յուրաքանչյուր կողմ ապացուցում է փաստեր, որոնք ընկած են իր պահանջի և առարկության հիմքում,

- դատարանը կարող է առաջարկել կողմերին ներկայացնել լրացուցիչ ապացույցներ⁸:

Չեխիայի Գերագույն դատարանի փոխնախագահ, ի. գ. դ. Մ. Մրցելայի բնորոշմամբ՝ մրցակցության սկզբունքը (audire altera parte) ենթադրում է, որ դատավարական գործողություններն իրականացվում են կողմերի ներկայությամբ, որոնք ունեն հնարավորություն այդ գործողությունների իրականացման ընթացքում ներկայացնել իրենց շահերը և արտահայտել սեփական դիրքորոշումը⁹:

Մրցակցության սկզբունքի էությանը և դրա բովանդակության բացահայտմանն անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը՝ նշելով, որ արդար դատաքննության հասկացությունը

ներառում է մրցակցային դատավարության՝ հիմնարար իրավունքը¹⁰: Ընդ որում, ՄԻԵԴ-ի կողմից ձևավորած դիրքորոշման համաձայն՝ մրցակցության սկզբունքը ենթադրում է՝

- կողմերին տրված հնարավորություն՝ ներկայացված ապացույցներին ու փաստարկներին ծանոթանալու և դիրքորոշում արտահայտելու,

- ներկայացված ապացույցների իսկության վերաբերյալ դիրքորոշում հայտնելու հնարավորություն,

- իրենց պահանջների բավարարման համար անհրաժեշտ ապացույցների վերաբերյալ դատարանին հայտնելու հնարավորություն¹¹:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 15.12.2004 թվականի «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ 2004 (20) հանձնարարականով ևս մատնանշվել է վարչական դատավարության մրցակցային բնույթը:

Անդրադառնալով վարչական դատավարությունում այս սկզբունքի դրսևորման առանձնահատկություններին՝ Ե. Ա. Սապրիկինան նշել է, որ վարչական դատավարությունում բացառապես մրցակցային մոտեցումը չի կարող երաշխավորել անձանց հանրային իշխանության մարմնի գործողությունների հետևանքով խախտված իրավունքների պաշտպանությունը¹²:

Տ. Մ. Յաբլոչկովի պնդմամբ՝ երբ դատարանին վերապահված չէ ակտիվ դերակատարություն, ապա հաճախ վճիռը

7. Տե՛ս **Завадская Л. Н.**, Гражданский процесс: в схемах с комментариями, Москва, 2010, էջ 14:

8. Տե՛ս **Васильев С. В.**, Гражданский процесс, Учебное пособие, Харьков, Одиссей, 2007, էջ 45:

9. Տե՛ս **Mrčela M.**, Adversarial principle, the equality of arms and con frontational right-european court of human rights recent jurisprudence //EU and comparative law issues and challenges series, 2018, էջ 15-31:

10. Տե՛ս European court of human rights, case of Regner v. Czech Republic, application number 35289/11, adopted in 19.09.2017.

11. Տե՛ս European court of human rights, case of Regner v. Czech Republic, application number 35289/11 adopted in 19.09.2017, case of Affaire immeubles group v. France, application number 38748/97, adopted in 21.02.2002, case of Gaspari v. Slovenia, application number 21055/03, adopted in 21.07.2009.

12. Տե՛ս **Сапрыкина Е. А.**, Принцип активной роли суда в административном судопроизводстве, журнал административного судопроизводства, N 3, 2017, էջ 74:

կայացվում է այն կողմի օգտին, որն առավել խելամիտ է վարում գործը, իսկ ոչ փորձառու կողմը, չներկայացնելով անհրաժեշտ ապացույցները և չկարողանալով հիմնավորել իր պահանջները, հայտնվում է անբարենպաստ վիճակում: Հենց վարչական դատավարությունում անթույլատրելի է տարվել ֆորմալիզմով: Գործի քննությունը և հատկապես ապացուցման գործընթացն անհրաժեշտ է վարել՝ հաշվի առնելով հանրային իրավական հարաբերությունների՝ ամբողջ առանձնահատկությունները: Այդպիսով, վարչական դատավարության՝ ինկվիզիցիոն-մրցակցային բնույթի ամրագրումն անկասկած անհրաժեշտություն է¹³:

Ինչպես արդարացիորեն նշում է Օ. Վ. Պանկովան՝ հաշվի առնելով հանրային իրավահարաբերություններում կողմերի անհավասար կարգավիճակը՝ անհրաժեշտ է դատարանին օժտել մրցակցությանը միջամտելու լայն հնարավորություններով: Հեղինակի կարծիքով՝ դատարանին նման լիազորություններ վերապահելը կօգնի խուսափել հանրային իշխանության մարմինների կողմից «ապացույցները շահարկելուց»: Այս իրավիճակում դատարանը հանդես է գալիս որպես ապացուցման սուբյեկտ, որը ոչ միայն օժանդակում է կողմերին ապացուցման պրոցեսում, այլ ինքն է հավաքում ապացույցներ՝ լրացնելով վարչական մարմնի բացթողումները¹⁴:

Գերմանացի դատավարագետների պնդմամբ՝ վարչական դատավարությունում մրցակցությունը դրսևորվում է՝

1) վարչական մարմնի, պաշտոնատար անձի կողմից վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ

առարկությունները ներկայացնելով,

2) ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ապացույցների ներկայացմամբ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այն փաստերի վկայակոչմամբ, որոնց վրա հիմնվում են նրանց պահանջները,

3) դատարանը, պահպանելով անաչառությունն ու անկողմնակալությունը, ղեկավարում է ապացուցման գործընթացը, կողմերին պարզաբանում նրանց իրավունքներն ու պարտականությունները, պայմաններ է ստեղծում ապացույցների բազմակողմանի և լրիվ հետազոտման համար՝ գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելով, ապացույցներ պահանջելով, իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելով¹⁵:

Վարչական դատավարությունում քննարկվող սկզբունքների զուգակցման փորձ է կատարվել Ռուսաստանի Դաշնության՝ վարչական դատավարության օրենսգրքում, որը նախատեսել է դատարանի ակտիվ դերակատարությամբ կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքը:

Ռուս իրավագետների կողմից այս սկզբունքի՝ նման բովանդակությամբ ձևակերպումը խնդրահարույց է համարվել այն հիմնավորմամբ, որ դատարանի ակտիվությունը ենթադրում է գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանն ուղղված գործողություններ, որոնք, իրենց հերթին, բացառում են մրցակցությունը և կողմերի ակտիվությունը:

Ինչպես նշում է Ա. Պ. Յակովլևան՝ սկզբունքի այսպիսի ձևակերպումը տարբերվում է այլ դատավարություններում մրցակցության սկզբունքի ձևակերպումից, քանի որ մրցակցության սկզբունքը, որպես կանոն, ենթադրում է դատարանի

13. Снѣ Яблочков Т. М., Учебник русского гражданского судопроизводства, Ярославль, 1910, էջ 326:

14. Снѣ Панкова О. В., Принципы административного судопроизводства и проблемы их реализации в судах общей юрисдикции/ Международный экспертный семинар «Роль административной юстиции в защите прав человека», Москва, 2010, էջ 77.

15. Снѣ Kramer U., Hinrichsen T., German Law of Administrative Court Procedure: an Overview, 2015թ., էջեր 2050-2061.

պասսիվ դերակատարություն: Մրցակցության սկզբունքը պոստուլատ է, որը սահմանափակում է դատարանի ակտիվությունը¹⁶:

Ա. Վ. Գլոդինայի կարծիքով՝ առավել հիմնավոր է թվում առանձին ամրագրել մրցակցության ու իրավահավասարության սկզբունքը և դատարանի ակտիվության սկզբունքը՝ չնսեմացնելով դրանց նշանակությունը վարչական դատավարությունում¹⁷:

Ա. Յակովլևայի կարծիքով և՛ մրցակցության և դատարանի ակտիվ դերակատարության սկզբունքների առանձին ամրագրումը և դրանց իրացումը վարչական դատավարությունում խիստ անհրաժեշտ է¹⁸:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ ընդունված է վարչական դատավարությունում մրցակցության և «ex officio» սկզբունքների՝ առանձին ամրագրման մոտեցումը: Մինչդեռ, հարկ է նկատել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի, որոնցով ամրագրվել է մրցակցության սկզբունքը, ոչ նախկին և ոչ ներկայիս ՎԴՕ-ն մրցակցության սկզբունքը չի նախատեսել վարչական դատավարության սկզբունքների շարքում:

Օրենսդրի նման մոտեցումը, և միաժամանակ ՎԴՕ 28-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, որը պարտավորեցնում է վարչական մարմինն՝ ներկայացնելու ոչ միայն իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում

է իր պահանջները կամ առարկությունները, այլև տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, հիմք են տվել ինչպես իրավագիտության, այնպես էլ իրավակիրառ գործունեությունում ելակետ ընդունելու այն դիրքորոշումը, ըստ որի՝ վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքը չի գործում¹⁹: Ավելին, նշվում է, որ «ex officio» սկզբունքի իրացման պայմաններում անհնար է մրցակցության սկզբունքի ապահովումը:

Իսկ, օրինակ, Գ. Բ. Դանիելյանի կարծիքով՝ մրցակցության, ինչպես և կողմերի իրավահավասարության սկզբունքներն անվերապահորեն գործում են նաև վարչական դատավարությունում. դրանք ունեն որոշակի դրսևորման առանձնահատկություններ²⁰:

Համակարծիք լինելով վերոգրյալ դիրքորոշման հետ՝ գտնում ենք, որ մրցակցության սկզբունքն առկա է վարչական դատավարությունում, քանի որ մրցակցության պայմաններում գործի քննության իրավունքը հանդիսանում է եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր, որի երաշխավորումը պետության պոզիտիվ պարտականությունն է:

Ընդ որում, Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքի դրսևորման առանձնահատկու-

16. Տե՛ս **Орлов А. В.**, Активная роль суда в административном судопроизводстве //Российский судья, №. 8, 2016, էջ 12-15:
 17. Տե՛ս **Глодина А. В.**, Реализация активности суда в административном судопроизводстве, журнал административного судопроизводства, N 3, 2017, էջ 69:
 18. Տե՛ս **Яковлева А. П.**, Состязательность административного судопроизводства и активная роль суда //Вестник Поволжского института управления, №. 6 (51), 2015, էջ 111:
 19. Տե՛ս **Դանիելյան Գ. Բ.**, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, նվիրվում է Ա. Եսայանի ծննդյան 100-ամյակին, գլխ. խմբագիր՝ Գ. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2015, էջ 98-123:
 20. Նույն տեղում, էջ 114:

յուններին, նշել է, որ այդ սկզբունքն իր միակերպ դրսևորումը չի կարող ունենալ արդարադատության տարբեր բնագավառներում (քաղաքացիական, քրեական, վարչական, սահմանադրական): Այդ առանձնահատկությունները մանրամասնված են օրենսդրության՝ համապատասխան ակտերում: Դատաքննության մրցակցության սկզբունքի՝ այս կամ այն դրսևորումները պայմանավորված են վիճելի իրավահարաբերության բնույթով, սուբյեկտների կազմով, դատարանի առջև դրված կոնկրետ խնդիրների շրջանակով և այլն²¹:

Գտնում ենք, որ թեև ՎԴՕ-ով մրցակցության սկզբունքը ամրագրված չէ որպես վարչական դատավարության առանձին սկզբունք, այդուհանդերձ, այն, այս դատավարությանը բնորոշ և հատկապես դատարանի ակտիվ դերով պայմանավորված առանձնահատկություններով, արտացոլված է ՎԴՕ 28-րդ և 29-րդ հոդվածներում: Այսպես՝

1) կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները,

2) վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները,

3) ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իրավասու է կայացնելու որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով՝ դրանք պահանջելով դատավարության այն մասնակիցներից, պետական և տեղական ինքնակառավարման այն մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև դատավարությունում չներգրավված ֆիզիկական և իրավա-

բանական այն անձանցից, որոնց ազդեցության ոլորտում են դրանք կամ պետք է լինեն՝ սահմանելով ժամկետ այդ ամենը դատարան ներկայացնելու համար,

4) ապացուցման բեռի բաշխումը կախված է ներկայացված հայցատեսակից և, որպես կանոն, դրված է վարչական մարմնի վրա: Միայն մի դեպքում է ապացուցման բեռը վերապահված ֆիզիկական կամ իրավաբանական անձին. խոսքը ճանաչման հայցով որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստերի մասով ապացույցներ ներկայացնելու պարտականության մասին է:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ մրցակցության սկզբունքի՝ նշված առանձնահատկությունները լրացուցիչ բեռ են նախատեսում վարչական մարմինների համար՝ որոշակի արտոնություններ սահմանելով ֆիզիկական և իրավաբանական անձանց կտրվածքով, սակայն գտնում ենք, որ դրանք հիմնավորված են և բխում են փաստացի (դե ֆակտո) իրավահավասարություն երաշխավորելու անհրաժեշտությունից:

Այսպիսով, վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքը չի կարող դրսևորվել այնպես, ինչպես օրինակ քաղաքացիական դատավարությունում, քանի որ, օրինակ, ապացույցներ ներկայացնելը տվյալ դեպքում չի կարող առկախված լինել կողմերի հայեցողությունից:

Այսպես, վարչական մարմինը տվյալ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցները և նյութերն ունենալով իր տիրապետության տակ՝ շահագրգռված չէ դրանք ներկայացնելու դատարանին, քանի որ դրանց հիման վրա կարող է անվավեր ճանաչվել վերջինիս վարչական ակտը: Եվ պատահական չէ, որ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել,

21. Տե՛ս Սահմանադրական դատարանի 08.12.2009 թվականի թիվ ՍԴՈ-845 որոշումը:

որ վարչական մարմինները ապացույցները սահմանված ժամկետում կամ առհասարակ չեն ներկայացրել:

Ուստի, առավել ընդունելի է այն մտեցումը, ըստ որի՝ մրցակցության սկզբունքը երաշխավորվում է ոչ թե կողմերի համար նույնական կարգավիճակ սահմանելով, այլ վերջիններիս փաստացի հնարավորությունների հաշվառմամբ այնպիսի կանոններ ամրագրելով, որի արդյունքում

կողմերը փաստացի դառնում լիարժեք իրավահավասար:

Ամփոփելով մրցակցության սկզբունքի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՎԴՕ-ում ամրագրել մրցակցության սկզբունքը վարչական դատավարությունում այս սկզբունքի դրսևորման առանձնահատկությունների հաշվառմամբ:



ՌՈՄԵԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայրորդ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՆԿԱՏՄԱՐ ՈՒՂԱՐԿՈՂ ԵՎ ՀՅՈՒՐՆԿԱԼՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԶԱՐՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐՔՈՒ

Այն հանգամանքը, որ արտասահմանում գտնվող օտարերկրյա ռազմական բազայի և վերջինիս անձնակազմի նկատմամբ տարածվում է միաժամանակ ինչպես ուղարկող պետության, այնպես էլ հյուրընկալող պետության իրավազորությունը, առաջացնում է մի շարք իրավական կոլիզիաներ. մասնավորապես, հաճախ անորոշություն է առաջանում այն հարցում, թե որևէ կոնկրետ իրավիճակում ո՞ր պետության իրավազորությունն է տարածվում: Օտարերկրյա ռազմական բազաների տեղակայման դեպքում ռազմական բազաների իրավական կարգավիճակի, հյուրընկալող և ուղարկող պետությունների իրավազորությունների բաշխման հարցերը ժամանակակից միջազգային իրավունքի ներքո դեռևս չեն կարգավորվում որևէ համընդհանուր փաստաթղթով կամ միջազգային իրավունքի որևէ միասնական համակարգով, և այս հարցում գոյություն ունեցող խառը կարգավորումները անհրաժեշտություն են դարձնում միջազգային այս իրավահարաբերություններում ընդգրկված պետությունների իրավազորության բնույթի և սահմանների հստակեցումը:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել միջազգային իրավունքի ներքո առկա այն բոլոր հայեցակարգերը,

որոնց հիման վրա պայմանավորվող պետությունները փորձում են կարգավորել իրենց իրավազորությունների բաշխումը՝ շեշտը դնելով քրեական իրավազորության հետ կապված հիմնահարցերի վրա:

Այսպիսով, խաղաղ պայմաններում որևէ պետության տարածքում տեղակայված օտարերկրյա ռազմական բազայի անձնակազմը ընդհանուր առմամբ կարող է բաղկացած լինել ռազմական անձնակազմից, քաղաքացիական աշխատողներից և նրանց մերձավորներից¹: Հաշվի առնելով, որ նշված յուրաքանչյուր խմբի իրավական կարգավիճակը հյուրընկալող պետության տարածքում հիմնովին տարբեր է, և պահանջվում է տարբերակված մոտեցում՝ սույն ուսումնասիրության առարկա է հանդիսացել միայն ռազմական անձնակազմի նկատմամբ պետությունների ունեցած իրավազորության բաշխման հիմնահարցը:

Անդրադառնալով պետական իրավազորության հայեցակարգին՝ պետք է նշել, որ իրավական այս ինստիտուտը վերաբերում է պետության ունեցած իշխանությանը՝ միջազգային իրավունքի համաձայն կարգավորելու կամ այլ կերպ ազդելու մարդկանց, գույքի ու հանգամանքների վրա և արտացոլում է պետական ինքնիշխանության, պետությունների հավասար-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

1. **Frederick T. Moore**- Criminal Jurisdiction in Overseas Areas, The Journal of Politics Vol. 21, No. 2 (May, 1959), pp. 276-302, The University of Chicago Press, https://www.jstor.org/stable/2127166?read-now=1&seq=2#page_scan_tab_content (այցելությունը կայքէջ կատարվել է 20.04.2020).

րության և ներքին գործերին չմիջամտելու հիմնարար սկզբունքները²: Պետության իրավագործությունը կարելի է համարել միջազգային իրավունքի՝ նշված սկզբունքների բաղկացուցիչ մասը կամ արդյունքը, ինչը ենթադրում է, որ յուրաքանչյուր ինքնիշխան պետության տարածքում գործում է տվյալ պետության իրավագործությունը, իսկ մի պետության կողմից մեկ այլ պետության տարածքում առանց վերջինիս համաձայնության իր իրավագործության տարածումը կդիտարկվի որպես միջամտություն պետության ներքին գործերին:

Իրավական նորմեր սահմանելու, այդ նորմերը կիրառելու, ինչպես նաև անձանց և գույքի նկատմամբ դատական ընթացակարգեր իրականացնելու իշխանությունը յուրաքանչյուր ինքնիշխան պետության կարևորագույն գործառույթներն են, որոնք նկարագրվում են իրավագործության հայեցակարգի ներքո: Հետևաբար, կարելի է առանձնացնել պետական իրավագործության երեք տեսակ՝ իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան³: Ինչ վերաբերում է պետական իրավագործության հիմքերին, ապա հիմնականները առանձնացվում են հետևյալ սկզբունքների հիման վրա⁴

- տարածքային սկզբունք,
- անհատական սկզբունք,
- պաշտպանիչ սկզբունք,
- ունիվերսալ սկզբունք:

Պետական իրավագործության՝ նշված տեսակներն ու հիմքերը իրավունքի տեսության մեջ առկա ընդհանուր մոտեցումներն են, սակայն մեր նպատակն այն հիմքերի վերհանումն է, որոնք թույլ են տալիս արտասահմանում տեղակայված օտարերկրյա ռազմական բազայի՝ ուղարկող պետությանը տարածելու իր իրավագործությունը

ռազմաբազայի անձնակազմի նկատմամբ, ինչպես նաև գտնելու այն սահմանները, որոնց շրջանակներում ժամանակակից միջազգային իրավունքի ներքո կարող է տարածվել ուղարկող պետության իրավագործությունը օտարերկրյա պետության տարածքում գտնվող իր ռազմական բազայի անձնակազմի նկատմամբ՝ հարգելով պետությունների հավասարության, ինքնիշխանության և ներքին գործերին չմիջամտելու հիմնարար սկզբունքները:

Ուղարկող պետության կողմից իր ռազմական ուժերի նկատմամբ իրավագործության կիրառման ցանկացած դեպք բնույթով կհամարվի էքստրատերիտորիալ՝ պետության տարածքից դուրս: Հետևաբար, ուղարկող պետությունը չի կարող մատնանշել իրավագործության՝ տարածքային սկզբունքն արտասահմանում տեղակայված իր ռազմական ուժերի նկատմամբ իրավագործություն ունենալու համար: Անհատական կամ քաղաքացիության սկզբունքը նույնպես բավարար չէ՝ հիմնավորելու համար ուղարկող պետության իրավագործությունը, քանի որ չի կարող լինել երաշխիք, որ ռազմաբազայի բոլոր անդամները կունենան տվյալ պետության քաղաքացիությունը:

Վերոնշյալ հիմնավորումներով հանդերձ ակնհայտ փաստ է, որ միջազգային հանրությունը ճանաչում է առանձին դեպքերում պետությունների էքստրատերիտորիալ իրավագործություն իրականացնելու իրավունքը: Նշվածի ցայտուն վկայությունն է հյուպատոսական իրավունքի շրջանակներում հավատարմագրող պետության ունեցած էքստրատերիտորալ իրավագործությունը, որը միջազգային իրավունքի շրջանակներում արդեն իսկ կոդիֆիկացվել է⁵:

2. **Malcolm N.** Show-International Law, Sixth edition, Cambridge University Press, 2008, New York, p. 645.
 3. **J. Voetelink** - Status of Forces and Criminal Jurisdiction, Netherlands International Law Review, 60(2), 2013, DOI: 10.1017/S0165070X12001179.
 4. **Malcolm D. Evans**-International Law, third edition, Oxford University Press, 2010, p. 315.
 5. Vienna Convention on Consular Relations 1963; United Nations, Treaty Series, vol. 596, p. 261.

Ինչ վերաբերում է օտարերկրյա ռազմական ուժերի նկատմամբ էքստրատերիտորիալ իրավագործության կիրառելիությանը, ապա մեր կողմից այս հարցում որպես ուշադրության արժանի զարգացում է դիտարկվում 1997 թ. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից թիվ R (97) 11 ռեկոմենդացիայի⁶ ընդունումը, որով լրացումներ ներկայացվեցին «Միջազգային հանրային իրավունքի շրջանակներում պետական գործունեությանն առնչվող փաստաթղթերի դասակարգման օրինակելի պլանում»⁷ արդյունքում հստակ ամրագրելով պետությունների՝ էքստրատերիտորիալ իրավագործությունն իր հետևյալ դրսևորումներով՝

- ընդհանուր
- հյուպատոսական իրավագործություն
- իրավագործություն արտասահմանում գտնվող ռազմական անձնակազմի նկատմամբ
- այլ (արհեստական կղզիներ, *terrae nullius*⁸ և այլն):

Որոշ տեսաբաններ էլ, հաշվի առնելով պետության իրավագործության մյուս ընդունված հիմքերի կիրառելի չլինելը, ուղարկող պետության կողմից իր պետական տարածքից դուրս ռազմական անձնակազմի նկատմամբ իրավագործություն ունենալու փաստը մեկնաբանում են, այսպես կոչված, «օրգանական իրավագործությամբ»⁹, ինչը հիմնավորվում է յուրաքանչյուր պետության ունեցած իրավասությամբ՝ ազատորեն սեփական կառավարման ձևը ընտրելու և

ինքնակազմակերպվելու: Պետությունների՝ միջազգային իրավունքի կողմից ճանաչված այս իրավասությունը ընդգրկում է կառավարության բոլոր մակարդակներում մարմիններ ու ստորաբաժանումներ ստեղծելու և իր մարմիններին ու պաշտոնյաներին ղեկավարելու, համակարգելու լիազորությունը: Ըստ այդմ՝ «օրգանական իրավագործության» հայեցակարգի շրջանակներում նախատեսվում է պետության լիազորությունը տարածելու իրավագործություն իր մարմինների և պաշտոնյաների նկատմամբ¹⁰, իսկ, հաշվի առնելով, որ ազգային զինված ուժերը համարվում են պետական մարմին¹¹ պետք է եզրակացնել, որ պետության ունեցած ինքնակազմակերպվելու իրավունքը տարածվում է նաև արտասահմանում գտնվող իր ռազմական ուժերը կազմակերպելու և կառավարելու հարցի վրա:

Հյուրընկալող պետության տարածքում ուղարկող պետության կողմից իր ռազմական բազայի անձնակազմի նկատմամբ իրավագործություն ունենալու փաստը կարելի է հիմնավորել այդ ռազմական ուժերի՝ բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությամբ, այսինքն՝ որպես մեկ միասնական ռազմական միավոր և ուղարկող սուվերեն պետության մարմին հանդես գալու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ: Անշուշտ, այս հարցում հիմնավորումները կարող են նաև բազմազան լինել, սակայն անհրաժեշտ է գտնել պետական իրավագործության այն

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 117 2020

6. The Committee of Ministers of the Council of Europe Recommendation No. R (97) 11 <https://rm.coe.int/09000016804b0085> (այցելությունը կայքէջ կատարվել է 24.04.2020).
 7. Ընդունվել է 1968թ. հունիսի 28-ի ԵԽ թիվ (68) 17 բանաձևով /Council of Europe Res(68) 17 of 28 June 1968 https://www.coe.int/t/dlapil/cahdi/Source/Adopted_texts/Resolution_68_EN.pdf (այցելությունը կայքէջ կատարվել է 25.04.2020).
 8. Տարածք, որի նկատմամբ չի տարածվում որևէ պետության ինքնիշխանություն. տես Andrew Fitzmaurice-The Genealogy of Terra Nullius, Australian Historical Studies, 129, 2007 <http://surplusvalue.org.au/Misc%20Articles%20and%20Poems/terra%20nullius%20copy.pdf> (այցելությունը կայքէջ կատարվել է 25.04.2020).
 9. Aurel Sari - The Status of Armed Forces in Public International Law: Jurisdiction and Immunity, 2015, p. 19. <https://ssrn.com/abstract=2555278> (այցելությունը կայքէջ կատարվել է 25.04.2020).
 10. Finn Seyersted - Jurisdiction over Organs and Officials of States, the Holy See and Intergovernmental Organisations/ The International and Comparative Law Quarterly, Vol. 14, No. 2 (Apr., 1965), Cambridge University Press, p. 522.
 11. Draft articles on Jurisdictional Immunities of States and Their Property, with commentaries/ Yearbook of the International Law Commission, 1991, vol. II, Part Two, commentary of the draft article 2.

սահմանային բաշխումը, որը չի հակասի միջազգային իրավունքի սկզբունքներին՝ մասնավորապես պետությունների ինքնիշխանությանը և հավասարությանը:

Օտարերկրյա ռազմական բազաների նկատմամբ պետական իրավագործության բաշխման հիմնախնդրում հանդիպող առաջին կատեգորիան բացառիկ իրավագործության հասկացությունն է: Բացառիկ իրավագործությունը կիրառելի է միայն այն հանցագործությունների պարագայում, որոնք պատժելի են բացառապես միայն մեկ պետության օրենսդրությամբ¹²: Մասնավորապես, հյուրընկալող պետությունը կարող է բացառիկ իրավագործություն ունենալ միայն այն հանցագործությունների նկատմամբ, որոնք պատժելի են իր օրենսդրությամբ, իսկ ուղարկող պետության օրենսդրությամբ պատժելի չեն, և հակառակը: Մնացած դեպքերում, երբ օտարերկրյա ռազմական բազայի անձնակազմի անդամի կողմից կատարված հանցագործությունը պատժելի է և ուղարկող պետության, և հյուրընկալող պետության օրենսդրությամբ, գործ ունենք մրցակցային իրավագործության հետ¹³, և հատկանշական է, որ հենց մրցակցային իրավագործության շրջանակներում են մեծամասամբ ծագում հիմնական վեճերը:

Երբ միևնույն հանցանքը պատժելի է ինչպես ուղարկող, այնպես էլ հյուրընկալող պետությունների օրենսդրությամբ, և առկա է մրցակցային իրավագործության խնդիր, ինքնաբերաբար պետություններից մեկը հանցանքի նկատմամբ կունենա առաջնային իրավագործություն, մյուսը՝ երկրոր-

դային իրավագործություն¹⁴: Հասկանալի է, որ երկրորդային իրավագործությունը կգործի միայն այն դեպքում, երբ առաջնային իրավագործություն ունեցող պետությունը հրաժարվի իր իրավագործությունից:

Հաշվի առնելով, որ հյուրընկալող պետությունն ունի տարածքային իրավագործություն՝ կարելի է եզրակացնել, որ հանցագործությունների մեծ մասի նկատմամբ առաջնային իրավագործության իրավունքը պատկանում է հենց հյուրընկալող պետությանը: Կարող ենք ասել նաև, որ տարածքային իրավագործության շրջանակներում հյուրընկալող պետությունն իր տարածքում ունի անսահմանափակ իրավագործություն, քանի դեռ միջազգային իրավունքով որևէ սահմանափակում չի նախատեսվում: Ուստի, անհրաժեշտ է առանձնացնել հյուրընկալող պետության իրավագործության իրացման նկատմամբ միջազգային իրավական այն սահմանափակումները, որոնց համաձայն՝ ուղարկող պետությունն է ստանում առաջնային իրավագործության իրավունքը:

Հյուրընկալող պետության տարածքում ուղարկող պետության ունեցած իրավագործությունը պետք է դիտարկել, առաջին հերթին, միջազգային իրավունքի երկու ինստիտուտների հարաբերակցության համատեքստում՝ իրավագործություն և իմունիտետ:

Ինչպես ցույց է տալիս միջազգային պրակտիկայի¹⁵ ուսումնասիրությունը՝ արտասահմանում գտնվող օտարերկրյա ռազմական բազայի ռազմական անձնակազմի անդամն օժտված է առնվազն գործա-

12. **Frederick T. Moore**- Criminal Jurisdiction in Overseas Areas, The Journal of Politics Vol. 21, No. 2 (May, 1959), pp. 276-302, The University of Chicago Press, https://www.jstor.org/stable/2127166?read-now=1&seq=2#page_scan_tab_content (այցելությունը կայքէջ կատարվել է 30.04.2020).

13. **Edwin G. Schuck** - Concurrent Jurisdiction under the NATO Status of Forces Agreement, Columbia Law Review, Vol. 57, No. 3, 1957, p. 356.

14. **Frederick T. Moore** - Criminal Jurisdiction in Overseas Areas, The Journal of Politics Vol. 21, No. 2 (May, 1959), The University of Chicago Press, p. 280 https://www.jstor.org/stable/2127166?read-now=1&seq=2#page_scan_tab_content (այցելությունը կայքէջ կատարվել է 28.04.2020).

15. Underhill v. Hernandez, 65 F. 577 (Circuit Court of Appeals 2nd Cir. 1895), Amrane v. John (1932) (Egypt, Civil Tribunal of Alexandria), Lozano (Mario Luiz) v Italy, Case No 31171/2008, 24th July 2008, Italy; Supreme Court of Cassation.

ռութային իմունիտետով, ինչը ենթադրում է հյուրընկալող պետության իրավազորությունից բացառություն այն դեպքերում, երբ արարքը կատարվել է պաշտոնեական լիազորությունների շրջանակում¹⁶:

Փաստորեն, ուղարկող պետության առաջնային իրավազորության իրավասություն ունենալու հարցը որոշելու համար անհրաժեշտ է հասկանալ, արդյոք տվյալ իրավիճակում հանցանք կատարած անձը օժտված է գործառութային իմունիտետով, թե ոչ:

Արցակցային իրավազորության դեպքում առաջնային իրավազորության իրավունքի որոշման հարցում լավ օրինակ է ՆԱՏՕ-ի անդամ պետությունների միջև Ռազմական ուժերի կարգավիճակի մասին 1951 թ. համաձայնագիրը (NATO SOFA)¹⁷: Համաձայնագիրը ՆԱՏՕ-ի որևէ անդամ պետության տարածքում տեղակայված մեկ այլ անդամ պետության ռազմական ուժերի կարգավիճակի հետ կապված խնդիրների կարգավորման գլխավոր գործիք է¹⁸: Իրավազորության վերաբերյալ դրույթներն ամրագրված են Համաձայնագրի 7-րդ հոդվածում, որն ընդհանուր առմամբ սահմանում է, որ ուղարկող պետության ռազմական իշխանություններն ունեն բացառիկ քրեական իրավազորություն ռազմական ուժի անդամի կողմից կատարված այն հանցագործության նկատմամբ, որը պատժելի է միայն ուղարկող պետության օրենսդրությամբ, և որի դեպքում պատիժ սահմանված չէ հյուրընկալող պետության օրենսդրությամբ: Նույն կերպ, հյուրընկալող պետությունն ունի բացառիկ իրավազորություն այն հանցագործությունների նկատմամբ, որոնք պատժելի են միայն իր

օրենսդրությամբ: Մնացած բոլոր դեպքերում, երբ արարքը քրեորեն պատժելի է և՛ ուղարկող, և՛ հյուրընկալող պետությունների օրենսդրությամբ, իրավազորությունը մրցակցային է¹⁹:

Ինչ վերաբերում է մրցակցային իրավազորության դեպքում առաջնային իրավազորության իրավունքի որոշման խնդրին, ապա Համաձայնագրի 7-րդ հոդվածն այն կարգավորում է հետևյալ կերպ.

ա) ուղարկող պետության ռազմական իշխանությունները ռազմական ուժի անդամի կամ քաղաքացիական կոմպոնենտի նկատմամբ իրավազորություն իրացնելու առաջնային իրավունք ունեն հետևյալ հանցագործությունների դեպքում՝

բ) բացառապես այդ պետության գույքի կամ անվտանգության դեմ կատարված հանցագործություններ, կամ բացառապես ռազմական ուժի մեկ այլ անդամի, այդ պետության քաղաքացիական կոմպոնենտի կամ մերձավորի անձի կամ գույքի դեմ կատարված հանցագործություններ,

գ) պաշտոնեական պարտականությունների իրականացման ընթացքում կատարված որևէ գործողությունից կամ անգործությունից բխող հանցագործություններ,

դ) ցանկացած այլ հանցագործության դեպքում հյուրընկալող պետության իշխանություններն ունեն իրավազորություն՝ իրացնելու առաջնային իրավունք²⁰:

Ինչպես երևում է՝ նշված հոդվածը նույնպես արտացոլում է օտարերկրյա ռազմական ուժի անձնակազմի անդամների ունեցած գործառութային իմունիտետը, և առաջնային իրավազորություն իրացնելու իրավունքի բաշխման հարցում ուշադրություն հատկացնում են տարածքային իրա-

16. Third report on the immunity of State officials from foreign criminal jurisdiction by Concepción Escobar Hernández, Special Rapporteur, 2 June 2014, Doc. A/CN.4/673.

17. Agreement between the Parties to the North Atlantic Treaty regarding the Status of their Forces, 19 June 1951 https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17265.htm (այցելությունը կայքէջ կատարվել է 30.04.2020).

18. Dieter Fleck, Stuart Addy-The Handbook of the Law of Visiting Forces, Oxford University Press, p. 47.

19. S^{eu} Agreement between the Parties to the North Atlantic Treaty regarding the Status of their Forces, 19 June 1951 https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17265.htm (այցելությունը կայքէջ կատարվել է 05.05.2020).

20. Տե՛ս նույն տեղում:

վազորության և ինունիտետի ինստիտուտների հարաբերակցությանը՝ հյուրընկալող պետության իրավազորությունից բացառում նախատեսելով այն դեպքերում, երբ հանցագործություն կատարած անձն օգտվում է գործառության ինունիտետից:

Հանցագործությունների մյուս խումբը, որի դեպքում նույնպես Համաձայնագիրը նախատեսում է հյուրընկալող պետության իրավազորության բացառում, այն հանցագործություններն են, որոնք կատարվում են զինված ուժի անդամի կողմից նույն զինված ուժի մեջ ընդգրկված անձանց դեմ: Ենթադրվում է, որ առաջնային իրավազորության այս տեսակն էքստրատերիտորիալության ժամանակակից ձևն է, որի արմատները կարելի է գտնել ազգերի հնագույն օրենքների այն սկզբունքներում, որոնց համաձայն՝ օտարերկրյա նավահանգիստներում հյուպատոսներին իրավունք էր տրվում քննելու իրենց պետության քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունները, ինչպես նաև այդ անձանց միջև քաղաքացիական հայցերը²¹:

Համաձայնագիրը հյուրընկալող պետության իրավազորությունից բացառում է նախատեսում նաև այն դեպքում, երբ հանցագործությունը բացառապես վերաբերում է ուղարկող պետության անվտանգությանը կամ գույքին, ինչը կարելի է մեկնաբանել ուղարկող պետության ինքնիշխանության պաշտպանությամբ և ռազմական ուժի՝ բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությամբ:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության համար ավելի արդիական համարվող Գյումրիում տեղակայված

ռուսական ռազմաբազայի դեպքում իրավազորության բաշխման հիմնախնդրին՝ պետք է նշել, որ ռազմաբազայի անձնակազմի նկատմամբ երկու երկրների իրավազորությունների հարաբերակցության հարցը կարգավորվում է 1997 թ. կնքված համաձայնագրով²²:

Համաձայնագրի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներով ընդհանուր առմամբ սահմանվում է, որ ռազմական բազայի անձնակազմի անդամների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված հանցագործությունների նկատմամբ տարածվում է Հայաստանի Հանրապետության իրավազորությունը: Այնուհետև սահմանվում են հետևյալ բացառությունները, որոնց դեպքում ռազմական բազայի անձնակազմի անդամների կողմից կատարված հանցագործության նկատմամբ գործում է Ռուսաստանի Դաշնության իրավազորությունը՝

- ռուսական ռազմական բազայի տեղակայման վայրերում կատարված հանցագործություններ,

- ռուսական ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքի անդամների կամ Ռուսաստանի Դաշնության դեմ կատարված հանցագործություններ,

- զինվորական հանցագործություններ²³:

Այսպիսով, Համաձայնագիրը որևէ կերպ չի անդրադառնում բացառիկ իրավազորության հայեցակարգին, ինչպես նաև չի նշում մրցակցային իրավազորության մասին, այլ պարզապես մատնանշում է այն դեպքերը, երբ տեղի է ունենում Հայաս-

21. **Baxter R. R.**- Jurisdiction over Visiting Forces and The Development of International Law, Proceedings of the American Society of International Law at Its Annual Meeting (1921-1969) Vol. 52, International Law and the Political Process (APRIL 24-26, 1958), p. 176.

22. Соглашение между Российской Федерацией и Республикой Армения по вопросам юрисдикции и взаимной правовой помощи по делам, связанным с нахождением российской военной базы на территории Республики Армения, 1997, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150765> (այցելությունը կայքէջ կատարվել է 05.05.2020).

